«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՎԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2014

ՆԱԽԱԲԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՏՀ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է Համաշխարհային բանկի դրամաշնորհային ծրագրի և ՀՀ Կրթության և գիտության նախարարության Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակի աջակցությամբ: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվում և համակարգվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ը առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած էր 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1)հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային չափանիշներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցն անդրադառնում է ՀՊՏՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանն՝ ըստ պետական հավատարմագրման չափանիշերի ու չափորոշիչների, և գործընկերային գնահատմանը՝ ըստ Որակի ապահովման եվրոպական չափորոշիչների և ուղենիշների:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՆԱԽԱԲԱՆ 2

ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ 12

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 16

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 16

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 20

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 22

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 22

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ 25

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ 30

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ 36

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ 41

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ 46

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 50

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ 54

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ 58

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 61

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ 65

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 66

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ .. 66

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 71

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 74

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 75

ԱՄՓՈՓՈՒՄ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ՀՊՏՀ-ը տնտեսագիտական ոլորտի բազմամյա փորձով պետական մասնագիտացված բուհ է և հավակնում է դառնալ «Հայաստանի ամենամրցունակ, կիրառական գիտելիք և կարողություններ տրամադրող և հետազոտություններ իրականացնող տնտեսագիտական ուղղվածությամբ բարձրագույն ուսումնական հաստատությունը»: ՀՊՏՀ-ն ունի հավակնոտ առաքելություն, որտեղ արժեքներ են հայտարարվում «ակադեմիական ազատությունն ու ինքնավարությունը, ուսումնական միջավայրի նորարարական և ուսանողակենտրոն բնույթը, կրթության կիրառական բնույթը և գիտականությունը, մասնագիտական կազմի բարձր որակը և հետազոտական ներուժը»: Իր գործունեության արդյունքում բուհը ակնկալում է ձևավորել «մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով զինված ու ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ, տնտեսության փոփոխությունները իրականացնող առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայի համար»:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել. կրթության որակի ապահովումը իրականացվել է որակի վերահսկման որոշ մեխանիզմների կիրառման միջոցով: Հավատարմագրման այս գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է՝ կրթական միջավայրի բավարարության, ծրագրերի իրականացման արդյունավետության, հասարակության առջև հաշվետվողականության և վերջերս ներդրված որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի ինքնագնահատման նպատակով:

Համալսարանը արտոնված է ուսուցման եռաստիճան համակարգում իրականացնել տնտեսագիտության և կառավարման ոլորտի մասնագիտությունների 73 կրթական ծրագրեր, որոնցից 27-ը՝ բակալավրի, իսկ 46-ը՝ մագիստրոսի կրթական աստիճաններում: Որոշ ծրագրեր առաջակվում են միայն ՀՊՏՀ-ում: Ըստ շնորհվող որակավորման ակնկալվող ուսումնառության արդյունքներով ձևակերպված շատ քիչ ծրագրեր կան համալսարանում. կարելի է առանձնացնել «Մարքեթինգ» և TEMPUS ծրագրի շրջանակներում փոփոխված «Կրթության կառավարում» ծրագրերը: Բացի մեկ տասնյակից պակաս մագիստրոսական ծրագրերից, որոնք կազմվել են գործատուների մասնակցությամբ, բուհում գործում են ուսումնական պլաններ և առարկայական ծրագրեր, որոնք կազմված են դեռևս 2007-2008թթ. բուհի դասախոսների կողմից մշակված ՀՀ տնտեսագիտական մասնագիտությունների և մասնագիտացումների պետական կրթական չափորոշիչների հիման վրա: Նոր է սկսվել դասընթացների ծրագրերի նկարագրումը կրթական վերջնարդյունքներով (գիտելիք, հմտություն, կարողություն):

---

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Ժամանակակից ծրագրեր ունենալու պահանջը համալսարանը ձգտում է իրականացնել գործատուներին այդ ծրագրերի մշակման պրոցեսում ներգրավելու, TEMPUS-ի շրջանակներում բենչմարքինգ կատարելու և ինքնուրույն աշխատանքների մեջ հետազոտական տարրեր ներմուծելու միջոցով: Համալսարանում իրականացվող հետազոտության արդյունքների դասավանդման պրոցեսում կիրառելը, ուսումնագիտական խմբերի ձևավորումը և «Ամբերդ» հետազոտական կենտրոնի միջոցով մագիստրատուրայի ուսանողներին հետազոտության մեջ ներգրավելը վկայում են դասավանդման և հետազոտության միջև կապի առկայության մասին:

Համալսարանի ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Հիմնականում ուսանողների վարձավճարներից ձևավորվող ֆինանսական ռեսուրսները մեծամասամբ ծախսվում են աշխատավարձի վճարման վրա, իսկ ուսումնական և գիտական ստորաբաժանումները շենքային պայմանների բարելավման, ժամանակակից սարքավորումների, ծրագրային փաթեթների և այլ աջակցության կարիք ունեն: Լավ օրինակ է բուհի կողմից բյուջեի 3,6%-ի տրամադրումը հետազոտական աշխատանքների աշխուժացմանն ու կազմակերպմանը:

Բավարար միջոցներ չեն հատկացվում միջազգային համագործակցության համար, և արտաքին ֆինանսավորման ընդհատման պարագայում կարող է վտանգվել ոլորտի կայունությունը, ինչպես նաև դասախոսական կազմի ներկայիս ոչ բարձր շարժունությունը:

Համալսարանում ներկայումս աշխատում է արհեստավարժ և դասավանդման մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որը նպաստում է կրթական ծրագրերի հիմնական նպատակների իրականացմանը: Դասախոսների միջին տարիքը բարձր է: Ուսանող/դասախոս հարաբերակցության տեսակետից իրավիճակը բարվոք է. 14.3՝ Երևանում, 14՝ Գյումրու մասնաճյուղում և 11.3՝ Եղեգնաձորի մասնաճյուղում: Համեմատաբար բարձր աշխատավարձը ինչ-որ չափով ապահովում է անհրաժեշտ մոտիվացիա, սակայն երիտասարդ և որակյալ մասնագետների ներգրավումն պրոցեսը դանդաղ է ընթանում, և այս գործոնը ոչ շատ հեռու ապագայում համալսարանին կարող է ռիսկի տակ դնել: Լիովին չեն օգտագործվում դասախոսական կազմի վերապատրաստման համալսարանում առկա հնարավորությունները: Պրոֆեսորադասախոսական կազմը զբաղվում է հետազոտական աշխատանքներով, սակայն քիչ են նրանց կողմից իրականացվող միջազգային մակարդակի աշխատանքները: Դասախոսական կազմի փոքր մասը ունի միջազգային փորձառություն արտասահմանյան կառույցների հետ համալսարանի իրականացրած ծրագրերի արդյունքում:

Համալսարանում մտահոգված են ուսանողների ուսումնառությամբ, միջավայրի ուսանողակենտրոնության և տրամադրվող կրթության վերաբերյալ ուսանողների տեսակետով: ՈՒսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության գործող մեխանիզմները նեկայումս ապահովում են դիմորդների կայուն հոսք: Ուսանողները նշեցին մի քանի բարելավումներ (դասավանդման նոր մեթոդներ երիտասարդ դասախոսների մոտ, ենթակառուցվածքներ և գրադարանային ռեսուրսներ): Նրանք արժևորում են համալսարանի կողմից առաջարկվող գործնական կրթությունը և օժանդակությունը, սակայն գտնում են, որ ոչ միշտ են բավարարվում իրենց կարիքները՝ բուհի կառավարմանը փաստացի մասնակցելու, պրակտիկաների ժամկետները ավելացնելու և ակտիվացնելու, գիտական հետազոտություններ իրականացնելու և կարիերայի հետագա զարգացման հնարավորություններ տրամադրելու տեսանկյունից:

Համալսարանի կառավարման համակարգը ծառայում է իր հիմնական նպատակին, չնայած առանձին կառույցների ու դրանց ղեկավարների գործառույթները մասամբ տրամախաչվում են: Ներկայումս համակարգը ներքին և արտաքին նոր մարտահրավերների առջև է կանգնած, որոնք պահանջում են ավելի հիմնավորված, ուսանողակենտրոն մոտեցումներով, ավելի հաշվետվողական որոշումների կայացման գործընթացներ, լրացուցիչ ռեսուրսներ և լավ տեղեկատվական համակարգ: Համալսարանը կառուցվածքային փոփոխությունների իրականացման գործընթացում է, և նոր համակարգի արդյունավետության մասին կարելի է դատել որակի կառավարման սկզբունքով իրականացված գործընթացների մեկ շրջափուլի արդյունքների վերլուծությունից հետո միայն:

Համալսարանի տարբեր մակարդակներում հիմնականում կարևորում են կրթության որակը և որակի ապահովումը, չնայած ներկայումս դա ավելի շուտ պայմանավորված է արտաքին պահանջներով: Տրամադրվել են մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ, մշակված են մի շարք հիմնական փաստաթղթեր գործընթացների կազմակերպման համար: Որակի ապահովման ներքին համակարգը կայացման փուլում է, կազմակերպվում են որոշակի գործընթացներ, սակայն թույլ է շահակիցների մասնակցությունը, և հիմնական մեխանիզմները դեռևս պետք է մշակվեն:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) ՀՊՏՀ հստակ դիրքավորումը մասնագիտական կրթության ոլորտում և տրամադրվող ծառայությունների պահանջարկը դիմորդների կողմից,
2) Ռազմավարական գերակայությունների մասին տեղեկացվածության բարձր մակարդակ,
3) Ներքին շահակիցների հնարավորությունը մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացման գործընթացներում,
4) Բուհ-գործատու սերտ համագործակցության փորձը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստման գործընթացում,
5) Պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակների գոհացուցիչ մակարդակ և գործող առաջատար մասնագետների մասնակցությունը դասավանդման պրոցեսին,
6) Հետազոտական գործընթացների ֆինանսավորում համալսարանի բյուջեից,
7) Շարունակական հոգածություն համալսարանի ռեսուրսների և տեխնիկական հագեցվածության բարելավման ուղղությամբ,
8) Որակի ապահովման քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը,
9) Միջազգային կառույցներին անդամակցության և միջազգային ծրագրերում մասնակցության աստիճանի ակտիվացման միտվածություն,
10) Մարքեթինգի և կարիերայի կենտրոնի առկայություն,
11) Հասարակության հետ հաղորդակցվելու միջոցների առկայություն:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Համալսարանի առաքելության հավակնոտությունը և ռազմավարական ծրագրի բացակայությունը,

2) Համալսարանում ընթացող գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության ցածր մակարդակը,
3) Ուսումնառության վերջնարդյունքներով սահմանված և հաստատված մասնագիտական կրթական ծրագրերի քիչ քանակությունը, բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերում դասընթացների կրկնությունների առկայությունը, գնահատման համակարգի անկատարությունը,
4) Ուսանողների անձնական և կրթական կարիքների բացահայտման համակարգի բացակայությունը, ուսանողների պրակտիկաների իրականացման ցածր արդյունավետությունը,
5) Կրթական և հետազոտական գործընթացներում միջառարկայական և միջամբիոնային թույլ կապը,
6) ՀՊՏՀ երևանյան համալիրի գործընթացներում համալսարանի մասնաճյուղերի ցածր ներգրավվածությունը,
7) Պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացման ցածր տեմպը, համակարգված վերապատրաստումների բացակայությունը,
8) Ուսումնական ձեռնարկների, դասագրքերի և նյութատեխնիկական բազայի սղությունը, դասավանդման և ուսումնառության ժամանակակից մեթոդների և տեխնիկական հնարավորությունների ներդրման ցածր տեմպը,
9) Ժամանակակից տեխնիկայի և ծրագրային ապահովվածության պակասը, տվյալների բազաների անհասանելիությունը դասախոսական և ուսանողական անձնակազմի համար, շենքային սուղ պայմանները, տեխնիկապես հագեցված, կահավորված լսարանների քանակը քիչ քանակը,
10) Հետազոտական աշխատանքներում ուսանողների և դասախոսների ցածր ներգրավվածությունը, միջազգային մակարդակի հետազոտությունների քիչ քանակությունը,
11) Կառավարման գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի սահմանափակ կիրառումը,
12) Համալսարանում ուսանողակենտրոն կրթական համակարգի կայացման, միջազգայնացման և շարժունության գործընթացների ցածր մակարդակ:

Հիմնական խորհրդատվություններ

Առաքելություն և նպատակներ

1) Վերանայել ՀՊՏՀ առաքելությունը՝ տալով ավելի հստակ և չափելի ձևակերպումներ ձեռք բերվող արդյունքների ու շնորհվող որակավորումների առումով, ներառնել որակի ապահովման և միջազգայնացման խնդիրները,
2) Ամրագրել ռազմավարական ծրագրի մշակման և առաքելության վերանայման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների կարիքների բացահայտման, վերլուծման և իրականացման մեխանիզմներ և ընթացակարգեր,
3) Մշակել ռազմավարական ծրագրով նախանշված նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների գնահատման շրջանակ և մոդել, ճշգրտել ակնկալվող արդյունքները և սահմանել առաջընթացի կողմնորոշիչ ցուցիչներ:

Կառավարում և վարչարարություն

4) Հստակեցնել ինչպես ՀՊՏՀ երևանյան համալիրի, այնպես էլ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի կառավարման հիերարխիկ կառուցվածքները, սահմանել էթիկայի կանոններ, հստակեցնել ՀՊՏՀ ստորաբաժանումներում պահվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, ամրագրել համալսարանի բոլոր աշխատակիցների գործառույթները,
5) Մշակել համալսարանի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրության համար անհրաժեշտ հավաստի տվյալների հավաքագրման ընթացակարգեր, վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
6) Կազմել ՌԾ-ի իրականացման ժամանակացույց՝ նշելով նաև պատասխանատուներ, մշակել կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների իրականացման ծրագրեր, որոնց իրականացումը կհանգեցնի ՌԾ-ի ժամանակացույցի կատարմանը, ինչպես նաև մշակել կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանների իրականացման, մշտադիտարկման և գնահատման մեխանիզմներ,
7) Մշակել կանոնակարգեր և մեխանիզմներ համալսարանի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման սկզբունքով իրականացնելու համար,
8) Մշակել համալսարանում գործող ՄԿԾ-երի և իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը գնահատող մեխանիզմներ,
9) Մշակել կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Մասնագիտության կրթական ծրագրեր

10) Վերանայել կրթական ծրագրերն ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների՝ միաժամանակ առարկայական ծրագրերի ելքային արդյունքները համահունչ դարձնելով ՄԿԾ-երի ուսումնառության վերջնարդյունքներին,
11) Մշակել և կիրառել ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը կնպաստի ուսանողակենտրոն ուսուցման զարգացմանը,
12) Մշակել ըստ ուսումնառության արդյունքների ուսանողների գնահատման քաղաքականություն և ակադեմիական ազնվության ապահովման մեխանիզմներ,
13) Իրականացնել նպատակային բենչմարկինգ, համալսարանի ՄԿԾ-երը բովանդակային առումով դարձնել համահունչ նմանատիպ այլ կրթական ծրագրերի հետ, քայլեր ձեռնարկել գոյություն ունեցող պայմանագրերի սահմաններում ուսանողների և դասավանդողների կազմի շարժունությանը մեծացնելու ուղղությամբ,
14) Արմատավորել ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, նրանց իրականացման արդյունավետության գնահատման և բարելավման գործընթացներ համալսարանում:

ՈՒսանողներ

15) Մշակել դիմորդների մասնագիտական կողմնորոշման տարվող աշխատանքների արդյունավետության գնահատման մեխանիզմներ,
16) Կազմակերպել ուսանողների կրթական և անձնական կարիքների վերհանման գործողություններ, որոնք ուղղված են մատուցվող կրթական ծառայությունների որակի բարելավմանը և համալսարանական միջավայրին հարմարվելուն,
17) Կատարելագործել ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստող լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու գործընթացները և մշակել դրանց գնահատման մեխանիզմները,
18) Մշակել ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց: Ընդ որում կանոնակարգումն անհրաժեշտ է իրականացնել հասցեավորված յուրաքանչյուր ստորաբաժանման և վարչական կազմի համար՝ դեկանատներ, ամբիոններ, պրոռեկտորներ, ռեկտոր,
19) Կարիերայի կենտրոնի գործունեության շրջանակը ընդլայնել՝ այն նպատակաուղղել աշխատաշուկայի կարիքների հետազոտմանը, շրջանավարտների զբաղվածության ուսումնասիրությանը և նրանց հետ կայուն հետադարձ կապի ապահովմանը,
20) Մշակել և իրականացնել ուսանողներին գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու այնպիսի մեխանիզմներ, որոնք հնարավորություն կտան ընդլայնելու հետազոտություններում ուսանողների ընդգրկվածությունը՝ նպաստելով ուսանողների գիտելիքների, հետազոտական կարողությունների և հմտությունների ձևավորմանը,
21) Նպաստել ՈՒԽ-ի գործունեության ակտիվացմանն ու դրա ինքնավարության կայացմանը՝ ուսանողների ավելի լայն շրջանակի ընդգրկմամբ և մասնակցությամբ (առանձնակի զորակցելով ՀՊՏՀ մասնաճյուղերին),
22) Կանոնակարգել համալսարանում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման գործընթացները:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

23) Մշակել համալսարանի յուրաքանչյուր կրթական ծրագրով ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ,
24) Մշակել դասախոսական անձնակազմի պարբերաբար գնահատման քաղաքականություն, սահմանել դրա մեխանիզմները և մշակել գործիքներ՝ դրանք իրականացնելու նպատակով,
25) Մշակել դասախոսների կարիքների ներքին և արտաքին գնահատման համակարգ, դրա կիրարկման մեխանիզմներ և դրանց հիման վրա իրականացնել պարբերական գնահատումներ ու դասախոսների կատարելագործման նպատակաուղղված աշխատանքներ,
26) Քայլեր ձեռք առնել դասավանդման պրոցեսում երիտասարդ կադրերի ներգրավվածության ավելացման, նրանց խրախուսման և փորձի փոխանակման

միջոցով պրոֆեսորադասախոսական անձնակազմի կայունության ապահովվածությանը նպաստելու համար, մշակել վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակն ապահովող հստակ կառուցակարգեր և գործիքներ:

Հետազոտություն և զարգացում

27) Հստակեցնել հետազոտական ոլորտում համալսարանի հետաքրքրությունները, հավակնությունները և գործունեության կոնկրետ ուղղությունները,
28) Մշակել հետազոտությունների ոլորտում ԲՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները արտահայտող երկարաժամկետ ռազմավարություն,
29) Մշակել եղանակներ բուհի հետազոտական ծրագրերի համար արտաքին ֆինանսական աղբյուրներ և օժանդակություն ապահովելու համար,
30) Օժանդակել գիտության միջազգայնացման գործընթացներին և աստիճանաբար մեծացնել դրա համար նախատեսվող ֆինանսական միջոցները,
31) Վերանայել մագիստրոսական կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներգրավմանն ուղղված ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

32) Սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար բավարար ռեսուրսների ապահովման նպատակով ստեղծել կարիքները բացահայտող հստակ մեխանիզմներ,
33) Մշակել այնպիսի ֆինանսական քաղաքականություն, որն ուղղված կլինի ներդրումային միջավայրի ստեղծմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի ՄԿԾ-երի նպատակների իրականացմանը և անհրաժեշտ միջոցներով ու սարքավորումներով համալսարանի ապահովմանը,
34) Մշակել տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու միասնական քաղաքականություն,
35) Քայլեր ձեռնարկել հատուկ կարիք ունեցող ուսանողների համար ապահով և անվտանգ միջավայր ստեղծելու ուղղությամբ,
36) Մշակել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Հասարակական պատասխանատվություն

37) Մշակել արտաքին շահակիցներին հաշվետվողականության հստակ կարգ և մեխանիզմներ՝ սահմանելով գնահատման ցուցիչները,
38) Մշակել հասարակության հետ կապի զարգացմանը, բուհի ռազմավարական ծրագրի իրականացմանը և բուհում գործընթացների բարելավմանը նպաստող հետադարձ կապի մեխանիզմներ,
39) Ստեղծել էթիկայի հանձնաժողով և մշակել քաղաքականություն (և համապատասխան ընթացակարգեր) նպատակ ունենալով կանխել ՀՊՏՀ ուսանողների և աշխատակիցների ոչ էթիկական վարքը: Կրթության և

հետազոտությունների պատշաճ որակը, ռեսուրսների արդյունավետ օգտագործումն ապահովելու համար օգտակար կլիներ մշակել «զրոյական հանդուրժողականության» համապարփակ մի ծրագիր՝ ուղղված հնարավոր կոռուպցիայի, գրագողության, հովանավորչության և այլ՝ ակադեմիական աշխարհում անընդունելի երևույթների կանխմանը,

40) Բուհում գործող շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը պետք է կանոնակարգի, պլանավորի և ակտիվացնի իր աշխատանքները՝ ձևավորելով առաջնահերթություններ, որոնք բխում են հասարակության կարիքներից և բուհի ռազմավարությունից,

41) Մշակել տեղեկատվության զետեղման քաղաքականություն/ռազմավարություն, ՀՊՏՀ պաշտոնական կայք-էջում տեղադրել նաև տարբեր ստորաբաժանումների հաշվետվությունները և դրանց հիման վրա իրականացված միջոցառումների մասին տեղեկատվությունը,

42) Մշակել ցկյանս կրթության հայեցակարգից բխող միջոցառումների պլան: Համագործակցել Զբաղվածության կենտրոնների հետ, հատկապես մասնաճյուղերում, գործազուրկների վերապատրաստման առումով:

Արտաքին կապեր և միջազգայնացում

43) Մշակել փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելուն միտված քաղաքականություն ու ընթացակարգեր,

44) Ստեղծել համալսարանի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքի գործառույթների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ միտված կառույցի կարիքների վերհանմանը և աշխատանքի բարելավմանը,

45) Մշակել տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ համագործակցության ավելի ակտիվ և դրական քաղաքականություն՝ հաշվի առնելով աճող մրցակցությունը և ապահովել ավելի ակտիվ գովազդ,

46) Համալսարանի հնարավորությունները նպատակաուղղել ներքին շահակիցների օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը, ինչը կնպաստի համալսարանի միջազգայնացման արդյունավետության բարձրացմանը:

Որակի ներքին ապահովման համակարգ

47) Ստեղծել մեխանիզմներ, որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով համալսարանի տրամադրած մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարվածությունը պարզաբանելու համար,

48) Մշակել որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության գնահատման մեխանիզմներ,

49) Կիրառել որակի ապահովման մեխանիզմներ մասնագիտության կրթական ծրագրերի իրականացման գործընթացների նկատմամբ,

50) Մշակել կրթության որակի ապահովմանն ուղղված կառուցվածքային և բովանդակային փոփոխությունների արդյունավետությունը բացահայտող մեխանիզմներ, դրանց հիման վրա իրականացնել պարբերական գնահատումներ,

51) Առանձնացնելել այնպիսի տեղեկատվության քանակ, գործարկել տեղեկատվության հավաքման այնպիսի մեխանիզմներ, որոնք ձևավորեն անհրաժեշտ հիմքեր որակի ապահովման ներքին և արտաքին գնահատումների համար,
52) Որակի ապահովման ներքին համակարգի կողմից համալսարանի գործունեության թափանցիկության ավելացումը նպատակաուղղել որակի մշակույթի տարրերի ձևավորմանը:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ

Դիտարկումներ: Ընդհանուր տպավորությունն այն է, որ ՀՊՏՀ-ն ունի լավ գիտական ներուժ, բայց այն լիարժեք չի օգտագործվում: Ուստի շատ սենյակներ բարելավման կարիք ունեն, և ես կարծում եմ, որ դա համալսարանի կառավարման կարևորագույն հանձնարարություն է: Փորձագիտական խումբը հանդիպել է շատ շահակիցների և ականատես է եղել նվիրվածության, նպատակասլացության և խանդավառության՝ հատկապես ուսանողների շրջանում: Բոլոր շահակիցների խմբերը հայտնել են բարձր բավարարվածություն, նույնիսկ, եթե նրանք չեն բացառել մի շարք թերությունները: Նման սոցիալական կապիտալը, մեր կարծիքով, ՀՊՏՀ-ի համար կարևոր ներդրում է և պետք է լիովին օգտագործվի: Դասախոսական կազմը և ուսանողները հատկապես արժեքավոր ներդրումներ են համալսարանի համար: Բացի այդ, խումբը գնահատում է ՀՊՏՀ–ի կառավարման բոլոր ջանքերը, որոնք ուղղվել են, որպեսզի ՀՊՏՀ-ն դարձնեն բարձր հեղինակությամբ ժամանակակից հետազոտական համալսարան Հայաստանում և տարածաշրջանում:

Ի՞նչն ունի բարելավման կարիք: Հիմնական մարտահրավերներից մեկը, որը այժմ ՀՊՏՀ–ի կառավարումը պետք է հաղթահարի, պրոբլեմների աղբյուրների ճիշտ որոշումն է: Կան շատ լավ մտադրություններ, հայտարարագրեր, ծրագրեր և գործիքներ, բայց նրանց իրականացումը բավական դանդաղ է ընթանում: Փորձագետների խմբի կարծիքով շատ են հղումներ տրվում արտաքին գործոններին (ժողովրդագրությանը, նախարարության որոշումներին, մտածելակերպին ու նախորդ քաղաքական համակարգի ժառանգությանը և այլն), փաստացի անտեսելով ներքին գործոնները: Համալսարանի գիտական հանրությունը պետք է ավելի շատ ժամանակ տրամադրի ՀՊՏՀ-ի վերակառուցման դանդաղ առաջընթացի ներքին խոչընդոտների ուսումնասիրությանը:

Ներկա կառավարման հիմնական խնդիրն է ստեղծել այնպիսի միջավայր, որը խթանում է ուշադրությունը համալսարանական քաղաքականությունների մշակման և իրականացման ու շահակիցների պարտավորությունների նկատմամբ: Հիմնական նախապայմանն է ավելի լավ հաղորդակցությունը և համագործակցությունը բոլոր շահակիցների հետ:

Հավասարապես կարևոր է խթանել ժամանակակից դասավանդման և ուսուցման համակարգի առաջընթացը, մեծացնել հետազոտությունների ծավալը և խորացնել միջազգայնացման մակարդակը: Հնարավոր չէ հասնել այդ նպատակներին առանց ավելի վստահելի կադրային քաղաքականություն վարելու՝ խրախուսելու ժամանակակից դասավանդման մեթոդներ կիրառող և գիտական հետազոտություններ իրականացնող

դասախոսներին, և աշխատանքից ազատելու նրանց, ովքեր չունեն համապատասխան հմտություններ և կարողություններ:

Հիմնական մարտահրավերներից մեկը, որի առջև համալսարանը այժմ կանգնած է՝ հավասարակշռության կառավարումն է որակի ներքին ապահովման համակարգի ներդրման պրոբլեմների և դրա երկարաժամկետ առավելություններից օգտվելու հնարավորության միջև: Դասախոսները ու ուսանողները պետք է գիտակցեն, որ արդյունավետ որակի ապահովման համակարգը թույլ կտա ՀՊՏՀ շրջանավարտների դիպլոմներին ստանալ միջազգային ճանաչում: Որակի ապահովման ընդհանուր ռազմավարության մեջ բազմաթիվ գործնական և ոչ ֆորմալ քաղաքականություններ պետք է ինտեգրված լինեն: Համալսարանի որակի ապահովման համակարգի մեջ շահակիցների մշտական ներգրավումը խիստ անհրաժեշտ է: Տեղեկատվությունը և լավ հաղորդակցությունը կամրապնդեն հնարավորությունը ստանալ ավելի ամբողջական պատկերացում որակի ապահովման համակարգի արդյունքների վերաբերյալ:

Խորհրդատվություն

1) ՄՈՒՀ-ը պետք է վերանայի իր առաքելությունը՝ ներառելով որակի ապահովումը և միջազգայնացումը որպես կարևորություններ: Պետք է ավարտուն տեսքի բերել արտաքին ռազմավարական շահակիցների ցանկը և մշակել նրանց կարիքներն ուսումնասիրելու ընթացակարգեր, մեթոդական հիմք մշակել ռազմավարական նպատակների իրականացումը գնահատելու համար:

2) Համալսարանի կառավարման մեջ ուսանողների ներգրավվածությունը հարցը պետք է անհապաղ դառնա համալսարանի կառավարիչների և ուսանողական կազմակերպությունների քննարկման խնդիրը: Անհրաժեշտ է մշակել մի մոդել՝ գնահատելու ներքին և արտաքին գործոնները, որոնք ազդում են համալսարանի ընթացիկ գործունեության և երկարաժամկետ զարգացման վրա, ինչպես նաև մշակել համալսարանի զարգացման երկարաժամկետ ռազմավարություն: Պետք է մշակել տեղեկատվական քաղաքականության համապարփակ ծրագիր, զարգացնել կառավարման տեղեկատվական համակարգերը, ներդնել ժամանակակից համակարգ կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքման, մշակման և վերլուծության համար:

3) Անհրաժեշտ է վերանայել առկա ուսուցման մեթոդները ուսանողների ուսումնական կարիքների տեսանկյունից և պրակտիկայի կազմակերպման համակարգը՝ համալսարանի և բիզնեսի ներկայացուցիչների ավելի ակտիվ ներգրավմամբ: Պետք է ավելացնել ուսումնական ծրագրերի ճկունության աստիճանը, բոլոր կրթական ծրագրերի համար նախագծել մշակման և գնահատման ժամանակակից համակարգ, մեթոդական հանձնաժողովներում ներգրավել բիզնես-սեկտորի գործող մասնագետների:

4) ՀՊՏՀ պետք է նորից քննարկի մագիստրատուրայի ուսանողների ընդունելության համակարգը՝ ապահովելով ուսումնառության հավասար պայմաններ բոլոր թեկնածուների համար: Համագործակցելով ուսանողների և նրանց ներկայացուցիչների

հետ, պետք է մշակվի ուսանողների կարիքների վերհանման և բավարարման համակարգ: Վերանայել այն ուսանողներին աջակցելու պայմանը, որոնք ամենացածր ուսումնառության վերջնարդյունքներին են հասել: Նոր համակարգի ձևակերպում դրդելով լավագույն ուսանողներին զարգացնել իրենց սեփական գիտական ստեղծագործական միտքը: Խրախուսել այն դասախոսներին, ովքեր ուսանողներին ներգրավում են հետազոտության պրոցեսում: ՀՊՏՀ-ն պետք է ձևավորի ուսանողների իրավունքների պաշտպանության գործուն համապարփակ համակարգ, որը չի բավարարվում դեպքից-դեպք առաջացող հարցերին անդրադարձով: ՈՒսանողական խորհրդը պետք է վերանայի իր դերը ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերում: Ներդնել մի դասընթաց մտավոր սեփականության իրավունքների վերաբերյալ:

5) Անհրաժեշտ է վերանայել կադրային քաղաքականությունը և ներդնել դասախոսների ընտրության ավելի խիստ մեխանիզմ: ՀՊՏՀ-ն Եվրոպական համալսարանների օրինակով կարող է իրականացնել լավագույն փորձի տարածման քաղաքականություն, լավագույն դասախոսների խրախուսում և այլն: Արտասահմանյան համալսարանների հետ համագործակցող դասախոսները կարող են կազմակերպել մեթոդական և մանկավարժական վերապատրաստումներ: Անհրաժեշտ է ներդնել հարցում կառավարման և տեխնիկական սպասարկման աշխատակիցների ծառայությունների որակի վերաբերյալ:

6) Անհրաժեշտ է բազմազանեցնել հետազոտությունների ֆինանսավորման աղբյուրները: Ներդնել հետազոտական գործունեության մոտիվացման ավելի արդյունավետ համակարգ: Ռազմավարական գործողությունների պլանները պետք է վերանայվեն այնպես, որ ավելանա ազգային և արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող հետազոտական ծրագրերի քանակը: Դասախոսական կազմի և ստորաբաժանումների գնահատման և ֆինանսական միջոցների տրամադրման չափանիշը պետք է լինի հետազոտական գործունեության մեջ ներգրավվածությունը, որը հիմնավորված է ստացած դրամաշնորհների և գիտական հրատարակությունների ձևով: Նպաստել գիտական համագործակցությանը օտարերկրյա համալսարանների հետ և ներդրումներ կատարել երիտասարդ գիտաշխատողների արտերկրում գիտական պրակտիկա անցկացման նպատակով: ՀՊՏՀ ղեկավարությունը պետք է շտապ միջոցներ ձեռք առնի կամ նույնիսկ որպես պարտադիր պահանջ սահմանի գիտական աշխատանքների բնագրերի ուսումնասիրությունը գոնե ավագ կուրսերում և գիտական ղեկավարների սեմինարների համար: Երկրորդ խնդիրն է մագիստրոսական թեզերի մեթոդաբանության բարելավումը:

7) Թարմացնել հետազոտական և ուսումնական ենթակառուցվածքները, ամենակարևորը գնել օրինական համակրգչային ծրագրային փաթեթներ: Եկամուտների հոսքերի դիվերսիֆիկացիան և ֆինանսերի վերաբաշխումը, որը պետք է ուղղված լինի նվազեցնելու աշխատավարձի ծախսերը և ավելացնելու հետազոտությունները ծախսերը: Մշակել բազմատարբերակ նախագիծ ծրագրերի ֆինանսավորման համար: Մշակել ուսումնական և հետազոտական ենթակառուցվածքների գնահատման

արդյունավետ համակարգ, պատրաստել բարելավման պլան: Նյութական ռեսուրսները անհրաժեշտ է համապատասխանեցնել ուսանողների կարիքներին, հատկապես հաշմանդամ ուսանողների տեսակետից: Ներգրավել վարչական և տեխնիկական անձնակազմը ենթակառուցվածքների որակի գնահատման գործընթացներում:

8) Ստեղծել էթիկայի հանձնաժողով և մշակել քաղաքականություն (և համապատասխան ընթացակարգեր) կանխելու ուսանողների և ՀՊՏՀ աշխատակիցների ոչ էթիկական վարքը:

9) Բացահայտել արգելքները, որոնք խոչընդոտում են միջազգայնացմանը, ինչպես նաև հնարավոր արագ մշակել ՀՊՏՀ-ի միջազգային շուկայում գործունեության ընդլայնման պլանավորման և իրականացման գործողությունների ծրագիր: Մշակել ենթակառուցվածքների ձևավորման ծրագիր՝ նախատեսված միջազգային համագործակցության համար: Հաշվի առնելով աճող մրցակցությունը՝ անհրաժեշտություն կա կիրառել ավելի ակտիվ և դրական քաղաքականություն, ավելի ընդլայնված համագործակցություն և ավելի ակտիվ գովազդ ապահովել: Կարևորել օտար լեզվի իմացության կադրերի ընտրության եւ առաջխաղացման քաղաքականության մեջ: Հնարավորություն ապահովել դասախոսներին ձեռք բերել օտար լեզվի իմացության միջազգայնորեն ճանաչված սերտիֆիկատներ:

10) Խումբը ենթադրում է, որ համալսարանը գիտակցում է, թե ինչ է կրթության որակը և ինչ ցուցիչներ են արտացոլում լավ որակը: Դրական քայլ է որակյալ աշխատանքի նվազագույն պահանջների ներկայացումը դեկաններին, ամբիոնների վարիչներին և ծրագրի պատասխանատուներին, որոնցից յուրաքանչյուրը իր մակարդակում հաշվետու է որակի ապահովման և բարելավման համար: Որակի կատարելագործման նպատակով ներքին համակարգում որոշակի ներդրումներ պետք է կատարվեն: Ավանդական և բավականին անարդյունավետ որակի ապահովման համակարգի պահպանության վրա կատարվող ծախսերը պետք է տեղափոխվեն նոր համակարգի իրականացման համատեքստ: Մշակել տեղեկատվության համապարփակ համակարգ որակի ներքին ապահովման համակարգի և դրա արդյունքների մասին:

18.07.2014

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն **Համակարգողի ստորագրություն**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ՀՊՏՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից.

1. Պրոֆեսոր **Արա Ամիրյան**, տեխ.գիտ.դոկտոր, ամբիոնի վարիչ, Հայաստանի ազգային ագրարային համալսարան, Գրաֆիկայի և ՄՆՀ ամբիոն, Հայաստան, խմբի ղեկավար
2. Պրոֆեսոր **Մստիսլավ Սոխա**, տնտեսագիտության դոկտոր, Վարշավայի համալսարանի պրոֆեսոր, Լեհաստանի բարձրագույն կրթության հավատարմագրման պետական կոմիտեի փոխնախագահ, Լեհաստան, անդամ
3. **Հեղինե Մանասյան**, տնտեսագիտության դոկտոր, տնօրեն, Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն, Հայաստան, անդամ
4. **Անգին Մարտիրոսյան**, տեխ.գիտ.թեկնածու, բաժնի պետ, Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան, կրթական բարեփոխումների ապահովման բաժին, Հայաստան, անդամ
5. **Սերգեյ Քոչարյան,** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ուսանող, Ագրոբիզնեսի կազմակերպման և կառավարման դեպարտամենտ, Հայաստան, անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է համալսարանի հետ:
Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է Անուշավան Մակարյանը:
Թարգմանությունը կատարել է Մարիաննա Սիմոնյանը:
Արձանագրությունները կազմել է Սրբուհի Ջանջուղազյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները և քարտուղարությունը ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ՀՊՏՀ-ը դիմել է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 2013թ. հունիսի 19-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները, կից փաստաթղթերը և համալսարանի կողմից լրացված ՈԱԱԿ էլեկտրոնային հարցաշարը:

2013թ. հուլիսի 1-ին ԲՈՒՀ-ի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա ստորագրվել է եռակողմ համաձայնագիր ՈԱԱԿ-ի, Կրթական ծրագրերի կենտրոնի (ՀՀ ԿԳՆ ՏԻԳ) և ՀՊՏՀ-ի միջև:

Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործողությունների ժամանակացույցը:

Նախապատրաստական փուլ

ՀՊՏՀ-ի ռեկտորի հրամանով ձևավորված ինքնավերլուծություն իրականացնող խումբը իրականացրել է ինքնագնահատում 2013թ. հունիս ամսից մինչև 2013թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում:

Ինքնավերլուծության նախնական տարբերակը և հավելվածների փաթեթը ներկայացվել են ՈԱԱԿ 2013թ. դեկտեմբերի 13-ին: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ տեխնիկական առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՈԱԱԿ ձևաչափի հետ մի շարք էական անհամապատասխանությունների առկայության պատճառով այն վերադարձվել է բուհին և տրվել մեկ ամիս ժամանակ՝ թերությունները վերացնելու համար:

Ինքնավերլուծության զեկույցի անգլերեն և հայերեն տարբերակները և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը ՈԱԱԿ-ի կողմից ընդունվել են 2014թ. հունվարի 30-ին՝ հավատարմագրման գործընթացի համակարգողի դրական կարծիքը ստանալուց հետո:

2014թ. փետրվարի 13-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը հաստատվել է ՈԱԱԿ տնօրենի հրամանով 2014թ. փետրվարի 12-ին: Գնահատումն իրականացվել է 2014թ. փետրվարի 14-ից մինչև 2014թ. ապրիլի 22-ն ընկած ժամանակահատվածում: Այդ ժամանակամիջոցում փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ, շաբաթը մեկ անգամ պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետի նախնական գնահատման տեքստը թարգմանվել է և տրամադրվել խմբի անդամներին: Նրա մոտեցումները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում: Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա հարցերը և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա հարցերի և խնդիրների հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն, այցելություններ հաստատության Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղեր, բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Նախնական այց

2014թ. ապրիլի 23-ին համակարգողը ՈԱԱԿ-ի տնօրենի և փորձագիտական խմբի անդամների հետ այցելել են համալսարան՝ վերջնականացնելու այցի ժամանակացույցը[2]:

Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Համալսարանին ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները: Այցի ընթացքում քննարկվել են նաև այլ կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության հարցեր:

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2014թ. մայիսի 5-8 և 12-14-ն ընկած ժամանակահատվածներում:

Այցին նախորդող օրը փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել և վերջնականացրել դուրս բերված

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ (1) համապատասխանում է չափանիշին, (2) չի համապատասխանում չափանիշին:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ ներկայացված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ՀՊՏՀ-ի հետ քննարկումներ սկսելու համար: Այնուհետև, զեկույցի որոշ հատվածներ բավականաչափ հստակ չէին, և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին:

Փորձագիտական խումբն այցելել է ՀՊՏՀ երևանյան կրթահամալիր 2014թ. մայիսի 5-8-ը:

Այցը մեկնարկել և ավարտվել է համալսարանի ռեկտորի հետ հանդիպումներով: Հանդիպումներն անցկացվել են ֆակուլտետների դեկանների, ամբիոնի վարիչների, ինքնավերլուծություն իրականացնած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների հետ: Բուհի կառավարման խորհրդի ներկայացուցիչների և գիտական խորհրդի ներկայացուցիչների հետ պլանավորված հանդիպումները միավորվեցին՝ բուհի ղեկավարության համար կառավարման խորհրդի արտաքին անդամների անհասանելիության պատճառով: Փորձագիտական խումբը հանդիպման մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով՝ բացառությամբ ՈԱ կենտրոնի աշխատակիցներից, որը ներկայացել էր ողջ անձնակազմով: Ժամանակացույցով նախատեսված բաց հանդիպմանը մասնակցել են համալսարանի երեք աշխատակիցներ:

Փորձագիտական խումբն իրականացրել է այցեր Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղեր 2014թ. մայիսի 12-14-ը:

Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության հավատարմագրման չափանիշների և չափորոշիչների պահանջների բավարարման վերաբերյալ:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների բաց քննարկումները. հատկապես ուսանողների հետ հանդիպումները շատ կառուցողական էին:

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խումբը և համակարգողը պատրաստել են հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն արձագանքել են զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի փաստերի,

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ
[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

դատողությունների և գնահատականի վերաբերյալ: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի ամփոփման ժամանակ: Արտասահմանցի փորձագետի եզրակացությունը թարգմանվել և տրվել է փորձագիտական խմբի բոլոր անդամներին: Նրա կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառման պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Փորձագիտական զեկույցը ներկայացնում է հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է համալսարան 2014թ. հունիսի 20-ին:

Զեկույցը ներառում է և՛ համալսարանի հավատարմագրման գործընթացի, և՛ գործընկերային գնահատման արդյունքները միջազգային չափանիշների համաձայն:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն ՀՊՏՀ-ն ուղարկել է ՈԱԱԿ 09.07.2014թ-ին: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը ներառում է բուհի ինստիտուցիոնալ կարողությունների՝ հավատարմագրման չափանիշներին համապատասխանության փորձագիտական գնահատականները: Վերջնական զեկույցը փորձագիտական խմբի կողմից հաստատվել է 18.07.2014թ-ին:

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն: Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը որպես ինքնուրույն բուհ գործում է 1975 թ.-ից, երբ 1930 թվականից գործող Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի հիման վրա կազմավորվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտը:

ՀՀ Կառավարության 1999թ. նոյեմբերի 30-ի որոշմամբ բուհը վերանվանվել է Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, իսկ 2006թ. հունիսի 6-ին ստացել է համալսարանի կարգավիճակ և դարձյալ վերանվանվել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն: Վերջին փոփոխությունը պայմանավորված է եղել նրանով, որ 2006/2007 ուսումնական տարվանից հնգամյա կրթությունը ՀՊՏՀ-ում փոխարինվել է երկաստիճան՝ բակալավրի և մագիստրոսի որակավորման կրթական ծրագրերով:

Տարածաշրջանների կարիքները բավարարելու նպատակով 1997թ.-ին ՀՀ Շիրակի մարզում հիմնվել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) մասնաճյուղը, իսկ 2007թ.-ին՝ Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր քաղաքում ստեղծվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի երկրորդ մասնաճյուղը:

2012թ. ՀՀ Կառավարության որոշմամբ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանին թույլատրվում է իրականացնել օտարերկրյա դիմորդների նախապատրաստական և բարձրագույն կրթական ուսուցում: Ներկայումս բուհում սովորում են 15 օտարերկրացիներ:

ՀՊՏՀ 6 ֆակուլտետներում, Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում իրականացվում են կրթական 73 ծրագրեր, որոնցից 27-ը՝ բակալավրի (17 մասնագիտության և 10 մասնագիտացման գծով) և 46-ը մագիստրոսի (11 մասնագիտության և 36 մասնագիտացման) կրթական աստիճաններում: Բուհում առկա և հեռակա ուսումնառության ձևերում սովորում են շուրջ 8000 ուսանող:

Ինքնավերլուծությունում և ՀՊՏՀ ռազմավարական փաստաթղթերում ձևակերպված են մի շարք դրույթներ, որոնք ցույց են տալիս բուհի գործունեության տարբեր ոլորտներում նրա ձգտումները:

Կրթություն: «ՀՊՏՀ-ն, դասավանդման և ուսումնառության ավանդական փորձը վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու, պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակավորումների հետագա հարստացման և համալսարանում ուսանողակենտրոն կրթական միջավայրի կայացման ճանապարհով ձգտում է իր ՄԿԾ-ները համահունչ դարձնել համալսարանի առաքելությանը, ռազմավարական նպատակներով սահմանված գործունեության հիմնական ուղղություններին և համապատասխանեցնել պետական կրթական չափորոշիչների ու ՀՀ ՈԱԾ-ի պահանջներին»:

Հետազոտություն: «Ներկայումս ՀՊՏՀ բարձրագույն կրթության բազմամակարդակ համակարգին անցման և կրթական նոր չափորոշիչների ներդրման նախնական փուլում է և

միաժամանակ վերանայում է գիտահետազոտական գործունեության կազմակերպական սկզբունքները՝ ձգտելով ապահովել կատարված տնտեսագիտական հետազոտությունների շարունակականությունը, հետագա զարգացումը, միջազգայնացումն ու առնտրայնացումը: Ընդ որում, որպես գերակայություն դրված է կրթական և գիտական գործունեության բարձր որակի ապահովումը՝ դրանց ինտեգրման և փոխհարստացման ճանապարհով»:

Միջազգայնացում: «Միջազգային համագործակցության ոլորտում արտասահմանյան առանձին համալսարանների և կազմակերպությունների հետ կնքած փոխհամագործակցության համաձայնագրերի, եվրոպական կրթական տարածքում ակադեմիական շարժունակության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների միջոցով ՀՊՏՀ-ը ձգտում է արդյունավետ համագործակցություն ձևավորել միջազգային հաստատությունների և կառույցների հետ ու նպաստել համալսարանի միջազգայնացմանը»:

Որակի ապահովում: «Առաջնորդվելով որակի շարունակական բարելավման, որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին համապատասխանության, միջազգային և տեղական մակարդակում հաշվետվողականության ապահովման և մասնագիտական կրթության հավատարմագրման անհրաժեշտության սկզբունքներով՝ ՀՊՏՀ ձգտում է աջակցել որակի շարունակական բարելավմանը համալսարանի գործունեության բոլոր հիմնական ոլորտներում՝ կրթություն, հետազոտություն և հանրային ներգրավում»:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է «համապատասխանություն նպատակներին» սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ
Ի. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1. ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

ՀՊՏՀ-ն իր գործունեության ռազմավարական պլանավորումը սկսել է 2006-2011թթ. «Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունները» փաստաթղթի մշակումով, որտեղ ներառվել են որոշակի միջացառումներ ըստ գործունեության 7 ուղղությունների՝ իրականացման ժամկետներով և պատասխանատու ստորաբաժանումներով: Այն չի պարունակել այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են ակնկալվող արդյունքները և կատարողականի ցուցիչները, որոնք թույլ կտային գնահատել պլանի իրականացման արդյունքում հաստատության ձեռքբերումները: Նշված ժամանակահատվածի համար բուհն իր առաքելությունն է համարել Համալսարանի կանոնադրությամբ սահմանված գործունեության իրականացումը՝ «...նպատակաուղղված տնտեսագիտական կրթության, հիմնարար գիտական հետազոտությունների և ուսումնառության կազմակերպումը՝ հանրակրթական, միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական, հետբուհական և լրացուցիչ կրթության մակարդակներում...»:

Բուհի զարգացման նոր հայեցակարգը և առաքելությունը ձևակերպված են 2012-2016թթ. ռազմավարական ծրագրում, որի համաձայն ՀՊՏՀ պատրաստում է. «մրցունակ, մասնագիտական և ընդհանրական գիտելիքով, հմտություններով և կարողություններով զինված ու ժողովրդավարական քաղաքացիության սկզբունքներով առաջնորդվող մասնագետներ»: ՀՊՏՀ-ն կարևորում է ուսումնառության միջավայրի ուսանողակենտրոն և նորարական բնույթը, կրթություն կիրառական և արդիական բովանդակությունը, կապը աշխատաշուկայի հետ, դասավանդող կազմի մասնագիտական և հետազոտական ներուժը, գիտահետազոտական և ուսումնական գործընթացների միջև կապի ապահովումը:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՀՊՏՀ առաքելության մեջ «...վերապատրաստում է հասարակության և տնտեսության փոփոխությունները իրականացնող առաջնորդներ՝ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային աշխատաշուկայի համար» դարձվածքում «առաջնորդներ» բառը բուհի ղեկավարությունը նույնացնում է «ոլորտի մասնագետ» եզրույթի հետ: Նրանք առայժմ հավակնոտ են համարում նաև միջազգային աշխատաշուկայի համար մասնագետների պատրաստման նպատակը և կարևոր են համարում հետազոտական գործունեության զարգացումը՝ որպես առաջընթացի երաշխիք:

Հրապարակված առաքելություն չունենալու փաստը, Գյումրու մասնաճյուղի ղեկավարները բացատրում են նրանով, որ ուղղորդվում են մայր ԲՈՒՀ-ի առաքելությամբ, իսկ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղը ունի մասնաճյուղի տնօրինության 03.09.13 թ. նիստում հաստատված առանձին առաքելություն:

ՀՊՏՀ առաքելության մեջ չկա հստակ անդրադարձ «ՀՀ կրթության որակավորումները և դրանց ընդհանրական բնութագրերը» փաստաթղթին (ՈԱՇ): Համալսարանի Երևանյան համալիրը իրականացնում է բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնց շրջանավարտներին տրվող որակավորումները համապատասխանում են ՈԱՇ-ով նկարագրված 6-րդ և 7-րդ մակարդակներին: Գյումրու մասնաճյուղում իրականացնում են բակալավրական և մագիստրոսական կրթական ծրագրեր (6-րդ և 7-րդ մակարդակներ), իսկ Եղեգնաձորի մասնաճյուղում՝ միայն բակալավրական ծրագրեր (6-րդ մակարդակ):

1.2. ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

ՀՊՏՀ-ն հստակեցրել է իր շահակիցների խմբերը և նախատեսում է հաշվի առնել նրանց կարիքները իր առաքելությունը, նպատակները և խնդիրները մշակելիս: Արտաքին և ներքին շահակիցների կարիքների բացահայտման որոշ մեխանիզմներ գործում են՝ նրանց ներկայացուցիչներին կառավարման և ինքնակառավարման մարմիններում, համահամալսարանական և ֆակուլտետային զանազան հանձնաժողովներում և հանձնախմբերում ներգրավման միջոցով:

Կարիքների ուսումնասիրման և դրանց նպատակային արտացոլումը հիմնավորող փաստերը սակավ են՝ մանավանդ արտաքին շահակիցների մասով: Գործող մեխանիզմները հստակ չեն, իսկ իրականացված գործողությունները միայն միջնորդավորված կերպով են վեր հանում շահակիցների կարիքները: Հարցումները չունեն պարբերական բնույթ, այլ նախաձեռնվել և իրականացվել են արտաքին գործոնների ազդեցությամբ: Մի շարք խմբերի հետ հանդիպումների մասնակիցներ ծանոթ չէին հաստատության կողմից կազմակերպվող հարցումներին, դրանց արդյունքներին և կիրառություններին:

ՀՊՏՀ ներկայիս Ռազմավարական ծրագիրը հիմնականում արտացոլում է ռեկտորի նախընտրական ծրագրի դրույթները: Բուհի վարչարարները պնդում են, որ ներքին շահակիցները հարցումների միջոցով են մասնակցել այդ փաստաթղթի մշակմանը: Արտաքին շահակիցների ներկայացուցիչներից Կառավարման խորհրդի անդամներն են մասնակցել Ծրագրի հաստատմանը: Նրանք ընդունում են, որ ծրագիրը կազմվել է առանց գնահատման և հաշվարկների: Տարբեր շահակից խմբերի հետ հանդիպումները փաստեցին, որ նրանց զգալի մասը ծանոթ չէ ՀՊՏՀ ՌԾ-ի դրույթներն:

ՀՊՏՀ-ն ընդունում է ներքին և արտաքին շահակիցների կարիքների ուսումնասիրման կարևորությունը և մեխանիզմների անկատարությունը բուհում: Այդ պատճառով էլ 2013 թ-ին մշակվել է «Հետադարձ կապի մեխանիզմներ» փաստաթուղթը, սակայն համակարգը ներդրման սկզբնափուլում է:

1.3. ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման առաջնային մեխանիզմ է հանդիսանում ուսումնագիտական և ֆինանսատնտեսական գործունեության մասին ռեկտորի տարեկան հաշվետվությունը, որտեղ ներկայացվում են համալսարանի գործունեության արդյունքները բոլոր ուղղություններով: Նմանատիպ հաշվետվություններ են մշակում և ներկայացնում համալսարանի վարչական ստորաբաժանումները և ամբիոնները: Ուսանողների, աշխատակիցների և արտաքին շահակիցների ներկայացուցիչները, մասնակցելով համալսարանական և ֆակուլտետային

խորհուրդների աշխատանքներին, կարողանում են իրականացնել վերահսկողություն և գնահատում:

Հաստատությունն ընդունում է այն փաստը, որ մշակված չէ ռազմավարական գործողությունների ծրագրի գնահատման ընդհանուր մոդել, և կան թերություններ, երբ խոսքը վերաբերում է ուսանողների և դասախոսների գնահատմանը: Համալսարանում կան գործընթացներ, որոնց ցուցանիշների դինամիկան ենթարկվել է վերլուծության, սակայն բացակայում է արդյունքների գնահատման հստակ և համապարփակ քաղաքականությունը, համակարգված չեն բարելավումների մեխանիզմներն ու ընթացակարգերը:

2006-2011թթ. Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտի զարգացման և բարեփոխման ռազմավարության գերակայությունների իրականացման արդյունքների հիմնավոր վերլուծությունները և ՀՊՏՀ-ի 2012-2016 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի մշակման համակարգված հիմքերը գրեթե բացակայում են: Բացակայում են նաև նոր ՌԾ-ի իրականացման ժամանակացույցը, կատարողականի գնահատման մեխանիզմները և կողմնորոշիչ ցուցիչները:

Համալսարանը նախատեսում է մշակել զարգացման նոր ռազմավարական պլան (նորաստեղծ Ամբերդ հետազոտական կենտրոնի հայտարարած մրցույթի միջոցով):

Դատողություններ

Համալսարանը հետամուտ է իր տեսլականին, սահմանված առաքելությանը և 2012-2016 թթ. ռազմավարությանը: ԲՈՒՀ-ի կողմից որդեգրված նպատակների և արժեքների բազմազանության մեջ են նրա տեսլականի և առաքելության ուժեղ կողմերը: Թերի կողմերից են ոչ հստակ ձևակերպումները, ինչպես նաև որոշ կարևոր այնպիսի առաջնահերթությունների բացակայությունը, որոնք վերաբերում են որակի ապահովմանը/որակի բարելավմանը և միջազգայնացմանը: ՀՊՏՀ առաքելությունը ներկայիս ձևակերպմամբ հավակնոտ է և շահակիցների լայն շրջանակի համար դժվար ընկալելի. այն պետք է լինի իրատեսական, իսկ հետապնդվող նպատակները՝ չափելի:

Այն, որ բուհի կողմից ռազմավարական շահակիցները հստակեցվել են արդեն դրական է, առկա է նրանց կարիքների վերհանման և բավարարման մասնակի դեպքեր: Սակայն դա չի կարող թույլ տալ անտեսել այդ նույն շահակիցների կարիքների համակարգված բացահայտման և դրանցով առաջնորդվելու ամրագրված քաղաքականության բացակայության փաստը: Բարձրագույն կրթության ոլորտի և միջավայրի արագ տեղի ունեցող փոփոխությունները պետք է ուղղորդեին համալսարանին՝ ուսումնասիրելու շահակիցների (հատկապես ուսանողների և գործատուների) անընդհատ փոփոխվող կարիքները: Փորձագիտական խումբը խրախուսում է շահակիցների շրջանում հարցումները, նրանց ներգրավումը ներհամալսարանական գործընթացներին, ինչպես նաև նույն շահակիցների կարծիքների հավաքագրման գործիքների մշակումը:

ՀՊՏՀ առաքելության վերանայումը՝ շահակիցների լայն շրջանակի ներգրավմամբ հնարավորություն կտա հանրությանը ավելի ճիշտ կողմնորոշել ՄՈՒՀ-ի գործունեությունից ակնկալվող կոնկրետ արդյունքներում, համախմբել բոլոր շահակիցներին, ներգրավել հավելյալ ռեսուրսներ և դրանով իսկ նպաստել մրցունակության բարձրացմանը:

Հստակ և չափելի առաքելությունը հնարավորություն կտա բուհին նույնքան հստակ սահմանել իր առաջընթացը, գնահատել ձեռքբերումները և դրա մասին հավաստի տեղեկատվություն տրամադրել բոլոր շահակիցներին՝ հատկապես գործատուներին և

կնպաստի բուհի նկատմամբ վստահության մակարդակի բարձրացումը: Շահակիցների մասնակցությամբ և նրանց կողմից ընդունված առաքելությունը կօգնի միավորելու բուհի անձնակազմի ներուժը՝ բուհի նպատակների և խնդիրների լուծման, որոշակիացնել մրցակցային դիրքը կրթական ծառայությունների դաշտում՝ տեղական և միջազգային, և նպաստել բուհի նկատմամբ վստահության աճին:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

ՀՊՏՀ-ի կառուցվածքում ենթակայությունների շղթան ապահովվում է ոլորտները համակարգող պրոռեկտորների, իսկ մասնաճյուղերում՝ տնօրենների կառավարմամբ: Համալսարանում ինքնակառավարումն իրականացվում է ըստ ՀՀ օրենսդրության և համապատասխան կանոնադրությունների, կոլեգիալության և միանձնյա ղեկավարման սկզբունքների զուգակցմամբ: Խորհուրդները, որոնք պետք է ցույց տային կառավարման գործընթացներին շահակիցների մասնակցությունը, ինչպես երևանյան համալիրի, այնպես էլ Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերի կառավարման կազմակերպական սխեմաներում բացակայում են:

Կառուցվածքային փոփոխություններ իրականացնելիս համալսարանը ավելի շուտ գնացել է կառավարման համակարգի տարբեր օղակների միջև գործառույթների վերաբաշխման և համեմատաբար սակավաթիվ նոր կառուցվածքներ ստեղծելու ճանապարհով (ամբիոնների խոշորացում, ստորաբաժանումների լուծարում և վերակազմավորում, որակի ապահովման բաժնի ստեղծում, մարկետինգի, հասարակայնության հետ կապերի ստորաբաժանումներ, պաշտոնների հստակեցում և այլն):

Համալսարանի ստորաբաժանումները հիմնականում գործում են իրենց կանոնադրությունների և գործունեության կանոնակարգերի համաձայն: Սակայն ոչ բոլոր ստորաբաժանումներում են առկա գործընթացները կանոնակարգող, աշխատակիցների գործառույթներն ամրագրող փաստաթղթեր: ՀՊՏՀ-ում գործող առանձին կառույցների ու դրանց ղեկավարների գործառույթները մասամբ տրամախաչվում են:

Աշխատակիցները համարում են, որ որոշումները համալսարանում կայացվում են էթիկայի կանոնների պահպանմամբ, սակայն վերջիններս սահմանված և ամրագրված չեն: Բացակայում են բուհի նպատակների իրականացման համար առկա մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների բավարարության մասին վերլուծությունները: Համալսարանում կառավարման արդյունավետությունը չի գնահատվում:

ՀՊՏՀ կառավարման ցանցային համակարգը, որը պետք է ներդրվեր մինչև 2013թ. վերջը և հնարավորություն տար իրականացնել ցանցային կառավարում և հավաքագրված տեղեկատվության հիման վրա թույլ տար կայացնել հիմնավոր որոշումներ, դեռևս չի գործում:

ՀՊՏՀ մասնաճյուղերի լիազորությունները, իրավունքներն ու ինքնավարության աստիճանները զգալիորեն տարբեր են: ՀՊՏՀ երևանյան համալիրի և մասնաճյուղերի կապը պասիվ է. թույլ է մասնաճյուղերի դասախոսների ուղղակի կապը համապատասխան մասնագիտական ամբիոնների հետ, դասընթացների ծրագրերը և մասնագիտական գրականությունը դժվար հասանելի են և այլն: Մասնաճյուղերում ցածր է իրազեկվածությունը երևանյան համալիրում իրականացվող գործընթացներից (օրինակ, երկու մասնաճյուղերում էլ ծանոթ չէին ՀՊՏՀ Ռազմավարական Ծրագրին (ՌԾ) և որակի ապահովման գործընթացներին, ներգրավված չէին TEMPUS ծրագրերում և այլն):

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՀՊՏՀ կառավարման համակարգը, գործող կանոնադրությունն ու կանոնակարգերը դասախոսներին և ուսանողներին հնարավորություն են տալիս ընդգկվելու տարբեր մակարդակների կառավարման օղակներում և անմիջականորեն մասնակցելու թե՛ բուհի կառավարման գործընթացին, թե՛ հարցերի քննարկմանը և դրանց վերաբերյալ որոշումների կայացմանը: ՀՊՏՀ-ի կառավարման, գիտական և ֆակուլտետային խորհուրդների կազմերում 25%-ը ուսանողներ են: Կառավարման խորհրդում 25%, գիտական խորհրդում 25%, ֆակուլտետային խորհուրդներում 55%-ից ավելին դասախոսներ են: Կառավարման խորհրդում ընդգրկված են նաև արտաքին շահակիցների ներկայացուցիչներ:

ՀՊՏՀ երևանյան համալիրում ուսանողներ են ընդգրկված նաև Համալսարանի ուսումնամեթոդական խորհրդում, բողոքարկման հանձնաժողովում: Վերոհիշյալ խորհուրդներում և հանձնաժողովներում չընդգրկված ուսանողները իրազեկվում են ընդունված որոշումների մասին կուրսերի ավագների միջոցով, ովքեր պարբերաբար հանդիպումներ են ունենում ֆակուլտետների դեկանների հետ՝ քննարկելու նաև տարաբնույթ այլ հարցեր (օրինակ, սոցիալական խնդիրներ, դասավանդման մեթոդներին առնչվող հարցեր): ՈՒսանողները գտնում են, որ բավարար չափով կարողանում են մասնակցություն ունենալ կառավարմանը, չնայած քիչ դեպքեր կարողացան ներկայացնել որպես հիմնավորում: Ավելին, այցի ընթացքում, խումբը հնարավորություն ունեցավ լսելու փաստարկներ ուսանողական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից, որոնք բարձրաձայնեցին իրենց մտահոգությունները ուսանողների կողմից ներկայացված որոշ ծրագրերի արգելափակման վերաբերյալ (օրինակ, Moodle SS հարթակի ներդրման մերժումը): Մյուս կողմից, համալսարանի ղեկավարները և աշխատակիցները պնդում են, որ տարբեր գործընթացներում ակտիվ է ուսանողների 10%-ը, իսկ մոտ 70%-ը պասսիվ է, և ազդակներ տալու անհրաժեշտություն կա: Դասախոսները գտնում են, որ իրենց ձայնը լսելի

է. նրանք կարող են մասնակցել իրենց առնչվող որոշումների կայացմանը ամիսը մեկ անգամ տեղի ունեցող ամբիոնների նիստերի միջոցով:

ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղում խնդիրներ կան կոլեգիալ կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածությունն ապահովելու ուղղությամբ՝ մասնաճյուղի խորհրդի կազմի 13 անդամներից միայն մեկը կամ խորհրդի անդամների թվի 7,7 %-ն է ուսանող: Եղեգնաձորի մասնաճյուղում ուսանողները և դասախոսները հնարավորություն ունեն մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը՝ տնօրինությունում ունենալով իրենց ներկայացուցիչը:

2.3ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

ՀՊՏՀ-ում երկարաժակետ պլանավորման որոշակի փորձառություն ունի: Սակայն մշակումները հիմնականում ունեցել են հայեցակարգային բնույթ, և անմիջական աշխատանքների պլանավորման մեջ էական նշանակություն չեն ունեցել: Համալսարանում պլանավորման առումով դեռևս բացակայում է համակարգված մոտեցումը:

Ներկայումս համալսարանն առաջնորդվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2016թթ. զարգացման ռազմավարական ծրագրով» և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգով», որպես երկարաժամկետ պլաններ: Սակայն, բացակայում են դրանց իրականացման ժամանակացույցերը և տրոհումը միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների ծրագրերի:

Որպես միջնաժամկետ պլան համալսարանում դիտարկվում է գիտության եռամյա ծախսերի նախահաշիվը, իսկ կարճաժամկետ՝ համալսարանի գործունեության բոլոր ուղղություններով տարեկան աշխատանքային պլանները: Սակայն, ամբիոնների տարեկան աշխատանքային պլանների ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ դրանք ամբիոնների նիստերի նախնական օրակարգեր են: Դրանցում հստակեցված չէին ամբիոնների գործունեության ուսումնամեթոդական, ուսումնադաստիարակչական, գիտահետազոտական, դասավանդողների վերապատրաստումների և այլ աշխատանքները:

ՀՊՏՀ-ում բացակայում են երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների՝ որպես փոխկապակցված համակարգի, մշակման, իրականացման և գնահատման մեխանիզմները:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Համալսարանը, ինչպես ՀՀ մնացած ԲՈՒՀ-երը, գտնվում է կրթական բարեփոխումների գործընթացում, ինչն անմիջականորեն պայմանավորված է ՀՀ կողմից Բոլոնիայի հռչակագիրը ստորագրելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածքին ինտեգրվելու միտումների հետ: Սահմանվել է երկաստիճան՝ բակալավրային և մագիստրոսական կրթական աստիճաններ պարունակող կրթահամակարգ, ներդրվել է կրեդիտային համակարգը:

ՀՏՊՀ-ն կառուցվածքային ստորաբաժանումներում տեղի ունեցող քննարկումների միջոցով ջանում է իրականացնել իր գործունեության վրա ազդող առանցքային գործոնների ուսումնասիրություն և վերլուծություն: Ավելին, համալսարանը օգտագործում է այդ գործոնները բացահայտելու իր հետազոտական ներուժը (օրինակ, 2013թ. իրականացված ՀՀ

աշխատաշուկայում տնտեսագետ մասնագետների պահանջարկի և գործատուների կողմից նրանց ներկայացվող պահանջների հետազոտությունը): Միևնույն ժամանակ, բուհի ղեկավարությունն անհնարին է համարում տեսանելի երկարաժամկետ հեռանկարի համար գործունեության վրա ազդող գործոնների ամբողջական վերլուծությունը և որոշումների կայացումը դրանց հաշվառմամբ:

Բուհն ընդունում է, որ արտաքին գործոնների ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրման գործընթացը գերակշռաբար կրում է իրավիճակային բնույթ և կանոնակարգված չէ նախապես մշակված ընթացակարգով: Պլանավորման փուլում է հավաքագրվող տվյալների բազան, որը պետք է հիմք հանդիսանա որոշումների համար:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

Համալսարանը գտնում է, որ իր տարատեսակ քաղաքականությունների ու ընթացակարգերի կառավարումը իրականացվում է **պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում** (ՊԻԳԲ) սկզբունքով, որը ձևակերպված է «ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգ», «ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր», ինչպես նաև «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմներ» հայեցակարգային փաստաթղթերում: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ նշված սկզբունքը կիրառվում է հատվածական և ոչ բոլոր մակարդակներում են լիովին իրազեկ ՊԻԳԲ շրջափուլից: Բացի այդ, հետադարձ կապի մեխանիզմները դեռևս մշակման փուլում են, հարցումները չունեն պարբերական բնույթ:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Ինքնավերլուծության մեջ բուհը չի ներկայացրել տեղեկատվություն իր կողմից իրականացված վերլուծությունների մասին. տպավորությունն այնպիսին է, որ համակարգված գործընթացը բացակայում է:

Սակայն միևնույն ժամանակ, ՀՊՏՀ-ը, նպատակ ունենալով կիրառել որակի ապահովման գործընթացներ, փորձում է մշակել և ներդնել գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառման գնահատման մեխանիզմներ: Համալսարանում բոլոր գործընթացները ավարտից հետո գնահատվում են հաշվետվության միջոցով: Այս կամ այն գործընթացի արդյունքների մասին տեղեկատվությունը հավաքագրվում է համալսարանի համապատասխան ստորաբաժանման կողմից՝ ներքևից վերև ուղղությամբ: Նախկինում ունեցած կամ սպասվող տվյալների և վերջնական արդյունքների հիման վրա պատասխանատուները կատարում են համեմատական վերլուծություններ՝ փորձելով գնահատել գործընթացի արդյունավետությունը:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ համալսարանում կրթական ծրագրերի արդյունավետությունը ընդհանրապես չի գնահատվում, քանի որ բացակայում են գնահատող մեխանիզմները:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Համալսարանի գործունեության հրապարակայնությունն ապահովվում է պաշտոնական կայքի միջոցով, որտեղ տեղակայվում են նյութեր համալսարանի կառուցվածքի, իրականացված միջոցառումների, գիտական և միջազգային կապերի մասին, ինչպես նաև դիմորդներին տրվող տեղեկատվության ձևով: Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տրամադրվում է զուտ տեխնիկական տեղեկատվություն (մասնագիտությունների անուններ, ընդունելության կարգեր և տեղեր, վարձավճարի չափեր և այլն), իսկ դրանց որակի մասին վերլուծությունները բացակայում են:

Համալսարանը շահակիցների տեղեկացվածությունը գնահատելու համար կիրառում է հարցումներ ներսում և շրջանավարտների շրջանում: Գնահատման մեկ այլ մեթոդ է դիտարկվում ֆեյսբուք սոցիալական կայքում տեղակայված ՀՊՏՀ պաշտոնական էջի տեղեկատվության մեկնաբանությունների հատվածի վերլուծությունը:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ բացակայում են հրապարակումների գնահատման ամրագրված գործիքները և համապատասխան վերլուծությունները, հրապարակային տեղեկատվության տարածման քաղաքականությունը և ընթացակարգերը: Բացակայում են նաև հրապարակումների մատչելիությունը և օբյեկտիվությունը գնահատող մեխանիզմները: Համալսարանում կանոնակարգված չէ հրապարակման ենթակա կամ արգելվող, ինչպես նաև ներքին օգտագործման համար (կոնֆիդենցիալ) տեղեկատվության տրամադրումը:

Դատողություններ

ՀՊՏՀ-ում իրականացված կառուցվածքային փոփոխությունների արդյունքում գործող առանձին կառույցների ու դրանց ղեկավարների որոշ գործառույթներ տրամախաչվում են, ինչը էթիկայի մշակված կանոնների բացակայության պարագայում կարող է հանգեցնել շահերի բախման և կասեցնել ուսումնական հաստատության կառավարման բարելավման գործընթացները: Հասկանալի չէ, թե ինչու կրթության ոլորտը համակարգող երկու պրոռեկտորների առկայության պայմաններում ինչու է ամբիոնների կառավարումը իրականացվում անմիջապես ռեկտորի կողմից:

Համալսարանական կառավարման կառուցվածքը բաց է աշխատակիցների և ուսանողների համար: Ղեկավարման տարբեր խորհուրդների անդամները կարող են արտահայտել արտաքին և ներքին շահակիցների կարիքները. դա համալսարանի ուժեղ կողմերից է:

Համալսարանի կառավարման ներկայիս համակարգը ապահովում է կառուցվածքային ստորաբաժանումների կառավարումը, սակայն դեռ խնդիրներ կան դրանց արդյունավետ փոխգործակցությունն ապահովելու ուղղությամբ (թույլ են միջամբիոնային կապերը, ցածր է իրազեկվածությունը ուրիշ ստորաբաժանումներում իրականացվող գործընթացների վերաբերյալ և այլն): Նման մեկուսացվածությունը խոչընդոտում է առկա լավ փորձի տարածմանը ստորաբաժանումների միջև: Իսկ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների վերլուծությունների բացակայության պայմաններում հնարավոր չէ գնահատել կառավարման համակարգի արդյունավետությունը (բավարար չեն միայն հաշվետվությունները) և թերի են որոշումների կայացման հիմնավորումները: Ուստի, ՀՊՏՀ վարչական կառույցների և դրանց գործունեության արդյունավետության, գործընթացների վրա ազդող գործոնների ուսումնասիրության և տվյալների հավաքագրման ընթացակարգերի ու գնահատման մեխանիզմների մշակումը հնարավորություն կտան ապահովելու որոշումներ կայացումը հավաստի տվյալների հիման վրա:

ՀՊՏՀ-ի ՌԾ-ն առավելապես կարճաժամկետ ծրագրերի ամբողջություն է, այլ ոչ երկարաժամկետ նպատակների և դրանց իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների բաշխման ծրագիր: Երկարաժամկետ պլանավորումը պետք է ընկալվի որպես համալսարանի առաքելության և նպատակների սերտ կապ: Մի կողմից դա գործիք է՝ նվազեցնելու ՄՈՒՀ-ի ռիսկը, որը կարող է ծագել կապված արմատական ժողովրդագրական, տեխնոլոգիական, տնտեսական և սոցիալական փոփոխությունների հետ: Մյուս կողմից, շահակիցները ակնկալում են շրջանավարտների կարիերայի երկարաժամկետ պլանավորում և ցանկանում են տեսնել, թե ինչ սպասումներ կարող են ունենալ համալսարանից, որքանով է համալսարանի նպատակների իրականացումը իրատեսական:

ՀՊՏՀ առանձին գործընթացների համար կիրառվում են որակի կառավարման շրջափուլի տարրերը՝ մասնավորապես պլանավորումը և իրականացումը, իսկ գնահատումը և բարելավումը ոչ միշտ է իրականացվում: Հակադարձ կապի մեխանիզմների և պարբերական գնահատման բացակայությունը համալսարանի թույլ կողմերից է: ԲՈՒՀ-ի քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունը որակի կառավարման սկզբունքով (ՊԻԳԲ) իրականացնելու համար կանոնակարգերի և մեխանիզմների մշակումը կապահովի ՀՊՏՀ կառավարման համակարգի հետագա բարելավումն ու արդյունավետության բարձրացումը:

Համալսարանում իրականացվում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների վերաբերյալ որոշակի տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն, սակայն դրանք կանոնակարգված բնույթ չեն կրում և բավարար չեն կառավարչական արդյունավետ որոշումների կայացման համար: Ուստի և, գործող ՄԿԾ-երի և իրականացվող գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծության և կիրառումը կամակարգող, ինչպես նաև գնահատող մեխանիզմների մշակումը կնպաստի մասնագիտական կրթության արդյունավետության հետագա բարձրացումը և հասարակության առջև հաշվետվողականության ապահովումը:

ՀՊՏՀ-ն դեռևս չի անդրադառնում հրապարակումների անկողմնակալության հարցերին: Կայքում զետեղված և դիմորդներին տրամադրվող տեղեկատվությունը ավելի շատ մարքեթինգային և գովազդային նպատակներ է հետապնդվում, քան թե կրթության որակի մասին պարզ և թափանցիկ տեղեկատվությանը, որը վստահելի պետք է բոլոր շահակիցների համար: Սա հատկապես վերաբերում է ծրագրերով նախատեսված ուսումնառության արդյունքներին: Այդպիսի տեղեկատվությունը հիմք կարող է դառնալ ինքնավերլուծության և արտաքին գնահատման համար:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 2-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են հաստատության առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

ՀՊՏՀ-ում իրականացվում են տնտեսագիտության և կառավարման ոլորտի մասնագիտությունների 73 կրթական ծրագրեր, որոնցից 27-ը՝ բակալավրի (17 մասնագիտության և 10 մասնագիտացման գծով), իսկ 46-ը մագիստրոսի (11 մասնագիտության և 36 մասնագիտացման) կրթական աստիճաններում: Որոշ ծրագրեր առաջակվում են միայն ՀՊՏՀ-ում:

Բուհի մասնագետների մշակումների հիման վրա են 2007-2008թթ. հաստատվել ՀՀ-ում գործող բոլոր տնտեսագիտական մասնագիտությունների և մասնագիտացումների համար բակալավրական և մագիստրոսական կրթության պետական չափորոշիչները: Համալսարանի կրթական գործընթացը կառուցվել է՝ հիմքում ունենալով այդ չափորոշիչները, իսկ ՄԿԾ-երի բաղադրիչները՝ ուսումնական պլանները և առարկայական ծրագրերը, կազմված են այդ չափորոշիչների հիման վրա:

Դրական փոփոխությունները վերաբերում են միայն մագիստրոսական ծրագրերին: Մարքեթինգի ամբիոնում 2012թ. հրատարակվել է մագիստրոսական կրթության «Մարքեթինգ» մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգերը և մասնագիտացման առարկայական ծրագրերը, որտեղ ըստ դասընթացների նկարագրված են ելքային արդյունքները, դասավանդման եղանակները և մեթոդները: TEMPUS ծրագրի շրջանակներում փոփոխվել է «Կրթության կառավարում» ՄԿԾ-ն և ձևակերպվել է ըստ շնորհվող որակավորման ակնկալվող ուսումնառության արդյունքների, որոնց կապը ՈԱՇ-ի հետ, սակայն, չի ներկայացված: Եվս տասին մոտ մագիստրոսական ծրագրերում կատարվել են բարելավումներ՝ գործատուների հետ համագործակցության շրջանակներում:

Համալսարանի ղեկավարությունը ընդունում է, որ, ի տարբերություն մագիստրոսականի, բակալավրական կրթական ծրագրերը հնացած են, չեն համապատասխանում շուկայի պահանջներին և կարիք կա մասնագիտությունների ճշտման և խոշորացման: ՀՊՏՀ-ն նախապատրաստվում է փոփոխություններին. ձևավորվել է ՄԿԾ-երի կազմման և վերանայման խումբ, ստեղծվել է կրթական ծրագրերի կազմման և մշակման կարգ: Փոփոխությունների դանդաղ ընթացքը բուհը պարզաբանում է նրանով, որ հաստատված չէ ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտությունների նոր ցանկը:

Ստորաբաժանումների ղեկավարները հայտարարում են, որ ուսումնառության վերջնարդյունքների վրա հիմնված կրթական ծրագրերը ներկայումս գտնվում են փորձարկման փուլում, որից հետո նշված փորձը պետք է տարածվի նաև ՀՊՏՀ մյուս ծրագրերի վրա: Ամբիոններում ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ առարկայական ծրագրերի շատ քիչ մասն է ձևակերպված ելքային արդյունքներով, իսկ մեծամասնության մոտ դրանք բացակայում են:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մանսագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, ինչը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

ՀՊՏՀ ղեկավարությունը, ընդունելով խնդրի կարևորությունը, առաջադրել է դասավանդման և ուսումնառության ավանդական փորձը վերանայելու և նորարարական մոտեցումներ ներդնելու պահանջներ:

Համալսարանում անընդհատ փորձում են փոխել հին և ներդնել դասավանդման նոր ձևեր, արդիականացնել լսարանները: Դասախոսների մեծ մասը հին թղթային ձևից անցնում են նոր՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաների կիրառման վրա հիմնված դասավանդման մեթոդների, հանձնարարում են պարտադիր անհատական աշխատանքներ, ավելի հազվադեպ օգտագործում են խմբային հետազոտական աշխատանքներ, գործարար խաղեր, դասավանդում կոնկրետ դեպքերի վերլուծության հիման վրա (case- study): Խմբերի համար ձևավորվում են էլեկտրոնային փոստարկղեր, որոնց վրա առաքվում են դասավանդման նյութերը:

Դասավանդման մեթոդների ընտրությունն իրականացվում է մասնագիտական ամբիոններում, և դասախոսն ազատ է այդ ընտրության մեջ: Դասախոսները գտնում են, որ բակալավրատում կրթությունը ուղղված պետք է լինի հիմնականում գիտելիքի տրամադրմանը, իսկ մագիստրատուրայում կիրառելի են քննարկումները, բանավեճերը և այլ ինտերակտիվ եղանակներ: Սակայն պարտադիր են համարում դասախոսությունների պահպանումը: Նրանք նաև պնդում են, որ հոսքերում և խմբերում մեծաքանակ ուսանողների առկայությունը (70-80 ուսանող դասախոսությունների ժամանակ, մագիստրոսական խմբերում նվազագույնը՝ 20, բակալավրիատի խմբերում նվազագույնը՝ 35) թույլ չի տալիս էապես փոխել դասավանդման մեթոդները: Ինքնավերլուծություն իրականացնող խումբն էլ է նշում, որ դասավանդման մեթոդների արդիականացումը դանդաղ է ընթանում:

Այցի ընթացքում հաստատվեց, որ ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն համալսարանում ամբողջությամբ չի իրականացվում, իսկ դասավանդման առանձին մեթոդների ընտրության հիմքում դրված չեն ծրագրերի ելքային արդյունքները, այլ, դասախոսների հայտարարման համաձայն, «դասընթացի առանձնահատկությունները»:

Կան դասավանդման և գնահատման մեթոդի ընտրության գործում ուսանողների մասնակցության դեպքեր, ինչը սակայն առայժմ համակարգված չէ:

Փորձագիտական այցի ընթացքում տարբեր հանդիպումների ընթացքում բարձրացվեց պրակտիկաների իրականացման խնդիրը: Այն կազմակերպվում է հիմնականում անձնական կապերով: Ուսանողները և գործատուները չեն համարում, որ պրակտիկաները արդյունավետ են կազմակերպվում:

3.3 ՄՈՒՀ-ը ծրագրում է ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

ՀՊՏՀ-ն ունի գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդաբանություն, որի հիմքում ընկած է գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգը, որը մշակվել է երկաստիճան կրթական համակարգին անցման ծամանակ: 2007-2013թթ. գործածության մեջ են դրվել գնահատման սկզբունքները և ուսանողի վերջնական գնահատականի ձևավորման բաղադրիչների կշիռները, ինչպես նաև գիտելիքների ստուգման մեխանիզմները: Դրանց մի մասը ենթարկվել է փոփոխությունների, որի նպատակը գնահատման համակարգում նկատված բացթողումների վերացումն է եղել: Բուհի բոլոր մակարդակներում կարևորում են գնահատման համակարգի օբյեկտիվության ապահովումը և գտնում, որ գործող համակարգը

կատարելագործման լուրջ կարիք ունի: Նրանք գտնում են նաև, որ գնահատման օբյեկտիվության վրա զգալի ազդեցություն են ունենում արտաքին միջնորդությունները:

Բուհի ղեկավարները գտնում են, որ ուսանողների գիտելիքի ստուգման ձևերի ընտրության հարցում ամբիոններին տրված է բավարար ակադեմիական ազատություն՝ ինքնուրույն ընտրել գիտելիքի ստուգման եղանակը, սակայն դասախոսները համարում են, որ ամբիոնը ազատ չէ գնահատման մեթոդների ընտրության մեջ:

Գնահատման քաղաքականությունը մեկնաբանելիս՝ հանդիպման մասնակիցները մեթոդների ընտրության առումով հղվում էին մոդուլների առանձնահատկությունների վրա, որոնք հետազայում չէին հստակեցվում նրանց կողմից: ՀՊՏՀ ուսանողի ուղեցույցում կիրառվում է «գնահատվող գործոն» եզրույթը, չի հստակեցված ուսանողների գնահատման քաղաքականությունը՝ ըստ ուսումնառության արդյունքների:

Ակադեմիական ազնվության պահպանման պահանջներ համալսարանում սահմանված չեն, սակայն առկա են դրանց որոշ տարրեր: Ըստ ՄՈՒՀ-ի կառավարիչների, այդ ազնվության պահանջի մասին տեղեկություն է տրամադրվում I կուրսի ուսանողների համար կազմակերպվող ուղղորդող հանդիպումների ընթացքում: Գրագողության կանխարգելման խնդրի պատասխանատվությունը դրված է դասախոսական կազմի վրա, որի համար նրանք ընտրում են պարզ մեխանիզմներ և հիմնվում են հիմնականում սեփական մասնագիտական փորձի վրա. համեմատություններ են կատարում, ուշադրություն են դարձնում գրականության հղումներին, կիրառվում են գրավոր և բանավոր քննությունների զուգակցում, թեսթային քննությունները և այլն: Յուրաքանչյուր տարի թարմացվում են մագիստրոսական թեզերի թեմաները՝ հնարավորինս բացառելով նախորդ տարվա թեմաների կրկնությունը:

Արտագրություն նկատելու դեպքում որևէ պատիժ չի նախատեսված, բացի այն, որ աշխատանքը ետ է վերադարձվում: Պայքարի կիրառվող մեխանիզմների արդյունավետության մասին բուհում տրամագծորեն տարբեր կարծիքներ կան. մի մասը գտնում է, որ արտագրությունը մասսայական է, և իմաստ չունի դրա դեմ պայքարելը, մյուս մասն էլ համարում է, որ այն քիչ է: Սակայն փաստ է այն, որ անհատական աշխատանքների թվի պակասեցումը ղեկավարությունը կապում է հենց արտագրությունների դեմ պայքարի անհնարինության հետ, ինչը իմաստազրկել է դրանց հանձնարարումը:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՀՊՏՀ-ը կարևորում է իր կրթական ծրագրերը բովանդակային համահունչությունը այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին, որը կնպաստի ուսանողների ու դասավանդողների շարժունությանը և միջազգայնացմանը: Դա, իբրև գերակա ուղղություն, նշվել է համալսարանի 2006-2011թթ. զարգացման և բարեփոխման գերակա ուղղություններում, ինչպես նաև 2011 թվականին հաստատված՝ ՀՊՏՀ զարգացման հայեցակարգային դրույթներում:

2007թ. սկսած երկաստիճան կրթության կառուցման և կազմակերպման առաջավոր փորձը, պահանջները և միջազգային չափանիշները ՀՊՏՀ հաշվի է առել կրթական նոր չափորոշիչների մշակման և սեփական կրթական ծրագրերի բարելավումն իրականացնելիս:

Եվրոպական երկրների համալսարանների կրթական ծրագրերի հետ բովանդակային համահունչությունը և ուսանողների ու շրջանավարտների շարժունությունն ապահովելու

տեսակետից վերջերս TEMPUS ծրագրի շրջանակներում վերանայվել է «Կրթության կառավարում» մասնագիտության կրթական ծրագիրը: Առկա են համեմատական վերլուծության և նպատակային բենչմարկինգի եզակի օրինակներ:

Բուհում ներդրված կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը և դիպլոմի միջուկի ձևաչափը նպաստում են ուսանողների շարժունությանը: Ուսանողը կարող է փոխել մասնագիտությունը (մասնագիտացումը), եթե կրեդիտների տարբերությունը նրանց միջև չի գերազանցում 20-ը: Համեմատաբար ցածր է կամընտրական մոդուլներին մասնաբաժինը:

Այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողների և դասախոսների փոխանակման գործընթացն իրականացվում է միջազգային ծրագրերի շրջանակներում, և համալսարանի համապատասխան կառույցները իրականացնում են միայն այդ ծրագրերի մասին ժամանակին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման գործընթացները:

3.5 ՄՈՒՀ-ը որդեգրել է մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

ՀՊՏՀ-ում կրթական ծրագրերի որակի ապահովման գործառույթը մինչև 2012թ. ավարտը հիմնականում իրականացվել է ֆակուլտետների խորհուրդների կողմից, որոնք պարբերաբար քննարկել են գործող կրթական ծրագրերի և առանձին դասընթացների ծրագրերի բովանդակության հետ կապված հարցեր: Միջամբիոնային հիմքով իրականացվել են նաև թողարկող ամբիոնների ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բովանդակային քննարկումներ և այս երկու ուղղություններով արձանագրված արդյունքները, սովորաբար, ամփոփվել են ռեկտորի տարեկան հաշվետությունում: Կիրառվում են նաև ուսանողների և շրջանավարտների բավարարվածության հարցումները որպես լրացուցիչ գնահատման գործիքներ են, որոնց արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս բարելավման ուղղությունները:

ՀՊՏՀ ղեկավարությունը կարևորում է գործատուների կարծիքը, և որոշ ՄԿԾ-երում մասնակի փոփոխություններ կատարվել են հենց գործատուների պահանջով: Համալսարանը փորձում է պայմանագրեր կնքել ՀՀ թե մասնավոր, և թե պետական խոշոր գործատուների հետ, նրանց կարիքները ուսումնասիրել աշխատանքի տոնավաճառներում: Գործատուները մասնակցում են նաև պրակտիկաների կազմակերպման, պետական քննությունների անցկացմանը և այլ գործընթացների:

Այդուհանդերձ, մասնակի փոփոխություններ են իրականացվել միայն մագիստրոսական ծրագրերում, և արմատական՝ միայն «Կրթության կառավարում» ծրագրում: Մնացած ծրագրերը մնացել են անփոփոխ, նույնիսկ կրթական արդյունքների բացակայության պայմաններում: Դասընթացների ծրագրերն ունեն տարբեր կառուցվածքներ, բացակայում են դասընթացների ծրագրերի կազմմանը ներկայացվող հստակ, միանման կառուցվածքային պահանջները:

Համալսարանում ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, արդյունավետության գնահատման և բարելավման քաղաքականությունը կանոնակարգված չէ: «Կրթական տեխնոլոգիաների զարգացման» աշխատանքային խումբը ստեղծել է ծրագրերի մշակման նոր ուղեցույց:

Դատողություններ

Համալսարանի կրթական գործունեությունը համապատասխանում է իր առաքելությանը: Ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքները սահմանված են մի քանի կրթական ծրագրերի համար, որոնք ընդհանուր առմամբ, համահունչ են ՈԱՇ-ին: Համալսարանի ՄԿԾ-ների շրջանակում կազմված առարկայական ծրագրերը մասամբ են ձևակերպված ՈԱՇ-ի բնութագրիչներին համապատասխան (գիտելիք, հմտություն, կարողություն): Իրականացվող ծրագրերի բենչմարքինգը/ համեմատական վերլուծությունը թույլ կտա համալսարանին ավելի հստակ գիտակցել ուժեղ և թույլ կողմերը, շահեկանորեն ցուցադրել իր կարողությունները:

Համալսարանի ղեկավարությունը ընդունում է, որ բակալավրական կրթական ծրագրերը հանդիսանում են թույլ կողմ, սակայն միաժամանակ կա հստակ ցանկություն արդիականացնել մասնագիտությունները և դրանք հարմարեցնել աշխատաշուկայի կարիքներին: Լավ փորձ է, որը պետք է տարածվի համալսարանում, մարքեթինգի ամբիոնում 2012թ. հրատարակված մագիստրոսական կրթության «Մարքեթինգ» մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգերը և մասնագիտացման առարկայական ծրագրերը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրությունը ՀՊՏՀ-ում դեռ համակարգված բնույթ չի կրում, քանի որ կրթական ծրագրերի գերակշռող մասը դեռևս չեն վերանայվել ուսումնառության ակնկալվող արդյունքների տեսանկյունից: Ուսումնառության վերջնարդյունքների ձևաքբերումը և ընտրված դասավանդման մեթոդները մեծապես կախված են նաև խմբերում ուսանողների քանակից, ինչը ՀՊՏՀ դեպքում հիմնավորման կարիք ունի: Ըստ ուսումնառության արդյունքների դասավանդման մեթոդների ընտրության քաղաքականությունը ուսանողակենտրոն ուսուցման տեսակետից նոր պահանջներ է դնում դասախոսների կոմպետենցիաների վրա, որոնք պետք է ներառվեն նրանց ընտրության կարգում և գնահատվեն ուսանողների կողմից: Պետք է կիրառել ուսուցման այնպիսի մեթոդներ, որոնք թույլ են տալիս ուսանողներին ինքնուրույն սովորել, զարգացնել այնպիսի հմտություններ, որոնք հնարավորություն կտան ուսանողներին, իսկ ավելի ուշ շրջանավարտներին հաջողությամբ ուսումնասիրել իրենց մասնագիտական ոլորտը (ցկյանս ուսուցում):

ՀՊՏՀ-ում դեռևս բացակայում է միասնական և հստակ գնահատման քաղաքականությունն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և դեռևս լիարժեք ներդրված չեն ակադեմիական ազնվությունը ապահովող գործընթացները: Նման քաղաքականության որդեգրումը, հստակ չափորոշիչների սահմանումը, գնահատման այնպիսի ընթացակարգերի մշակումը, որոնք հնարավորինս կապահովեն թափանցիկությունը և կբացառեն արտաքին միջամտությունները, թույլ կտան էապես փոխել կրթական միջավայրը, կմեծացնեն ուսանողների բավարարվածությունը ուսումնառությունից և կավելացնեն նրանց վստահությունը ձեռք բերված մասնագիտական կոմպետենցիաների նկատմամբ:

Համալսարանում վերջին տարիներին կրթական ծրագրերի շատ փոքր մասն են արդիականացվել և վերանայվել շահակիցների մասնակցությամբ. հիմնական ծրագրերը դեռևս բարելավման կարիք ունեն աշխատաշուկայի պահանջների համապատասխանեցման և մասնագիտական առաջընթացի հաշվառման տեսակետից: ՄԿԾ-ների պարբերաբար մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականության մշակումը և իրականացումը, նպատակային

բենչմարկինգը համալսարանին թույլ կտան ունենալ ժամանակակից և ճկուն ծրագրեր, նրա համար կապահովեն շահեկան դիրք կրթական ծառայությունների դաշտում:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 3-ի պահանջներին գնահատվում է **բավարար**՝ որոշակի նկատառումներով:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

ՀՊՏՀ-ն իրականացնում է լայնածավալ միջոցառումներ ուղղված հնարավոր դիմորդների մասնագիտական կողմնորոշմանը. Մարքեթինգի և կարիերայի կենտրոնի կողմից պատրաստվում են ՀՊՏՀ-ի, առանձին ֆակուլտետների մասին պատմող ֆիլմեր և այլ տեղեկատվական նյութեր, և Հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից իրականացվում է դրանց լուսաբանում: Բուհի պաշտոնական կայքում գործում է «Ընդունելություն» բաժինը, որտեղ տեղեկատվություն է տեղադրվում ՀՊՏՀ բոլոր մասնագիտությունների և մասնագիտացումների, ընդունելության կարգի և այլ անհրաժեշտ հարցերի վերաբերյալ:

Բարձր դասարանների աշակերտների և քոլեջների շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ Համալսարանի դասախոսները բաց դասախոսություններ են կազմակերպում 7 միջնակարգ և ավագ դպրոցների աշակերտության շրջանում, «Բաց դռների օրերի» շրջանակներում իրականացվում են աշակերտների ճանաչողական այցերը համալսարան: 14 քոլեջների հետ կնքված համագործակցության պայմանագրի շրջանակում լավագույն սովորողները կարող են ուսումը շարունակել ՀՊՏՀ-ում:

Հավաքագման կիրառվող մեխանիզմների ազդեցությունը դիմորդների մասնագիտական կողմնորոշման վրա և դրանց արդյունավետությունը համալսարանը դեռևս չի գնահատում:

ՀՊՏՀ-ում բակալավրատի առկա ուսումնառության համակարգի ուսանողների ընդունելության և մրցույթի կազմակերպման գործընթացներն իրականացվում են ՀՀ ԿԳՆ-ի կողմից մշակված դիմորդների ընդունելության կարգերին համապատասխան: Հեռակա ուսուցման համակարգում ուսանողների համալրումը իրականացվում է ՀՊՏՀ-ի կողմից կազմակերպված ընդունելության քննությունների արդյունքների հիման վրա: Մագիստրատուրայում ընդունելության ավելի բարդ համակարգ ունի. առաջին փուլում ընդունվում են ՀՊՏՀ –ի տվյալ տարվա բակալավրիատի շրջանավարտները, երկրորդ փուլում նախատեսված է միայն վճարովի համակարգում ընդունելություն պետական այլ համալսարանների շրջանավարտների համար, իսկ երրորդ փուլը պարտադիր զինվորական ծառայությունը ավարտած թեկնածուների համար է:

4.2 ՄՈՒՀ-ը որդեգրել է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀՊՏՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականությունը բացակայում է և ուսանողների կարիքների վերհանման հստակ ընթացակարգ մշակված չէ, սակայն այդ ուղղությամբ աշխատանքներ տարվում են: Համալսարանում ուսանողների կրթական կարիքների վերհանման համար օգտագործվում ինչպես գրավոր հարցումներ, այնպես էլ տարբեր հանդիպումներ: Դասավանդման որակը և արդյունավետությունը գնահատելու համար մշակված է անկետա: Ուսանողների կարիքների վեր հանմանն են ուղղված ամեն ուրբաթ տեղի ունեցող ֆակուլտետների դեկանների կամ նրանց տեղակալների հանդիպումները խմբերի ավագների և կուրսղեկների հետ: Ոչ հստակ ժամանակացույցով և պարբերականությամբ հանդիպումներ են տեղի ունենում ռեկտորի կամ վարչական մասի ներկայացուցիչների հետ:

Փորձագիտական այցի ընթացքում հանդիպումների մասնակից ուսանողները և դեկանները կարևորեցին նշված մեխանիզմների գոյությունը, սակայն շատ քիչ փաստեր կարողացան ներկայացնել՝ ցուցադրելու դրանց արդյունավետությունը:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքներ կազմակերպելու և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

ՀՊՏՀ-ում լրացուցիչ պարապմունք է դիտվում յուրաքանչյուր քննությունից առաջ կազմակերպվող կոնսուլտացիոն ժամը, իսկ խորհրդատվություն՝ բակալավրիատում ամփոփիչ ատեստավորումից առաջ ուսանողների համար կազմակերպվող ակնարկային դասախոսությունները: Որպես լրացուցիչ պարապմունքներ են դիտարկվում նաև մագիստրատուրայի ուսանողների համար միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ կազմակերպվող հանդիպում-սեմինարները և հրավիրված թեմատիկ դասախոսությունները: Տվյալները ցույց են տալիս ծառայություններին ուսանողների մասնակցության բարձր տոկոս (89%), ինչպես նաև բարձր մակարդակի բավարարվածություն (80%):

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ բացակայում են լրացուցիչ պարապմունքների իրականացման կարգը, թեմատիկան և ժամանակացույցերը: Մշակված չեն այն մեխանիզմները, որոնց միջոցով հնարավոր է գնահատել կրթական ծառայությունների որակի բարելավմանն ուղղված խորհրդատվությունների և լրացուցիչ պարապմունքների արդյունավետությունը:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց՝ ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով:

Ուսանողներն իրենց հուզող հարցերով ու խնդիրներով, բանավոր և գրավոր կարգով դիմում են ֆակուլտետների դեկաններին: Համալսարանում պարբերաբար կազմակերպվում են ուսանողների հանդիպումներ վարչականաշխատակազմի (ռեկտոր, պրոռեկտորներ և այլն) ներկայացուցիչների հետ: Չնայած վարչական անձնակազմին դիմելու գործընթացը կանոնակարգված չէ, և բացակայում են ժամանակացույցերը, սակայն ուսանողները գտնում են, որ իրենք խնդիրներ չեն ունենում այդ հարցում: Համեմատաբար բարձր է ուսանողների տոկոսը (75%), ովքեր օգտվում են վարչական ծառայությունների աջակցության:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստելու և մասնագիտական աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացմանն աջակցելու նպատակով ՀՊՏՀ-ում 2008 թ-ից գործում է կարիերայի կենտրոնը, որը 2011թ-ից վերանվանվելէ «Մարքեթինգի և կարիերայի կենտրոն»: Վերջինս փորձում է ապահովել համալսարանի ուսանողների և շրջանավարտների շարժունությունը, միջազգայնացումը, կրթությունը շարունակելու և կարիերայի զարգացման հնարավորությունները:

Կենտրոնը ձևավորել է վերջին երեք տարիների շրջանավարտների վերաբերյալ տեղեկատվական բազա, ձգտում է ընդլայնել այն՝ ընդգրկելով նախորդ տարիների ավարտածների մասին տեղեկատվություն՝ նպատակ ունենալով օժանդակել վերջիններիս աշխատանք գտնելու հարցում:

Բուհի ուսանողների համար կենտրոնը կազմակերպում է կլոր սեղան-քննարկումներ, ուսումնական ծրագրով չնախատեսված պրակտիկաներ, ինթերնշիփեր, հանդիպումներ գործատուների հետ, առաջարկում է ուսումնական ծրագրով նախատեսված պրակտիկա գործընկեր կազմակերպություններում, ուսանողներին և շրջանավարտներին պարբերաբար տեղեկացնում է թափուր աշխատատեղերի մասին: Սակայն հստակ չէ, թե ինչ մեխանիզմներ են կիրառվում շրջանավարտների զբաղվածությանը նպաստելու և նրանց հետ կայուն հետադարձ կապեր ձևավորելու, այդ կապերի արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ:

Համալսարանը կարևորում է բուհ-գործատու սերտ համագործակցությունը աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագետներ պատրաստման գործընթացում: ՀՊՏՀ-ն դա իրականացնում է գործատուների հետ համատեղ մշակելով մագիստրոսական ծրագրեր և գործատուներին ընդգրկելով դասավանդման գործընթացում: Վերջինիս դրական արդյունքն է համապատասխան պետական կառուցներում համալսարանի լավագույն շրջանավարտների աշխատանքի ընդունվելը:

4.6 ՄՈՒՀ-ն աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Համալսարանում 2007թ.-ից գործում է ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ), որի աշխատանքները կարգավորվում է ՈՒԳԸ կանոնադրությամբ: ՈՒԳԸ-ի հիմնական գործունեության մաս է կազմում ամենամյա ուսանողական գիտաժողովների անցկացումը, որն իրականացվում է փուլերով՝ ամբիոնային, ֆակուլտետային և համալսարանական: Գիտական աշխատանքները տպագրվում են հոդվածների և թեզիսների տեսքով:

ՀՊՏՀ-ում գործընթացներ են սկսվել ուսանողներին հետազոտական ծրագրերում ընդգրկման ուղղությամբ. մագիստրանտները մրցութային կարգով հնարավորություն ունեն ընդգրկվելու արդեն երկու տարի ստեղծված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ծրագրերում, իսկ նորաստեղծ գիտաուսումնական խմբերում հնարավորություն կընձեռնվի ընդգրկվելու ասպիրանտներին, մագիստրանտներին և բակալավրի բարձր կուրսի ուսանողներին: Մագիստրոսական կրթական ծրագրում հետազոտական բաղադրիչ է պարունակում թեզերի մի մասը, և պահանջ է դրվել պարտադիր հետազոտության իրականացման վերաբերյալ: Հետազոտության որոշ տարրեր առկա են բակալավրի մի շարք դասընթացների անհատական աշխատանքներում:

Համալսարանը կարևորելով կրթական և գիտական գործունեության բարձր որակի ապահովումը՝ դրանց ինտեգրման և փոխհարստացման ճանապարհով, այնուամենայնիվ դեռ չի լուծել «ՀՊՏՀ 2012-2017թթ. գիտահետազոտական և նորաստեղծ գործունեության

զարգացման» հայեցակարգում նախատեսված որոշ խնդիրներ, ինչպես օրինակ. « ... մասնագետների պատրաստման որակի բարձրացում հետազոտություններում ներգրավելով դասախոսներին և ուսանողներին սկսած բակալավրիատի 1-ին կուրսից, ուսանողների մեծ մասին գիտահետազոտական և նորաստեղծական հիմնական հմտություններով օժտում ...» և այլն:

Համալսարանում մեծաթիվ ուսանողների գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու գործընթացը համակարգված բնույթ չի կրում: Դեռևս ցածր է և գնալով պակասում է ՈՒԳԸ-ի աշխատանքներին մասնակցող ուսանողների բաժինը (2011թ. կազմել է առկա ուսուցման ուսանողների 1,7 %-ը և բոլոր ուսանողների 0,9 %-ը, իսկ 2012 թ-ին՝ այդ թվերը կազմել են համապատասխանաբար 1,2 % և 0,7 %): Մշակման փուլում է ՈՒԳԸ նստաշրջաններին ուսանողի մասնակցության գնահատման և խրախուսման համակարգը:

Խնդիրներ կան ՈՒԳԸ նստաշրջանների վերաբերյալ մասնաճյուղերի ուսանողներին տեղեկացնելու և ներգրավումը ապահովելու հարցում: Գյումրու մասնաճյուղում 2014թ. ապրիլի 1-ից մեկնարկված ներբուհական 2 դրամաշնորհային ծրագրերում ընդգրկված են 3 ուսանող:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ուսանողների իրավունքների պաշտպանության և այլ խնդիրների լուծման համար ՀՊՏՀ-ում գործում է Ուսանողական խորհուրդ (ՈՒԽ), որը ինքնակառավարվող, ընտրովի ներկայացուցչական մարմին է: Այն գործում է համաձայն իր կանոնադրության: 2001թ. ստեղծվել է «Էկոնոմ +» ուսանողական ամսաթերթը, որն իր գործունեության նպատակն է համարում ուսանողների հիմնախնդիրների բարձրաձայնումը:

Ուսանողները կարող են ծանոթանալ իրենց իրավունքներին և պարտականություններին համալսարանի կողմից իրենց հետ կնքվող պայմանագրերից, ինչպես նաև 2013թ. լույս տեսած և կայքում տեղադրված «Ուսանողի ուղեցույցից»:

Ուսանողների բողոքների և խորհրդի կողմից դրանց լուծման վիճակագրություն չի պահվում. հանդիպման մասնակիցները ներկայացրեցին, որ դրանք լուծվել են բանավոր պայմանավորվածությունների միջոցով: Ուսանողների՝ ուսանողական խորհրդի աշխատանքով բավարարվածությունը բավական ցածր է. հարցված ուսանողների 44%-ն է բավարարված կառույցի աշխատանքով: Հստակ չեն այն մեխանիզմները, որոնցով պաշտպանվում են օտարերկրացի ուսանողների իրավունքները:

Ուսանողները նշեցին, որ բացի ՈՒԽ-ից իրենց իրավունքների պաշտպանության հարցում ստանում են օժանդակություն դեկաններից, ամբիոնների վարիչներից: Նրանք տեղեկացված և ընդհանուր առումով բավարարված են գնահատականի բողոքարկման գործընթացից, որն իրականացվում է հստակ ընթացակարգով:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և մատուցվող այլ ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

2013թ. մշակվել և հաստատվել է «Շրջանավարտների հետազոտում. համալսարանի փորձի և հեռանկարների գնահատում» հարցաթերթիկը, որը նախատեսվում է լրացնել յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին: Դրանում ներառված հարցերը թույլ են տալու վերհանել, թե որքանով են դասավանդման և ուսումնառության մեթոդները նպաստում գիտելիքի, հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը:

Համալսարանում ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման համար նախատեսում է նաև անցկացնել շրջանավարտների հարցում՝ «Հայաստանի բուհերի շրջանավարտների ծառայողունակության բարձրացման և մարդկային կապիտալի գնահատման բարձրագույն կրթության ցանց» ծրագրի շրջանակներում:

Համալսարանում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ օժանդակ ծառայությունների մշտադիտարկման, գնահատման և որակի ապահովման մեխանիզմները դեռևս մշակման փուլում են:

Դատողություններ

ՀՊՏՀ-ում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմները առկա իրավիճակում դեռևս ապահովում են դիմորդների մասնագիտական կողմնորոշումը և ուսանողների համակազմի կայուն համալրումը: Այն մոտեցումը, որ համալսարանը մագիստրատուրայի ընդունելության պրոցեսում նախապատվություն է տալիս իր շրջանավարտներին և մյուս համալսարանների ուսանողներին միայն վճարովի կրթություն է տրամադրում, հակասում է ուսանողների հավասար հնարավորություններ ունենալու սկզբունքին և խոչընդոտում է նրանց շարժունությանը: Բոլոնիայի սկզբունքները խրախուսում են ուսանողներին փոխել բուհերը և մասնագիտությունները, քանի որ դա տալիս է բազմաթիվ առավելություններ: Շարժունությանը նպաստելը համալսարանի համար կարող է դառնալ նաև պաշտպանության մի մեթոդ ժողովրդագրական փոփոխությունների հետևանքով առաջացած ուսանողների թվի անկման դեմ:

ՀՊՏՀ-ում ուսանողների կրթական կարիքների վերհանման ուղղությամբ իրականացվող միջոցառումները բավարար արդյունավետ չեն, ինչը հաստատվեց փորձագիտական այցի ընթացքում ուսանողների կողմից բազմաթիվ կարիքների ներկայացումով: Ուսանողներին ընձեռնվում են հնարավորություններ, որպեսզի նրանք ներկայացնեն իրենց ընդհանուր խնդիրները, իսկ համակարգը, որ պետք է ուղղված լինի յուրաքանչյուր ուսանողին՝ թերի է: Ուսանողների կարիքների բացահայտման համակարգային մոտեցման բացակայությունը պետք է դիտարկվի որպես համալսարանի գործունեության թույլ կողմ, ինչը խանգարում է ձևավորել արդյունավետ գիտական, վարչական և սոցիալական աջակցության համակարգ ուսանողների համար: Ուսանողների կարիքների ուսումնասիրման համար նախատեսված համակարգը պետք է մշակել ուսանողական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ:

ՀՊՏՀ-ում առկա ուսանողների համար գործող լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվությունների համակարգը այս վիճակով բավարում է ներքին շահակիցներին, սակայն գործընթացների արդյունավետության գնահատման հարցը բաց է մնացել: Համալսարանը պետք է կարևորի դասախոսի և ուսանողի միջև անմիջական կրթական, այդ թվում, «դասից դուրս» շփումը: Համալսարանը պետք է կազմակերպի ակնարկային դասեր այն ուսանողների համար, որոնք ջանում են վաստակել ավելի բարձր միավորներ և լրացուցիչ դասեր ավելի թույլ ուսանողների համար:

Համալսարանի վարչական աշխատակազմն իրականացնում է ուսանողների օժանդակման և ուղղորդման գործընթացներ: Վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգի և ժամանակացույցերի մշակումը հնարավորություն կտա լավագույնս համակարգել ուսանողների կարիքները և օպերատիվ լուծումներ գտնել:

Համալսարանի Մարքեթինգի և կարիերայի կենտրոնը գործում է բավական ավանդական ձևով. այն հանդես է գալիս որպես ուսանողների / շրջանավարտների և գործատուների միջև կապի օղակ: Կենտրոնը սեփական ուսումնասիրություններ չի կատարում աշխատաշուկայի կարիքների վերաբերյալ, իսկ թափուր աշխատատեղերի մասին տեղեկատվությունը ամբողջական չէ:

Ըստ համալսարանի ղեկավարների՝ ՈՒԳԸ աշխատանքներում մասնակիցների թվի կայուն նվազման հիմնական պատճառներն են ամբիոնների մի մասի պասիվ մասնակցությունը և ուսանողների հիասթափությունը նախկին տարիներին կազմակերպված ՈՒԳԸ նստաշրջաններից: Ակնհայտ է, որ կիրառվող համակարգը էական փոփոխությունների կարիք ունի: Կազմակերպելով ուսանողական ակադեմիական շարժում ՈՒԳԸ շրջանակում, ինչպես նաև «Ամբերդ»-ի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունը լավագույն լուծումը չէ: Մագիստրոսական թեզերում հետազոտական բաղադրիչի պարտադիր պահանջի ներդրումը, դրա հետևողական կիրառումը և խրախուսումը ավելի հեռանկարային կարող է լինել:

Իրավական կանոնակարգերը սահմանում են ՀՊՏՀ ուսանողների իրավունքները, սակայն ավելի կարևոր խնդիր է այդ կանոնակարգերի կիրառման փորձը: Ուսանողների իրավունքներով և բողոքներով զբաղվում է ՈՒԽ-ը: Չի կարելի պնդել, որ համալսարանը ունի համապարփակ համակարգ, որպեսզի պաշտպանի համալսարանի մակարդակով սահմանված և ուսանողների անհատական իրավունքները: Չկա հատուկ նշանակված վստահված անձ, որին ուսանողները կարող են դիմել իրենց բողոքներով: Օտարերկրյա ուսանողների շահերի պաշտպանության ոլորտում հստակ լուծումների բացակայությունը խոչընդոտ կարող է հանդիսանալ օտարերկրյա համալսարանների հետ հետագա համագործակցության զարգացման համար: Ավելին, այն կարող է սահմանափակել օտարերկրյա ուսանողների հոսքը և օտարերկրյա եկամուտը:

ՀՊՏՀ-ում թեև առկա են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմների տարբեր, դրանց հետագա համակարգումը և զարգացումը թույլ կտա օբյեկտիվ և վստահելի տեղեկատվություն ունենալ ՄՈՒՀ-ի հիմնական շահակիցների կարիքների բավարարման մակարդակի և նրանց բավարարվածության աստիճանի մասին:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4 -ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1. ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) ընտրությունը կատարվում է ԿԳ նախարարության մշակած մրցութային ընտրության և պաշտոնների տեղակալման օրինակելի կարգի հիման վրա, որտեղ սահմանված են գիտամանկավարժական կազմի ձևավորման, առաջքաշման չափանիշները, մրցույթների անցկացման, ընտրության և պաշտոնների տեղակալման պայմաններն ու ընթացակարգերը: Կադրային քաղաքականության հիմքում ընկած է ընտրության ոչ մասնավորեցված չափանիշներ, որոնք հաշվի են առնում դասախոսների ընդհանուր մանկավարժական, գիտական և կազմակերպչական ձեռքբերումները:

ՈՒսումնաօժանդակ կազմի ընտրությունն իրականացվում է ամբիոնի ղեկավարության կողմից՝ ելնելով այդ ամբիոնում իրականացվող կրթական ծրագրերի առանձնահատկություններից: Ընտրությունը հիմնականում կատարվում է լավագույն շրջանավարտների թվից, ովքեր ավարտել են ամբիոնի կողմից թողարկվող կամ հարակից մասնագիտության բակալավրիական կամ մագիստրոսական ծրագիրը:

Համալսարանում ներկայումս աշխատում են 515 դասախոս, որի 77% հիմնական են: Հիմնական դասախոսների 67% ունեն գիտական աստիճաններ, իսկ 52% ունեն գիտական կոչումներ: Դասավանդող կազմի մոտավորապես 33% չունեն գիտական աստիճան կամ կոչում: Կան ամբիոններ, որտեղ չեն պահպանվում 3 գիտական աստիճան ունեցող դասախոսների թվի վերաբերյալ լիցենզիայի պահանջները: Գյումրու մասնաճյուղում դասավանդողների ընդամենը 52% ունեն գիտական աստիճան, որը նույնպես լիցենզիայի պահանջների սահմանին մոտ է:

Գիտական որակավորման բարձրացման խթանման նպատակով համալսարանում սահմանված է ՊԴ անձնակազմի աշխատավարձերի շերտավորում՝ կախված գիտական աստիճանից և կոչումից: Վերջին տարիներին բուհում կիրառվում է հավելավճարի կարգը, որը հաստատվում է գիտական խորհրդի նիստի որոշումներով և հիմնվում է համալսարանի տնտեսումների վրա:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Համալսարանն իր կրթական ծրագրերի համար չի սահմանել ՊԴԿ մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ և դրանց գնահատման որևէ մեխանիզմ:

Տրամադրված ՄԿԾ-երի, ամբիոններ առարկայական ծրագրերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ միայն մագիստրոսական կրթության «Մարքեթինգ» մասնագիտության կրթական ծրագրերի հայեցակարգերում են առկա պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ, որոնք սակայն հետագա հստակեցման կարիք ունեն:

Բուհի ղեկավարությունը գտնում է, որ ուսանողների շրջանում կազմակերպվող հարցումները որոշակի պատկեր են տալիս դասախոսական կազմի մասնագիտական որակների մասին, որ նրանց ներկայացվող պահանջները գնալով ավելանում են, և կազմի երիտասարդացման խնդիր կա համալսարանում:

5.3. ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Չնայած պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակի, ինչպես նաև նրանց աշխատանքի գնահատման գործընթացի արդյունավետությունը գնահատող համալսարանում մշակված մեխանիզմների ու գործիքների առկայությանը, համալսարանում իրականացվում են դասախոսների գնահատման միայն առանձին գործընթացներ:

Պրոֆեսորադասախոսական գործունեության որակը գնահատելու համար հիմնականում կարևորում է ուսանողների շրջանում հարցումների անցկացումը, ինչպես նաև դասալսումների պարբերաբար կազմակերպումը: Հանդիպումների ժամանակ դասախոսները հաստատեցին, որ վերջին 5 տարում իրենք 2 անգամ գնահատվել են ուսանողական հարցումների միջոցով, իսկ դասալսումների արդյունավետությունը գնահատելու պահանջներ և ընթացակարգեր մշակված չեն:

2008թ. մշակվել է մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը, որի համաձայն նախատեսվել է պրոֆեսորադասախոսական համակազմի որակի գնահատման բազմագործոնային համակարգի կիրառում: Սակայն այդ համակարգը համալսարանում չի կիրառվում, քանի որ, ըստ ՀՊՏՀ ռեկտորի, կիրառման մեջ առկա են դժվարություններ և անհրաժեշտություն է առաջացել խրախուսման համակարգը տարանջատելու:

5.4. Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում, բացահայտված կարիքներին համապատասխան, ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Համալսարանում բացակայում են դասախոսական կազմի կարիքների գնահատման հստակ մեխանիզմները, որոնց հիման վրա կարելի կլիներ ավելի նպատակային դարձնել նրանց վերապատրաստման, որակավորման բարձրացման աշխատանքները:

2006-2011թթ. ՀՊՏՀ շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի կողմից կազմակերպվել են դասավանդողների ներքին վերապատրաստումներ ինֆորմատիկայից և օտար լեզվից: Տրվել են վկայագրեր: Սակայն դա հիմնված չի եղել դասախոսների կարիքների վերլուծության վրա, և գործընթացների արդյունավետությունը չի գնահատվել: 2011թ.-ից դասավանդողների վերապատրաստումները թողնվել են անհատական նախաձեռնության վրա, և Կենտրոնն այլևս դրանով չի զբաղվում: Դասախոսները իրենք են արտասահմանում մասնակիորեն լուծում վերապատրաստման սեփական խնդիրները. համալսարանի բյուջեից դասավանդողների վերապատրաստումների համար միջոցներ չեն տրամադրվում:

2012-ից գործողության մեջ է դրվել «ՀՊՏՀ ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը», որը աջակցություն է ցուցաբերում ՊԴԿ գիտական որակավորման բարձրացմանը: Այս նպատակի իրագործմանը նպաստում է նաև 2013 թ.-ին ստեղծված «Ամբերդ» գիտահետազոտական կենտրոնի գործունեությունը:

Հանդիպումների ժամանակ անձնակազմի մի մասը (հիմնականում տարեց դասախոսները) բացասական մոտեցում ցուցաբերեց դասավանդման և ուսման որակի ապահովման ոլորտում նորարարություններին և ցուցադրեց փոփոխություններին հարմարվելու ցանկության բացակայություն:

5.5. ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի՝ համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

ՀՊՏՀ-ի գիտամանկավարժական կազմի ձևավորման կարգը հիմնականում նպաստում է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող դասախոսական կազմի ընտրությանը և պահպանմանը: Ներկայիս կազմը ապահովում է համալսարանի մրցակցային շահեկան դիրքը կրթական ծառայությունների դաշտում: Համալսարանը կարևորում է հիմնական և համատեղությամբ աշխատող պրոֆեսորադասախոսական կազմի կայունությունն ապահովող քաղաքականությունը, որը ձգտում է իրականացնել համապատասխան աշխատանքային միջավայրի և պայմանների ստեղծմամբ: Ներկայումս այդ կայունությունը հիմնված է ֆինանսական խրախուսման մեխանիզմների ներդրման վրա. աշխատանքի վարձատրության չափը բարձր է և դինամիկ աճում է: ՀՊՏՀ-ում դասավանդում են նաև փորձառու մասնագետներ պետական կառավարման կառույցներից:

ՀՊՏՀ-ում կարևորվում է հատկապես երիտասարդ կադրերի ներգրավումը ուսումնական պրոցեսում. դասախոսական կազմը պարբերաբար համալրվում է երիտասարդ կադրերով, թեև որոշ ֆակուլտետներում երիտասարդացման խնդիր կա: Գյումրու մասնաճյուղը իր գործունեության ընթացքում կարողացել է կադրեր ներգրավել սեփական շրջանավարտների կազմից, իսկ Եղեգնաձորի մասնաճյուղի դասախոսները հիմնականում մեկնում են Երևանից:

Ուսանող/դասախոս հարաբերակցության տեսակետից իրավիճակը բարվոք է. 14.3՝ Երևանում, 14՝ Գյումրու մասնաճյուղում և 11.3՝ Եղեգնաձորի մասնաճյուղում:

5.6. ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՏՀ փորձում է ապահովել պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացը Համալսարանում մշակված և գործող ՀՊՏՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման կարգի, որոշ խրախուսման ընթացակարգերի միջոցով: Դրանցում սահմանված են պաշտոնների տեղակալման և առաջքաշման չափանիշները, հաջորդականությունը, ՊՖԴ կազմի տարակարգերը, ինչպես նաև տվյալ տարակարգերին հավակնելու որակավորման պահանջները: ՀՊՏՀ գիտական խորհրդին կից գործում է համահամալսարանական մրցութային հանձնաժողով, որը համակարգում է ՊՖԴ կազմի մասնագիտական առաջընթացի ընթացակարգերը:

Բուհի դասախոսական կազմի առաջընթացի ցուցանիշների գծապատկերից երևում է դոցենտների թվի աճի տենդենց համալսարանում, միևնույն ժամանակ պրոֆեսորների թվի աճի տեմպերը կայուն նվազում են: Համալսարանը գտնում է, որ դասախոսական կազմի խրախուսման մեխանիզմները ճկուն չեն և դրանց բարելավման կարիք կա:

5.7. ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ՝ ռազմավարական նպատակների իրականացման համար:

ՀՊՏՀ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի հաստիքացուցակի ձևավորումը և աշխատանքային պարտականությունների սահմանումը կանոնակարգված են:

Համալսարանում գտնում են, որ վարչական անձնակազմը լուծում է իր առջև դրված հիմնական խնդիրները և ապահովում է արդյունավետ կառավարում, չնայած որ այդ ուղղությամբ որևէ վերլուծության արդյունքներ փորձագիտական խմբին հասանելի չէին: Վարչական և ուսումնաօժանդակ կազմի ներկայացուցիչների համար իրականացվել են վերապատրաստումներ և ատեստավորում: Մյուս կողմից էլ, բուհն ընդունում է, որ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմի գործունեության որակն ապահովող

հստակ մեխանիզմներ և գործիքներ մշակված չեն, բացակայում են նաև հաստիքների ձևավորման մեխանիզմներն ու նորմատիվները:

Դատողություններ

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրության հիմքում ընկած են համալսարանի ՄԿԾ-երն ու դասընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում ունեցող կազմի ձևավորման և դրա նորացման նպատակները: Տարածաշրջանի լավագույն տնտեսագիտական համալսարան դառնալու նպատակին կարող է խոչընդոտել այն, որ համալսարանը չի հստակեցրել ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները, այն մարդկանց կոմպետենցիաները, ովքեր կյանքի պետք է կոչեն կրթական ծրագրի խնդիրները ու ապահովեն դասավանդման բարձր որակ:

Դասախոսական կազմի գործունեությունը գնահատող ուսանողական հարցումների արդյունքների վերլուծությունը և բարելավման միջոցառումների իրականացումը, ընդհանուր առմամբ, նպաստում են դասախոսների աշխատանքի որակի և արդյունավետության բարձրացմանը: Սակայն հարցերի բնույթը և հարցման միջոցով ստացված տվյալները համարժեք չեն արտացոլում դասախոսների մասնագիտական և մանկավարժական հմտությունները: Ավելի օգտակար կարող էին լինել դասալսումների մասնագիտական վերլուծությունները, սակայն դրանք էլ կանոնակարգված չեն: Այդ պատճառով էլ համալսարանի կողմից որպես գնահատման ձևեր կիրառված ուսանողների շրջանում իրականացված հարցումները և դասալսումները կարելի է համարել միայն առանձին գործընթացներ, սակայն ոչ համակարգային մոտեցում՝ խնդիրը լուծելու համար:

Չնայած համալսարանում առկա են դասախոսների կատարելագործման որոշ միջոցառումներ, սակայն դրանք չեն իրականացվում ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան: Ոչ ստի հնարավոր չէ պարզել նաև այդ միջոցառումների արդյունավետությունը: Պարզ չէ, թե ինչպես են բացահայտվում կատարելագործման վերաբերյալ կարիքները, ինչ մեխանիզմներով է դասավանդման փորձը փոխանցվում երիտասարդ կադրերին: Բացի այն, որ արտերկրում վերապատրաստումները անկանոն են, չկան վերապատրաստվածների փորձի փոխանակման հաստատված մեխանիզմներ:

ՀՊՏՀ-ի ներկայիս դասախոսական կազմը ապահովում է կրթական ծրագրերի բավարար իրականացումը և համալսարանի շահեկան դիրքը ոլորտի մասնագիտական հաստատությունների շարքում: Այդ տեսակետից համալսարանը շահակիցների կողմից ընկալվում է որպես ավելի պրակտիկ կրթություն տրամադրող հաստատություն, որը պայմանավորված է ուսումնական գործընթացներին գործատուների մասնակի ներգրավվածությամբ: Դասախոսական կազմի և վարչական աշխատողների «ծերացման» դեմ պայքարելու և երիտասարդացման միտումները խթանելու համար բուհում պետք է կիրառել հատուկ քաղաքականություն, խթանել երիտասարդ կադրերին, ներդնել դասախոսական կազմի գնահատման արդյունավետ համակարգ:

ՀՊՏՀ-ը փորձում է իր ռազմավարական նպատակների իրականացման համար ձևավորել անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ սահմանված կանոնակարգերի կիրառման միջոցով: Սակայն աշխատակազմի ձևավորման նորմատիվների, նրանց գործունեության գնահատման հստակ մեխանիզմների և

գործիքների բացակայության պայմաններում բուհի համար անհնարին կլինի վերլուծել և գնահատել կատարվող աշխատանքի արդյունավետությունը:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 1-ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

ՀՊՏՀ առաջնահերթ խնդիրներից է Համալսարանը դարձնել հետազոտական ԲՈՒՀ: Համալսարանի ծառայությունների որակի բարձրացման համար կարևորվում է ՊԴ կազմի որակի բարձրացումը, որը ՀՊՏՀ ղեկավարությունը տեսնում է հետազոտությունների ծավալների ընդլայնման և դրանցում ընդգրկված դասախոսների քանակի ավելացման մեջ:

Հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն ՀՊՏՀ արտահայտել է «ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգ» փաստաթղթում: Վերջինիս միջոցով հիմնավորված ռազմավարության նպատակն է ընդլայնել հետազոտական աշխատանքները ՀՊՏՀ-ում, որի իրականացման կառուցակարգերը ձևակերպված են 17 ռազմավարական ուղղություններում:

Համալսարանում քայլեր են ձեռնարկվել հետազոտությունների ծավալների աճի ուղղությամբ: Այս նպատակով համալսարանի բյուջեից 100 մլն դրամ է հատկացված հետազոտություններին: 2013թ. 90 դասախոսներ ընդգրկված են եղել հետազոտական գործունեության տարբեր ուղղություններում: Գյումրու մասնաճյուղում նույնպես ֆինանսավորվում է մեկ հետազոտական թեմա: Բուհի բյուջեի 3,2%-ը (2,7 մլրդ. դրամից) տրամադրվել է հետազոտական աշխատանքների աշխուժացմանն ու կազմակերպմանը: ՀՊՏՀ ստացել է որոշ դրամաշնորհներ պետական բյուջեից, սակայն դրանց քանակը քիչ է:

ՀՊՏՀ խորհրդի հավանությամբ 2013թ. հիմնադրված «Ամբերդ» հետազոտական կենտրոնի առաքելությունը ՀՊՏՀ-ում գիտահետազոտական, գիտակրթական և գիտամեթոդական գործունեության զարգացումն է: Բացի այդ գիտահետազոտական որոշակի գործունեություն իրականացվում է ամբիոններում:

ՀՊՏՀ-ում, ինչպես նաև Գյումրու և Եղեգնաձորի մասնաճյուղերում, կազմակերպվում են տարեկան գիտական նստաշրջաններ, հանրապետական և միջազգային գիտաժողովներ, գիտական սեմինարներ:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

ՀՊՏՀ-ում բացակայում է հետազոտության ոլորտում Համալսարանի հետաքրքրություններն ու հավակնությունները արտահայտող երկարաժամկետ ռազմավարություն, իսկ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի իրականացման հիմք է «ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգը»:

ՀՊՏՀ-ում իրականացվող հետազոտությունների ուղղությունները ներկայացված են ամբիոնների համար նախանշված երկարաժամկետ գիտահետազոտական թեմաների ցանկում: Կարճաժամկետ բնույթ ունեն 2013թ. հաստատված անհատական, ամբիոնային, միջամբիոնային և ստեղծագործական խմբի հիմունքներով ՀՊՏՀ նախաձեռնությամբ և ֆինանսավորմամբ իրականացվող ներհամալսարանական գիտական դրամաշնորհային 19 ծրագրերը: 2013թ.-ից «Ամբերդ» հետազոտական կենտրոնում կարճաժամկետ հետազոտական նախագծեր են իրականացվում 15 ուղղություններով:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

ՀՊՏՀ ռեկտորի տարեկան հաշվետվություններում առաջարկում են գիտական գործունեության զարգացման համար նախատեսված ուղեցույցներ, որոնք բուհի կողմից դիտարկվում են որպես հետազոտությունների իրականացման քաղաքականության ասպեկտներ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի 2012 թ.-ի մայիսի 31-ի թիվ 11 որոշման համաձայն՝ 2012թ. սեպտեմբերի 1-ից գործողության մեջ է դրվել ներհամալսարանական գիտական դրամաշնորհների տրամադրման կարգը: Կարգում, մասնավորապես, ներկայացված են դրամաշնորհների մրցույթի կազմակերպման ընթացակարգը, մրցույթի մասնակիցներին, նախագծերին և հայտերին ներկայացվող պահանջները, հայտերի գնահատման չափանիշները, մրցութային հանձնաժողովի ձևավորման և դրամաշնորհների հայցման մրցույթի ամփոփման կարգերը:

Գիտահետազոտական աշխատանքներն ակտիվացնելու և դրանք պահանջարկված դարձնելու համար ՀՊՏՀ-ն կարևորում է մասնավոր հատվածի հետ համագործակցությունը՝ գիտական արդյունքների առևտրայնացման նպատակով: ՀՊՏՀ 2012-2017թթ. գիտահետազոտական և նորաստեղծական աշխատանքների զարգացման հայեցակարգի համաձայն՝ մասնավոր հատվածի հետ համագործակցությանն ուղղված առաջին քայլը պետք է լիներ բիզնես-ինկուբատորների ստեղծումը:

ՀՊՏՀ-ում իրականացված հետազոտությունների արդյունքում առայժմ գիտական արդյունքների առևտրայնացման ոչ մի օրինակ չկա, իսկ հայեցակարգով նախատեսված բիզնես-ինկուբատորների ստեղծումը չի իրականացվել:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

ՀՊՏՀ ռազմավարական նպատակներից է խթանել համալսարանի հետազոտական գործունեության միջազգայնացման գործընթացները և ապահովել համալսարանի ինտեգրումը Եվրոպայի, ԱՊՀ և այլ հետազոտական տարածքներին:

ՀՊՏՀ-ն երկկողմ համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի Չեխիայի, Սլովակիայի, Կիպրոսի, Լատվիայի, Ռուսաստանի Դաշնության, Ուկրաինայի, Վրաստանի և այլ երկրների բուհերի ու գիտական կազմակերպությունների հետ: Սակայն բացակայում են վերլուծություններ, թե այդ համագործակցության արդյունքում քանի համատեղ թեմաներ են իրականացվել, դրանցում ՊԴ կազմից և ուսանողներից քանի հոգի

են ընդգրկված եղել, քանի համատեղ գիտական հոդվածներ են հրատարակվել և այլն: Համալսարանը չի մասնակցում արտասահմանյան հետազոտական կոնսորցիումներին և չի ստանում արտասահմանյան հետազոտական դրամաշնորհներ:

Համալսարանի հետազոտական ձեռքբերումների մեծ մասը այս պահին պայմանավորված է ներբուհական դրամաշնորհային ծրագրերի իրականացման և «Ամբերդ» կենտրոնում կատարվող աշխատանքներով: ՀՊՏՀ աշխատակիցների սակավաթիվ հոդվածները տպագրված են միջազգային ցածր վարկանիշային ինդեքսները ունեցող գիտական պարբերականներում: Դրանք փոքրաթիվ ամսագրեր են, որոնք հասանելի չեն մասնագետներին նույնիսկ Եվրոպայում: 2009 թվականից ի վեր, ոչ մի մարդ ՀՊՏՀ – ից չի հրապարակել ոչ մի հոդված միջազգայնորեն ճանաչված տնտեսագիտական հանդեսներում:

Չնայած վերևում նշված շուրջ մեկ տասնյակ երկրների հետ գիտական հետազոտությունների երկկողմ պայմանգրերի և համաձայնագրերի առկայությանը, իրականացված հետազոտությունների արդյունքում առայժմ չկա գիտական արդյունքների առևտրայնացման կամ ներդրման ոչ մի օրինակ:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

«ՀՊՏՀ 2012-2017 թվականների գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության զարգացման հայեցակարգում» հետազոտական ոլորտում որպես գերակայություն նշված է կրթական և գիտական գործունեության բարձր որակի ապահովումը՝ դրանց ինտեգրման և փոխհարստացման ճանապարհով:

ՀՊՏՀ դասախոսներն իրենց գիտական աշխատանքների արդյունքները փորձում են կիրառել համալսարանի կրթական ծրագրերում, հատկապես հետազոտական կողմնորոշմամբ մագիստրոսական առարկաների ծրագրերում: Համալսարանի՝ հատկապես մագիստրոսական կրթական ծրագրերում խնդիր է դրվել ավելացնել հետազոտական բաղադրիչի կշիռը, որը պետք է նպաստ ուսանողների գիտահետազոտական աշխատանքների կատարման ունակությունների զարգացմանը:

«Ամբերդ» հետազոտական կենտրոնը համալսարանի կրթական գործընթացների հետ գիտական հետազոտությունների կապի ապահովման և գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավման նպատակների իրականացումն ապահովում է հետազոտական ծրագրերում մագիստրոսների ներգրավմամբ: Մագիստրատուրայի ուսանողներն իրենց գիտամանկավարժական և գիտահետազոտական պրակտիկաների ընթացքում ուսումնասիրում են դասախոսների գիտական աշխատանքները: ՀՊՏՀ ասպիրանտների և հայցորդների ատենախոսությունների թեմաները հիմնականում առնչվում են ամբիոնների գիտական աշխատանքների թեմաներին:

Համալսարանի աշխատակազմի շրջանակներում անցկացված հարցումը ցույց են տալիս, որ ուսանողների մոտ 60% - ը և դասախոսների ավելի քան 70% - ը բավարարված են հետազոտությունների և ուսումնական գործընթացի փոխկապակցումից:

Ուսումնասիրությունները ցուց տվեցին, որ ՀՊՏՀ-ում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցմանը ուղղված գործընթացները հատվածային բնույթ են կրում, դեռևս կանոնակարգված չեն, ցածր է հետազատական գործընթացներում ընդգրկված ուսանողների թիվը: Համալսարանում չի վերլուծվում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմների արդյունավետությունը:

Դատողություններ

Հետազոտությունների ոլորտում համալսարանի հետաքրքրությունների և հավակնությունների բացահայտման մեխանիզմների ստեղծումը կնպաստի «ՀՊՏՀ 2012-2017 թթ. գիտահետազոտական և նորաստեղծ գործունեության զարգացման» հայեցակարգում նախատեսված, սակայն առ այսօր չիրականացված այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են օրինակ երկրի զարգացման գերակայությունների և համաշխարհային զարգացման միտումներին համահունչ ուղղություններով հետազոտությունների ձեռնարկումը, դասախոսների նշանակալի մասի մասնակցության ապահովումը գիտահետազոտական և նորաստեղծական գործունեության մեջ, ուսանողների մեծ մասին գիտահետազոտական և նորաստեղծական հիմնական հմտություններով օժտումը, հետազոտությունների միջազգայնացում և այլն:

Հետազոտությունների ոլորտում ԲՈՒՀ-ի հետաքրքրություններն ու հավակնությունները արտահայտող երկարաժամկետ ռազմավարության մշակումը թույլ կտա միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրերի մշակման և կատարման ժամանակ ընդլայնել միջամբիոնային և միջառարկայական հետազոտությունների ծավալները, ուշադրություն դարձնել հետազոտությունների պատվիրատուների շահերին և հանգեցնել հետազոտությունների արդյունքների առևտրայնացմանը: Նշված առևտրայնացմանն ու հետազոտությունների ծավալների ընդլայնմանը կնպաստի նաև հետազոտությունների իրականացումն ու զարգացումն ապահովող և հետազոտությունների ոլորտում ՄՈՒՀ-ի ռազմավարությունից բխող քաղաքականության հետագա հստակեցումը և մշակումը:

ՀՊՏՀ համաշխարհային մակարդակի հետազոտությունների իրականացման ձգտումը դեռ համահունչ չէ և չի համապատասխանում արտասահմանյան ամսագրերում տպագրված գիտական հոդվածների քանակին: Գիտության միջազգայնացման գործընթացների օժանդակումը և դրա համար նախատեսվող ֆինանսական միջոցների աստիճանաբար մեծացումը կնպաստի Համալսարանի հետազոտական գործունեության մրցունակության բարձրացմանն ու միջազգային հետազոտական տարածքին ինտեգրման խնդիրների լուծմանը: Բազմաթիվ պայմանավորվածությունները արտասահմանյան բուհերի հետ կարելի է դիտարկել ընդամենը որպես սկզբնական քայլ և լուրջ նախապայման միջազգային հետազոտական նախաձեռնություններին ՀՊՏՀ ուսումնառողների և դասավանդողների ներգրավվածությունը ակտիվացնելու ուղղությամբ:

Հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման հատվածային գործընթացները դեռևս չունեն մասսայական բնույթ, և էականորեն չեն ազդում կրթության արդյունավետության վրա և չեն նպաստում հետազոտական ամբողջական կարողությունների ձևավորմանը ուսանողների մոտ: Մագիստրոսական կրթական ծրագրերում գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներգրավման տեսանկյունից ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի վերանայումը կփոխի ծրագրերի որակը, դրանք կդարձնի ավելի մրցունակ և գրավիչ շահեկիցների համար:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 6 -ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

ՓԱՍՏԵՐ

7.1 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

ՀՊՏՀ-ում առկա է ուսումնական միջավայր՝ մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացմանը: Համալսարանում ՄԿԾ-երի իրականացման համար համալսարանն ունի վեց, Գյումրու մասնաճյուղը՝ երկու և Եղեգնաձորի մասնաճյուղ՝ մեկ մասնաշենքեր, լսարանային ֆոնդ, լաբորատորիաներ, համակարգչային լսարաններ, գրադարան, պաշտանական ինտերնետային կայքեր և այլն:

2009թ. գրադարանային ֆոնդը ՀՊՏՀ-ում կազմել է 230.477 կտոր գրականություն, Գյումրու մասնաճյուղում՝ 2746, Եղեգնաձորի մասնաճյուղում՝ 1950: Վերջին տարիներին ավելացել է Երևանյան համալիրի գրադարանում մեկ տարում ավելացած գրքերի քանակը, իսկ մասնաճյուղերում այն նվազել է: Ձևավորման փուլում է էլեկտրոնային գրադարանը: Տարբեր դրամաշնորհային միջոցներով վերանորոգվել և նոր տեխնիկական միջոցներով հագեցած են 10 լսարան և 3 կոնֆերանս-դահլիճ:

Վերջին տարիներին մի շարք բարելավումներ են տեղի ունեցել համալսարանում. քաղաքապետարանի աջակցությամբ վերանորոգվել և բարեկարգ տեսքի է բերվել բակը, համաշխարհային բանկի դրամաշնորհով և քաղաքապետարանի աջակցությամբ փոխվել են պատուհանները և անցկացվել է ջեռուցման նոր համակարգ: Պիլոտային մագիստրոսական ծրագրերի մասնակից գործատուները ներդրումներ են կատարում՝ ձևավորելով մասնագիտական լսարաններ: Ձեռք են բերվել պրոյեկտորներ և նոր համակարգիչներ, իրականացվել են ներքին վերանորոգման աշխատանքներ, լուծվել է ինտերնետ կապի խնդիրը:

ՀՊՏՀ-ի շենքային տարածքները չեն բավարարում ուսանողների ներկայիս քանակին: ՈՒսանողների համար հասանելի չեն մասնագիտական տվյալների բազաները, ձեռք չեն բերվում վիճակագրական վերլուծության ծրագրերի լիցենզավորված փաթեթներ: Առկա է նաև ուսումնական ձեռնարկների, դասագրքերի և էլեկտրոնայի գրականության սղություն: Ընթացքի մեջ են ենթակառուցվածքների բարեկարգման, վերանորոգման աշխատանքները, սակայն առայժմ շենքային տարածքների զգալի մասն արդիականացման անհրաժեշտություն ունեն: Առկա է նաև լսարանների տեխնիկական հագեցման խնդիր, քիչ են տեխնիկապես հագեցած և կահավորված լսարանները, գործող համակարգչային սրահները ծանրաբեռնված են, իսկ տեխնիկան նորացման կարիք ունի: ՀՊՏՀ երևանյան համալիրի և Գյումրու մասնաճյուղի ուսանողները գտնում են, որ ուսումնական խմբերը մեծ են, ինչը ցածրացնում է ուսումնառության արդյունավետությունը:

Համալսարանում ուսումնասիրություններ և վերլուծություններ չեն տարվում պարզելու համար, թե առկա ուսումնական միջավայրը որքանով է բավարարում մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացմանը:

7.2 ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Համալսարանի վերջին հինգ տարիների ֆինանսական մուտքերի վերլուծությունից երևում է, որ ՀՊՏՀ մուտքերն ունեն աճի միտում, ընդ որում՝ աճ է գրանցվել եկամուտների բոլոր աղբյուրների մասով: ՀՊՏՀ ֆինանսական միջոցների մեծ մասը ձևավորվում է վճարովի հիմունքներով սովորող ուսանողների ուսման վճարներից, ապա պետական բյուջեի միջոցներից: Ֆինանսական մուտքերի աճը հիմնականում պայմանավորված է ուսանողների և առաջարկվող մասնագիտությունների թվերի աճով. իր առաջարկներով ներկա պահին համալսարանը ծածկում է տնտեսագիտական մասնագիտությունների գրեթե ողջ դաշտը: Բուհը համարում է, որ վարձավճարները իր տրամադրած կրթության որակի տեսակետից համեմատաբար ցածր են:

ՀՊՏՀ ծախսերի կառուցվածքի պատկերից երևում է, որ ծախսերի դինամիկան տարիների կտրվածքով նույնպես ունի աճման միտում՝ եկամուտներին համապատասխան: Ծախսերի ավելի քան 83%-ը, որ նշված է որպես «ուսումնական ծախսեր» և «ուսումնաօժանդակ ծախսեր», տրվում է որպես աշխատավարձ: Դրական առումով հարկ է նշել, որ 2009թ. հետ համեմատությամբ 2013թ. գրեթե վեցապատիկ աճել են հետազոտությունների վրա կատարվող ծախսերն ու հատկացումները: Գրեթե 2,5 անգամ աճել են նաև սարքավորումների ձեռքբերման վրա կատարված և ուսումնաօժանդակ ծախսերը:

7.3 ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Իր վերլուծության մեջ բուհը հիմնական ուշադրությունը բևեռել է կրթության ֆինանսավորման և կառավարման համակարգի բարեփոխումների հիմնական ուղղություններին, դրանց նպատակային բաշխման և ուսանողներին տրվող ֆինանսական փոխհատուցումների գործընթացներին: Այդ հարցերը միայն ընդհանուր առնչություն ունեն ՄԿԾ-երի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականության հետ և չեն վերլուծում այդ ոլորտում համալսարանի մոտեցումները կամ իրականացվող գործընթացները:

Համալսարանի ղեկավարությունը գտնում է, որ ֆակուլտետների և առանձին կրթական ծրագրերի ֆինանսավորումը ապագայի խնդիր է, իսկ ներկայումս ֆինանսական միջոցների կառավարման և դրանց բաշխման հիմքում տարեկան բյուջեի նախահաշիվն է: Ֆինանսական կառավարումը իրականացնում է ռեկտորը՝ օգտվելով ՀՊՏՀ կանոնադրությամբ նրան տրված իրավունքների սահմաններում:

Բյուջեի ձևավորման կարգը, ֆինանսների բաշխումը, ծախսերի մոնիտորինգը և իրականացման հաշվետվությունը իրականացվում են ըստ բուհի գործունեության ոլորտների և չի կապվում կրթական ծրագրերի նպատակների հետ: Ֆինանսական քաղաքականության արդյունավետությունը գնահատվում գիտական և կառավարման խորհուրդներում ռեկտորի հաշվետվության քննարկման միջոցով:

7.4 ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

ՀՊՏՀ-ում ռեսուրսների ժամանակային բաշխումը նախատեսվում և իրականացվում է տարեկան կտրվածքով: Ուսումնական կարիքների բավարարման և արդյունավետ պլանավորման նպատակով, ռեկտորի հանձնարարականով, բոլոր կառուցվածքային ստորաբաժանումները, ֆակուլտետները, ամբիոնները և մասնաճյուղերը տարեվերջին ներկայացնում են գալիք տարվա ընթացքում անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ցանկը: Վերջինիս հիման վրա կազմվում է գալիք տարվա գնումների պլանը, որում ընդգրկված ապրանքներն ու ծառայությունները գումարային տեսքով արտահայտվում են բյուջեի նախահաշվի համապատասխան հոդվածներում:

7.5 ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները ՀՊՏՀ-ում կառավարվում են ռեկտորի 10.04.2012թ. թիվ 73-Լ «ՀՊՏՀ ՊՈԱԿ-ի գործավարության կարգը հաստատելու մասին» հրամանով, որով սահմանվում է ՀՊՏՀ փաստաթղթաշրջանառության կազմակերպման և վերահսկողության կարգը:

Նախատեսվում է յուրաքանչյուր տարի բյուջեով հատկացնել տեղեկատվության կառավարման համակարգերի ներդրման միջոցներ:

TEMPUS ծրագրի շրջանակում քայլեր են ձեռնարկվում շրջանավարտների բազայի ստեղծման ուղղությամբ, ինչը կապահովի շրջանավարտների վերաբերյալ համակարգված տեղեկատվության ձևավորումն ու աշխատանքի տեղավորման հնարավորությունների ընդլայնմանը: Սկսվել է գրադարանի թվայնացման գործընթացը:

Մինչև 2013 թ.-ի վերջը պետք է ներդրվեր ՀՊՏՀ կառավարման ցանցային համակարգը, որը հնարավորություն կտար իրականացնելու ցանցային կառավարում և հավաքագրված առկա տեղեկատվության հիման վրա կայացնելու հիմավոր որոշումներ: Սակայն փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ կառավարման ցանցային համակարգը դեռ ներդրված չէ:

7.6 ՄՈՒՀ-ը ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

ՀՊՏՀ-ում առկա են առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված ենթակառուցվածքներ՝ պահպանության ծառայությունը, բուժկետը, արհկոմիտեն, որի կազմում գործում է սոցիալական ապահովության և անվտանգության ենթակոմիտեն:

Երևանյան համալիրի ուսանողները գոհ են համալսարանում սննդի սպասարկման, առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայություններից, սակայն ՀՊՏՀ մասնաճյուղերում բացակայում են առողջապահական ծառայությունները: Գյումրու մասնաճյուղում բացակայում է սննդի սպասարկման կետը, իսկ Եղեգնաձորի մասնաճյուղում այն գտնվում է բարելավման փուլում:

ՀՊՏՀ-ի երևանյան համալիրում և Գյումրու մասնաճյուղում շենքային պայմանները հարմարեցված չեն հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, իսկ Եղեգնաձորի մասնաճյուղի առաջին հարկում հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար հնարավոր է իրականացնել ուսուցում:

7.7 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Որպես ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմ համալսարանում կիրառում են հարցումները, որոնք հիմնականում ուղված են կարիքների բացահայտմանը: Այդ մեխանիզմները ՀՊՏՀ-ում դեռևս նոր են ներդրվում: Համալսարանում մշակվել է հարցաթերթիկ, և իրականացվում են հարցումներ ուսանողների շրջանում: Հարցաթերթիկում ներառված են ութ հարց դասասենյակների, համակարգչային լսարանների հասանելիության և հագեցվածության, գործնական աշխատանքների անցկացմանն անհրաժեշտ սարքավորումների, գրադարանային ծառայության, ճաշարանում սննդի որակի, հանրակացարանի պայմանների վերաբերյալ: Դասավանդողների շրջանում նման տիպի հարցումներ դեռևս չեն անցկացվել, մշակման փուլում են տրամադրվող ռեսուրսներից բավարարվածության և դրանց օգտագործման արդյունավետության գնահատման ընթացակարգերը և գործիքները:

Դատողություններ

Համալսարանը ներկայումս ապահովված է բավարար ռեսուրսներով կրթական ծառայությունների մատուցման, իր առաքելության և նպատակների իրականացման համար: Կարիքները բացահայտող հստակ մեխանիզմների ստեղծումը կնպաստի ՄԿԾ-երի իրականացմանը անհրաժեշտ ուսումնական միջավայրի գնահատմանը, առկա խնդիրների վերհանմանը և արդյունավետության հետագա բարձրացմանը:

Համալսարանն իր առաքելությունն և նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է այնքան ֆինանսական ռեսուրսներ, որքան թույլ է տալիս իր բյուջեն: Ցածր վարձավճարների պայմաններում ֆինանսական մուտքերի աճը հիմնականում ապահովվում է ուսանողների և առաջարկվող մասնագիտությունների թվերի աճով: Սակայն ղեկավարության ձգտումները կրճատել ուսանողների թիվը մինչև 5000 պահանջում է հստակ ֆինանսական քաղաքականության մշակում, որն ուղղված կլինի ներդրումային միջավայրի ստեղծմանը և հնարավորություն կտա ապահովել ՄԿԾ-երի իրականացումը: Ֆինանսական միջոցների ճիշտ բաշխման շնորհիվ համալսարանը հստակ պլանավորման միջոցով միայն կարող է նկատելի առաջընթաց գրանցել:

Համալսարանում կրթության որակի շարունակական բարելավման և կայունության ապահովման նպատակով ուսումնական ռեսուրսային բազան ընդլայնելու և զարգացնելու ուղղությամբ աշխատանքներ կատարվում են, սակայն ֆինանսական ռեսուրսների սահմանափակ լինելու պատճառով 2006-11թ. ռազմավարական գերակայություններով նախատեսված խնդիրներն ամբողջությամբ իրականացնել չի հաջողվել:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության ոլորտների ընթացակարգերը և կատարված աշխատանքները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՊՏՀ-ում այդ ոլորտների բնականոն գործունեությունն ապահովող առկա կառույցները (գրասենյակը և SS կենտրոնը) ունեն անհրաժեշտ փաստաթղթեր, որոնց հիման վրա կարող են իրականացնել իրենց գործառույթները: Համալսարանում տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու միասնական քաղաքականության և ընթացակարգերի մշակումը հնարավորություն կտա համակարգելու անհրաժեշտ տեղեկատվության քանակը, դրա ստացման, ուսումնասիրության, վերլուծության և տարածման աշխատանքները: Այդ

համակարգը կարող է ձևավորել անհրաժեշտ տվյալների բազա որոշումների կայացումները հիմնավորելու համար:

Կրթության հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար ապահով միջավայրի ստեղծման միջոցառումների բացակայությունը սահմանափակում է հաշմանդամ և հատուկ այլ կարիքներ ունեցող ուսանողների ինքնադրսևորման ու կրթություն ստանալու հնարավորությունները: Հատուկ կարիք ունեցող ուսանողների համար ապահով և անվտանգ միջավայրի ստեղծումը կարող է նպաստել այդպիսի կարիքներով դիմորդների հոսքին:

Ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմների զարգացումը, հարցումներում շահակիցների լայն շրջանակի ընդգրկումը թույլ է տալիս նրանց արտահայտել իրենց կարծիքը և կարիքները ռեսուրսների տարբեր ասպեկտների վերաբերյալ: Այդ տեղեկատվությունը կարող է օգտագործվել որակի ներքին ապահովման բաժնի, վարչական կառույցների և այլ մարմինների կողմից՝ գնահատելու առկա ռեսուրսների բավարարությունը, հասանելիությունը և կիրառման արդյունավետությունը ՄԿԾ-երի իրականացման տեսանկյունից: Մյուս կողմից տեղեկատվության վերլուծությունները հավաստի հիմք կարող են հաղիսանալ ռեսուրսների կառավարման բարելավման, ֆինանսական ծախսերի և ձեռք բերվող նոր ռեսուրսների պլանավորման համար:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 7 -ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՉԱՓԱՆԻՇ: **ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:**

ՓԱՍՏԵՐ

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

ՀՊՏՀ-ում առկա հաշվետվողականության համակարգը ապահովում է ոչ միայն ներքին հաշվետվողականություն, այլև ՀՊՏՀ հաշվետվողականությունը պետության և հասարակության առջև (արտաքին հաշվետվողականություն): Արտաքին հաշվետվողականությունը ՄՈՒՀ-ում գերազանցապես դիտարկում են որպես օրենքով կամ կարգերով սահմանված հաշվետվությունները համապատասխան մարմիններին ներկայացնելով:

ՀՊՏՀ հաշվետվողականության սահմանված (ՄՈՒՀ-ի կանոնադրության 15.3 կետ-ով) կարգը կյանքի է կոչվում հիմնականում ՀՊՏՀ գործունեության գրեթե բոլոր բնագավառներն ու հիմնախնդիրներն արտացոլող ռեկտորի՝ ՀՊՏՀ խորհրդին ներկայացվող տարեկան հաշվետվության միջոցով: Ֆակուլտետների դեկանների տարեկան հաշվետվությունները ներկայացվում են ֆակուլտետների խորուրդներին:

Առանձին կազմվում և ներկայացվում են նաև համախմբված տարեկան ֆինանսական հաշվետվություններ, որոնցում արտացոլվում են ՀՊՏՀ Գյումրու և Եղեգնաձորի

մասնաճյուղերի բյուջեի կատարման արդյունքները նս: Արտաքին հաշվետվողականությունը դիտարկվում է սոսկ ՀՊՏՀ խորհրդի մակարդակով, քանի որ ԲՈՒՀ-ն արտաքին հաշվետվողականության մեխանիզմ է համարում համալսարանի կառավարման խորհրդի կազմում ներգրավված արտաքին շահակիցների մասնակցությունը: Ռեկտորի տարեկան հաշվետվությունները նաև հասանելի են համալսարանի կայք-էջում:

Արտաքին աուդիտորները համալսարանում պարբերաբար իրականացնում են ստուգում/աուդիտ, որի հաշվետվությունները օգտագործվում են համալսարանի ղեկավարության կողմից գործընթացների բարելավման համար:

Ներքին հաշվետվողականության համակարգը հիմնականում գործում է վարից-վեր և վերից-վար ուղղություններով: Մյուս կողմից, համալսարանում բացակայում են ամբիոնների և ֆակուլտետների տարեկան հաշվետվության կազմման մասին ուղեցույցներ կամ հստակ պահանջներ, հաշվետվողականության վավերականության և հավաստիության ստուգման մեխանիզմներ ու գործիքներ: Կանոնակարգված չեն նաև ստորաբաժանումների կողմից իրենց վերաբերյալ ընդունված որոշումների, տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ վերադաս կառույցներին ներկայացվող հաշվետվությունների ներկայացման գործընթացները, դրանց վերահսկման մեխանիզմները:

Համալսարանում հստակ չեն նաև այն հարցում, թե ինչ միջոցներ ու ընթացակարգեր են պետք աշխատողների և ուսանողների համար բարձր բարոյական չափանիշներ և արդյունավետ կառավարման մթնոլորտ ապահովելու համար: Ավանդական գիտական արժեքները՝ ճշմարտության որոնումը, ճիշտ գիտական քննադատությունը, անկողմնակալությունը և այլ վերլուծություններ հաշվետվություններում նկատելիորեն թերի է:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելությունը հասարակությանը:

ՀՊՏՀ-ում ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության և հասարակությանը հասանելի դարձնելու հիմնական գործիքներ են հրատարակվող տեղեկատվական սեղմագրերը, բուհի կայքէջում զետեղվող նյութերը, «Տնտեսագետ» և «Էկոնոմ+» ամսաթերթերը, «Բանբեր Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի» գիտական հանդեսը, պարբերաբար կազմակերպվող աշխատանքի տոնավաճառները: Այցերը ցույց տվեցին, որ ՄՈՒՀ-ում և նրա մասնաճյուղերում կարևորում են հանրության իրազեկումը՝ որպես բուհի վարկանիշի բարձրացման և դիմորդների ներգրավման միջոց: Այդ նպատակով իրականացվում են նաև պրոֆեսորադասախոսական անձնակազմի այցելություններ դպրոցներ, կազմակերպվում են հեռուստահաղորդումներ:

Սակայն, ՀՊՏՀ հաշվետվողականության և գործունեության թափանցիկության ապահովման հետադարձ կապի մեխանիզմները թույլ են, իսկ գործիքակազմը՝ անկատար: Այսպես, մագիստրոսական թեզերի հրապարակային պաշտպանության հայտարարությունները չեն արտացոլվում ՄՈՒՀ-ի կայքէջում, թեկնածուական թեզերի պաշտպանության մասին, ինչպես նաև ՏԵՄՊՈՒՍ ծրագրի մասին տեղեկությունները միայն հայերենով են: Քանի որ ՀՊՏՀ-ն գործում է որպես հասարակական, պետական պատվեր կատարող համալսարան, այն պետք է որ ունենար կրթության և հետազոտությունների որակին, իր ռեսուրսների օգտագործման արդյունավետությանը հասնելու համար մի համապարփակ ծրագիր՝ հայտարարելով «զրոյական հանդուրժողականության»

քաղաքականությունը կոռուպցիայի, գրագողության, հովանավորչության, խաբեության և այլնի նկատմամբ:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Հասարակության հետ կապերի զարգացման՝ որպես ՀՊՏՀ ռազմավարական ուղղությունն, ամրագրված է «ՀՊՏՀ 2012-2016 թթ. զարգացման ռազմավարություն», ինչպես նաև Որակի խորհրդի կողմից հաստատված «ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմները» փաստաթղթերում: Հասարակության հետ հետադարձ կապը ապահովելու, այդ հարաբերությունները համակարգելու և համալսարանի աշխատանքն ավելի բաց և թափանցիկ դարձնելու նպատակով 2011թ. նոյեմբերին ՀՊՏՀ-ում ստեղծվել է լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը: ՀՊՏՀ կարիերայի և մարքեթինգի կենտրոնը բուհի շրջանավարտների կարիերային, աշխատանքի տեղավորվելու ընթացքին տեղեկանալու համար կառուցակարգերի ներդրման ջանքեր է գործադրում, մասնավորապես շրջանավարտների տվյալների բազայի ձևավորման միջոցով: Այնուամենայնիվ, Համալսարանում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման հստակ քաղաքականություն դեռևս մշակված չէ: ՄՈՒՀ-ում հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմների արդյունքների վերլուծություններ գրեթե չկան: Այցի ընթացքում ակնհայտ էր անորոշությունն այն հարցում, թե ինչպես է համալսարանն անդրադառնում որևէ հարցապնդման, ՀՊՏՀ-ին ներկայացվող բողոքներին և խնդիրներին:

ՀՊՏՀ կայքէջերի զննումը ցույց է տալիս, որ հայտնի և հաճախ այլ կայքերում հանդիպող «հաճախ տրվող հարցեր» բաժինը բացակայում է:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Համալսարանը զարգացնում է տարբեր ձևերով գիտելիքների տարածումը և տարբեր արտաքին շահակիցներին փորձագիտական ծառայությունների մատուցումը: Հիմնադրվել է շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը, որը կազմակերպում է քաղծառայողների համար նախատեսված և այլ դասընթացներ: Կազմակերպվում են սեմինարներ և քննարկումներ արտասահմանյան գործընկերների՝ ՄԱԿՋԾ-ի, ԱՄՋԳ-ի, ԳՄՋ, ինչպես նաև Եվրասիա համագործակցության հիմնադրամի աջակցությամբ: Հանրային կյանքին ու կրթությանը վերաբերող քննարկումներում համատեղ մասնակցություն են ունենում ինչպես ուսանողները, այնպես էլ տարբեր համայնքների բնակիչներ: Պարբերաբար կազմակերպվող աշխատանքի տոնավաճառներում գործում է Բանավեճի ակումբ, որն անդրադառնում է Հայաստանի տնտեսության վերաբերյալ տարբեր հարցերին:

Այդուհանդերձ, ՀՊՏՀ-ում դեռևս չկա հասարակությանը գիտելիքների փոխանցման հայեցակարգ:

Դատողություններ

Համալսարանում առկա է տարեկան հաշվետվության կազմման գործընթացը: ՀՊՏՀ-ում կանոնակարգված են հաշվետվողականության ներքին ձևերը, իսկ արտաքին ձևերը դեռևս կարիք ունեն կանոնակարգման և նպատակային դարձնելու: ՀՊՏՀ կողմից տրամադրվող

հաշվետվողականության թափանցիկությունը և հասանելիությունը շահակիցների լայն խավերին՝ դեռևս կատարելագործման կարիք ունի:

ՀՊՏՀ-ն առաջնորդվում է կանոնադրությամբ և չունի հաշվետվողականության սահմանված կարգ: Հաշվետվությունները կազմվում են ըստ գործունեության ոլորտների, այլ ոչ թե ռազմավարակն ծրագրի ուղղությունների: Բացակայում են գնահատման ցուցիչները և ժամանակացույցը: Չկան վերլուծություններ այն մասին, թե որքանով է ՄՈՒՀ-ի հաշվետվողականությունը նպաստում կառավարման բարելավմանը կամ ռազմավարական նպատակների նվաճմանը:

Համալսարանն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը համալսարանի կայքի, պաշտոնաթերթի և ստորաբաժանումների տրամադրած տեղեկությունների միջոցով: Սակայն, Համալսարանում բացակայում է տեղեկատվության զետեղման քաղաքականությունը և պարզ չէ, թե ինչ նպատակի համար է և ինչ խնդիրներ է լուծում հասարակությանը ՀՊՏՀ կողմից տրամադրվող տեղեկատվությունը:

Ընթացակարգերի թափանցիկությունը ապահովվում է ՀՊՏՀ-ի պաշտոնական կայքի միջոցով, գործընթացները լուսաբանվում են տարբեր մեխանիզմներով: Սակայն, բացակայում են հասարակությանը հաշվետվողականությունն ապահովող մեխանիզմների արդյունավետության վերլուծությունները:

Համալսարանը դեռևս չունի հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի հաստատման որոշարկված քաղաքականություն: Չեն ստեղծվել հասարակության հետ կապերի ձևավորմանը միտված հետադարձ կապի կայուն մեխանիզմներ, որոնք կնպաստեին մասնագիտական կրթության որակի բարելավմանը և կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

Համալսարանում թեև կարևորվում է ժողովրդավարական և քաղաքացիական հասարակության պայմաններում ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով հասարակության դաստիարակումը, բնակչության շրջանում գիտելիքների տարածումը, սոցիալական տարբեր խմբերի հետ հաղորդակցվելու՝ ժամանակակից մշակույթի արմատավորումը կնպաստեր համալսարանի հանրային կարևորության հավելմանը:

Հետադարձ կապի մեխանիզմների մշակումն ու կիրարկումը, հանրության հարցումներին, բողոքների և խնդիրներին կանոնակարգված արձագանքը, կայքէջում «հաճախ տրվող հարցեր» բաժնի ներկայացումը, այդ թվում նաև օտար լեզուներով մեծապես նպաստեր ՀՊՏՀ-ի՝ որպես տարածաշրջանային առաջատար բուհի, ազգային տնտեսության զարգացմանը և սոցիալական արժեքների արմատավորող հաստատության իմիջի ձևավորմանը:

Համալսարանում չի մշակվել ցկյանս կրթության կամ ոչ ֆորմալ կրթության հայեցակարգային կամ ռազմավարական փաստաթուղթ, որի հիման վրա ավելի նպատակային և արդյունավետ կարելի էր կազմակերպել ՀՊՏՀ-ի կողմից իրականացվող միջոցառումները: Մասնավորապես, կարող էր լինել Զբաղվածության ծառայության հետ համագործակցություն՝ գործազուրկների կամ աշխատանք փնտրողների վերապատրաստման դասընթացների կազմակերպման ու իրականացման նպատակով:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 8 -ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

ՓԱՍՏԵՐ

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՏՀ ղեկավարությունը, կարևորելով միջազգայնացման դրական ազդեցությունը կրթական գործընթացների որակի, մասնագիտական վերապատրաստումների վրա, ինչպես նաև դասախոսների և ուսանողների շարժունությունը, համալսարանի միջազգայնացումն ընդունում է որպես առաջնահերթություն որակի ապահովման գործընթացում: Նշվում է, որ իրականացվում են քայլեր միջազգայնացման հնարավոր բոլոր ասպեկտներով, սակայն ձեռքբերումներից իրենք դեռևս գոհ չեն:

Գործընկեր համալսարանների հետ կապերի հաստատումը հիմնվում է համալսարանի միջազգայնացման նպատակների և խնդիրների, ինչպես նաև առկա ռեսուրսների վրա: Համալսարանում յուրաքանչյուր տարի շարունակվել է նախորդ տարիներին սկիզբ առած ակտիվ համագործակցությունը ՀՀ և այլ երկրների բուհերի, ինչպես նաև տարբեր միջազգային կազմակերպությունների հետ: Արտաքին կապերի և միջազգայնացման առումով Համալսարանն ունեցել է որոշակի ձեռքբերումներ: Այն այսօր ներգրավված է միջազգային կրթագիտական, վերապատրաստման և փոխանակման մի շարք ծրագրերում: Որպես լավ օրինակներ են TEMPUS ծրագրեում ներգրավվածությունը, GlobEducation-ի, ինչպես նաև Ռոստովի Պետական Տնտեսագիտական Համալսարանի հետ համագործակցությունը:

Համալսարանը ջանքեր է գործադրում միջազգային ուսանողներին ներգրավման համար, սակայն դեռևս օտարերկրյա ուսանողներ թիվը այնքան էլ մեծ չէ և հիմնական մասը Հնդկաստանից են: Այսօր Համալսարանն ունի համագործակցության շատ պայմանագրեր, սակայն դրանք քիչ արդյունավետ են և ավարտվում են լոկ գիտաժողովներով:

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

ՀՊՏՀ արտաքին կապերը 2006-2011թթ. համակարգել է կրթական բարեփոխումների և միջազգային կապերի վարչությունը: 2012թ. համալսարանի կառուցվածքային փոփոխությունների արդյունքում վարչությունը լուծարվել է, և դրա գործառույթները փոխանցվել են արտաքին կապերի նորաստեղծ բաժնին:

Այն հաստատում ու զարգացնում է արտերկրի և ՀՀ բուհերի հետ իր կապերը, պատրաստում է միջբուհական համագործակցության պայմանագրեր, արտերկրի բուհերի հետ իրականացնում է համատեղ կրթական ծրագրեր, դասախոսների փոխանակում և վերապատրաստում, մասնակցություն միջազգային դրամաշնորհային ծրագրերի մրցույթների, օտարերկրյա քաղաքացիների ընդունելության կազմակերպում և այլն:

Այցի ընթացքում պարզվեց, որ ենթակառուցվածքի առկայությունը դեռ չի երաշխավորում միջազգայնացման արդյունավետ գործընթաց: Միջազգայնացման գործընթացները չեն պլանավորվում, իսկ ենթակառուցվածքի կարիքների վերհանում չի իրականացվում:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Համալսարանն ընդգրկված է տարբեր կառույցներում և ասոցիացիաներում:

Միջազգային համագործակցության ոլորտում արտասահմանյան առանձին համալսարանների և կազմակերպությունների հետ կնքած փոխհամագործակցության համաձայնագրերի, եվրոպական կրթական տարածքում ակադեմիական շարժունակության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքների միջոցով ՀՊՏՀ-ը փորձում է արդյունավետ համագործակցություն ձևավորել միջազգային հաստատությունների և կառույցների հետ ու նպաստել Համալսարանի միաջազգայնացմանը:

ՀՊՏՀ-ն համագործակցության համաձայնագրեր ունի 34-ից ավելի համալսարանների և կազմակերպությունների հետ: Ոլորտի պատասխանատուները նշում են, որ մեծամասնություն են կազմում Ռուսաստանի Ֆեդերացիայի բուհերի հետ կնքված պայմանագրերը, որոնք առայժմ արդյունավետ չեն: Այլ է համագործակցության վիճակը Եվրոպական կառույցների հետ: TEMPUS ծրագրի շրջանակներում ՀՊՏՀ-ն որակի ապահովման բաժնի կողմից 3 տարի ժամկետով իրականացնում է TEMPUS-ի 7 ծրագիր: Եվրամիության «Էրազմուս Մունդուս Արտաքին համագործակցության պատուհան Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի համար» ծրագրի շրջանակներում եվրոպական երկրների առաջատար բուհերի հետ բարձր մրցույթային պայմաններով փոխանակվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողներ, ասպիրանտներ և դասախոսներ: Աշխատողները մրցում են DAAD-ի և Ֆուլբրայթ ծրագրի կրթաթոշակներ համար:

Տեղական միջազգային կազմակերպություններից բուհը համագործակցում է G2iA (Հայկական միջազգային միջմասնագիտական խումբ) և «Ինթեգրիթի էքշընն», USAID-ի հետ: Տեղական կազմակերպություններից ՀՊՏՀ-ն համագործակցում է 17 բուհերի, 14 քոլեջների, 7 ավագ դպրոցների, 25 և ավելի կազմակերպությունների, ՀՀ պետական կառավարման 18 մարմինների հետ:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

ՀՊՏՀ շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնը կազմակերպել է օտար լեզվի դասընթաց համաֆինանսավորման սկզբունքով: Այս դասընթացները չունեն շարունակական բնույթ, իսկ համալսարանի աշխատակազմը այդ դասընթացների իրականացման արդյունավետությունը գնահատում է ցածր: Ռուսերենը որպես օտար լեզու մեծ տարածում ունի ՊԴ կազմի շրջանում: Ներքին շահակիցների մեծ մասը տիրապետում է օտար լեզվին (ռուսերենին), սակայն դրա ազդեցությունը միջազգայինացման արդյունավետության վրա չի չափվում:

Համալսարանի աշխատակիցները գտնում են, որ բուհի իրենց գործունեության և բուհի միջազգայնացման հիմնական խոչընդոտներից են օտար լեզվի իմացության ցածր մակարդակը և ֆինանսական աջակցության բացակայությունը:

Դատողություններ

Համալսարանն ունի արտաքին կապերի և միջազգայնացման ուղղությամբ սայմանված հավակնոտ նպատակներ, որոշակի աշխատանքներ են տարվել Համալսարանի միջազգայնացման և շարժունության խնդիրներն ու նպատակները իրականացնելու ուղղությամբ: Սակայն մշակված չեն այդ նպատակների իրականացմանը նպաստող միջավայր ստեղծելուն ուղղված մոտեցումները, խնդիրները ու դրանց լուծման քայլեր: Վերջիններիս մշակումը կօգնի հստակեցնել Համալսարանի գործողությունները, կակտիվացնի գործնական համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների հետ՝ նպաստելով ուսանողների ու դասախոսների շարժունությանը:

ՀՊՏՀ չի բացահայտել այս ոլորտում իր ռեսուրսային և ենթակառուցվածքային կարիքները, որի ապահովումը թույլ կտա երաշխավորել միջազգայնացման կանոնակարգված գործընթացներ:

ՀՊՏՀ-ի համագործակցությունները արտասահմանյան կազմակերպությունների հետ իրականացվում են հիմնականում TEMPUS և այլ ծրագրերի շրջանակներում, առկա են օրինակներ նաև տեղական կազմակերպությունների հետ: Լավ օրինակ կարելի է համարել Ուելսի Կարդիֆի համալսարանի հետ համատեղ Մեծ Բրիտանիայի բիզնես – դպրոցի հիմնադրումը Հայաստանում, որպես մագիստրոսական ծրագիր:

Հարկ է նշել, որ ուսուցման կատարելագործմանը միտված TEMPUS ծրագրի ներքո համագործակցությունը բավականին արդյունավետ է: Սակայն փաստացի միջազգային համագործակցության աստիճանը սահմանափակ է և բավականին կենտրոնացած գործունեության «թեժ կետերում»: ՀՊՏՀ-ում առկա են խնդիրներ՝ կապված դասախոսների շարքում օտար լեզուների անբավարար գիտելիքների հետ: Մշակված չեն չափանիշներ, որոնց միջոցով կարելի է գնահատել արտաքին գործընկերների հետ համագործակցությունը: ՀՊՏՀ-ն լռում է ազգային և միջազգային համագործակցության զարգացման մեխանիզմների մասին: Համագործակցությունների արդյունավետության գնահատումը համալսարանի թույլ կողմերից է:

Համալսարանը հնարավորություն ունի միջազգայնացման արդյունավետության բարձրացման նպատակով ապահովելու ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ, մինչդեռ այդ հնարավորությունը ամբողջությամբ չի ծառայում վերոնշյալ նպատակին:

Միջազգային տեղեկատվական տվյալների բազաներ մուտք գործելու համար անհրաժեշտ ժամանակակից գրադարանի, տեխնիկապես զարգացած SS ենթակառուցվածքների, լիցենզավորված մասնագիտական ծրագրերի բացակայության պայմաններում ՀՊՏՀ երկար ճանապարհ ունի անցնելու եվրոպական համալսարաններին հասնելու համար:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 9 -ի պահանջներին գնահատվում է **անբավարար:**

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

ՓԱՍՏԵՐ

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՀՊՏՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն, ըստ որի համալսարանը ձգտում է ապահովել կրթության որակը՝ ձևավորելով մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացի:

ՀՊՏՀ որակի ներքին ապահովման համակարգի գործունեության մեթոդական հիմքեր են ծառայում 2008թ. Գիտխորհրդի կողմից հաստատած «Մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը», որտեղ արտացոլված են որակի ներքին ապահովման հիմնական դրույթները, սկզբունքները, քաղաքականությունը և ընթացակարգերը, ինչպես նաև 2013թ. Որակի ապահովման խորհրդի կողմից հաստատված «Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր» փաստաթուղթը և նույն տարում հրատարակված «ՀՊՏՀ որակի ապահովման ձեռնարկը»:

Պլանավորման փուլում են վերոնշյալ փաստաթղթերից բխող լրացուցիչ կարգերի և ուղեցույցերի մշակումը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2008-2011թթ. որակի ապահովման գործընթացների իրականացումը վերապահվել է Գիտության և որակի կառավարման վարչությանը:

2011թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել է «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագիր, որի շրջանակում 2012թ. հունվարից որակի ապահովման աշխատանքները համակարգում է Որակի ապահովման բաժինը, որը համալրված է մարդկային, նյութական և ֆինանսկան անհրաժեշտ ռեսուրսներով:

Համաձայն ՀՊՏՀ ռեկտորի 10.09.2012թ. N 161-Ա հրամանի և ՀՊՏՀ որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման կարգի՝ ՀՊՏՀ որակի ապահովման գործընթացների կանոնակարգման, արդյունավետ իրականացման և փորձնական ինքնավերլուծության նպատակով ձևավորվել են՝ որակի ապահովման խորհուրդ, ինքնավերլուծությունն իրականացնող 8 աշխատանքային խմբեր, որակի ապահովման ֆակուլտետային և ամբիոնային պատասխանատուներ: Սակայն, նշված աշխատանքային խմբերի, ֆակուլտետային և ամբիոնային պատասխանատուների գործառույթները սահմանափակվել են համապատասխան տրիրույթի ինքնավերլուծության իրականացման աշխատանքներով:

Որակի ապահովման բաժնին Համալսարանի թիվ 1 մասնաշենքում հատկացված է աշխատասենյակ, որը «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրում և հետագա բարելավում» դրամաշնորհային ծրագրի շրջանակում համալրվել է անհրաժեշտ գույքով և նյութատեխնիկական ռեսուրսներով: Ներկայումս բաժինն ունի 6 աշխատակից:

Համալսարանի որակի ներքին ապահովման համակարգը գտնվում է կայացման փուլում և դեռևս բացակայում են որակի ապահովման գործընթացների կառավարման համար առկա ռեսուրսներից բավարարվածության վերլուծություններ:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

ՀՊՏՀ-ն տարբեր ձևերով որակի ապահովման գործընթացներում փորձում է ներգրավել ինչպես ներքին (ուսանողներ, դասախոսներ և վարչական կազմ) և այնպես էլ արտաքին շահակիցներին (ՀՀ պետական կառավարման մարմինների և գործարար հատվածի ներկայացուցիչներ, ՀՊՏՀ շրջանավարտներ): Համալսարանն ունի ընթացակարգեր, որոնք հնարավորություն են տալիս հիմնական շահակիցներին մասնակցել որակի ապահովման խորհրդի և որակի ապահովման բաժինի գործընթացին: Ուսանողները, դասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչները մասնակցում են աշխատանքային խմբերում: Սակայն, դեռևս ՀՊՏՀ-ում որակի ապահովման գործընթացներում հստակեցված չեն շահակիցների մասնակցության շրջանակները:

Համալսարանի 20 աշխատակիցներ 2013 թ. մասնակցել են Համաշխարհային բանկի «Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագրի շրջանակներում ՈԱԱԿ-ի փորձագետների կողմից իրականացված «Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» խորագրով վերապատրաստման դասընթացներին:

Բացի այդ 2012-2013 թթ. «Որակի ապահովման ներբուհական համակարգի ներդրման և դրա հետագա բարելավման» ծրագրի շրջանակներում համալսարանում ընթացող որակի ապահովման գործընթացների թափանցիկությունն ու հրապարակայնությունն ապահովելու նպատակով ներքին և արտաքին շահակիցների ներգրավմամբ կազմակերպվել է 5 աշխատաժողովներ:

Այցի ընթացքում տեղի ունեցած հանդիպումների ժամանակ գործատուները նշեցին, որ մասնակցում են ծրագրերի մշակման, պրակտիկաների կազմակերպման, դիպլոմային թեմաների հաստատման և պետական քննական հանձնաժողովների աշխատանքներին: Նրանք համարում են, որ այդպիսով մասնակցում են որակի ապահովման գործընթացներին: Դասախոսական կազմի ներկայացուցիչները որակի ապահովումը ավելի շատ կապում են ուսումնական պլանների հետևողական և բարեխիղճ իրականացման հետ:

ՀՊՏՀ ղեկավարությունը նախատեսում է որակի ապահովման գործընթացներում ընդգրկել ամբիոնային մշտական աշխատանքային խմբեր: Դրանցում ընդգրկված ՊԴ կազմի ներկայացուցիչների տարեկան բեռնվածության մեջ հաշվի կառնվեն այդ աշխատանքների ծավալները՝ նրանց ազատելով լսարանային ժամերի որոշ մասից:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

ՀՊՏՀ-ում իրականացվող կրթական բարեփոխումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով գիտական խորհրդի և որակի ապահովման խորհրդի նիստերում պարբերաբար քննարկվում են որակի ներքին համակարգի բաղադրիչներին վերաբերող հարցեր և ընդունվում որակի մշակույթի արմատավորման վերաբերյալ որոշումներ: 2008 թ. գիտխորհրդի կողմից հաստատվել է «Մասնագիտական կրթության որակի ներքին ապահովման ժամանակավոր կարգը», որը կիրառվում է 2008/2009 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակից: 2011թ.-ից դրամաշնորհային ծրագրի սահմաններում ՀՊՏՀ-ում

հինվել է որակի ներքին ապահովման ստորաբաժանումը և մշակվել են մի շարք անհրաժեշտ փաստաթղթեր:

ՀՊՏՀ կարևորում է բենչմարքինգի (էտալոնային վերլուծության) համեմատական վերլուծության դերը որակի ապահովման վերանայման գործընթացում: Դրա համար հիմք են տեղական և արտասահմանյան առաջատար բուհերի բենչմարքինգի արդյունքները, որն իրականացվում է ինչպես Հայաստանում, այնպես էլ այլ երկրներում՝ ՀՊՏՀ կողմից գործուղված դասախոսների և վարչական աշխատակիցների միջոցով:

Համալսարանը դեռևս ինքը իր կողմից չի իրականացրել որակի ապահովման համակագի ներքին գնահատում: Համալսարանում որակի ապահովման համակարգի վերանայման համակարգված գործընթացի բացակայությունը թերևս բացատրվում է որակի ներքին համակարգի դեռևս կայացման փուլում գտնվելով:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Համալսարանը արտաքին գնահատման փուլ մտնելու համար քայլեր է իրականացրել՝ հավաքագրելով որոշակի տեղեկատվություն և ձևավորելով ինքնավերլուծության զեկույց ՀՊՏՀ որակի ապահովման բաժնի համակարգմամբ: Սակայն ՀՊՏՀ-ում դեռևս մշակված չէ տեղեկատվությանը ներկայացվող պահանջները և այն քանակությունը, որի հիման վրա որակի ներքին ապահովման համակարգը կարող է վերլուծել համալսարանում իրականացվող գործընթացների արդյունավետությունը: Այդ պատճառով էլ բացակայում է արտաքին գնահատման համար անհրաժեշտ և պարբերաբար թարմացվող տվյալների բազան:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

ՀՊՏՀ-ը փորձում է առանձին քայլերի, ինչպես նաև Համալսարանի պաշտոնական կայքի, «Տնտեսագետ» պաշտոնաթերթի և «Էկոնոմ +» ամսաթերթի օգնությամբ ապահովել իր գործունեության թափանցիկությունը՝ ՀՊՏՀ-ի գործունեության մասին ներքին և արտաքին շահակիցներին լիարժեք տեղեկատվություն տրամադրելու միջոցով: Համալսարանի կայքում հրապարակվում է բուհի գործունեության, կառուցվածքային միավորների, առկա մասնագիտությունների, գործող կրթական ծրագրերի, ընդունված որոշումների, նորությունների մասին բազմակողմանի և թափանցիկ տեղեկատվություն, սակայն անհրաժեշտ է համակարգել տեղեկատվության տրամադրման մեխանիզմները, գնահատել այդ մեխանիզմների արդյունավետությունը:

Որակի ապահովման համակարգի թափանցիկությունն ապահովվում է նաև ՀՊՏՀ որակի ապահովման խորհրդին և գիտական խորհրդին ներկայացվող հաշվետվությունների միջոցով:

Դատողություններ

ՀՊՏՀ-ում առկա են որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր: Սակայն հստակեցված չեն համալսարանում կրթության որակը գնահատող մեխանիզմները, որոնց մշակումը հնարավորություն կտա գնահատելու հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավման և որակի մշակույթի ձևավորման ընթացքը:

Համալսարանում տրամադրում է մարդկային և նյութական ռեսուրսներ որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման համար: Միաժամանակ պարզ չէ, թե ինչքանով են այդ ռեսուրսները բավարար: Ընտրված համակարգը հասկանալի է՝ որակի ապահովման խորհուրդ -> որակի ապահովման բաժին -> ֆակուլտետային պատասխանատուներ -> ամբիոնային պատասխանատուներ: Ստացվում է, որ անհատների վրա հիմնված մոտեցումը գերակշռում է գործընթացների վրա հիմնված մոտեցմանը: Նաև անհասկանալի, թե համալսարանի գործառութների այս ոլորտը ինչպես է կապված որոշումներ կայացնող կառույցների հետ:

Համալսարանը որակի ապահովման արդյունավետությունն ապահովելու և կատարելագործելու նպատակով հնարավորինս փորձում է ընդլայնել ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության աստիճանը: Նրանց ներգրավվածությունը կավելացնի վստահությունը համալսարանի գործընթացների, սակայն նրանք նաև պետք է տեղեկացված և հետաքրքրված լինեն: Համալսարանը կարող է օգտագործել այն շահակիցների փորձը, ովքեր զբաղվում են որակի ապահովման գործընթացներով իրենց կազմակերպություններում:

Համալսարանում ձևավորվել է որակի ապահովման խորհուրդ և որակի ապահովման բաժին, որոնց կողմից իրականացվում են մի շարք գործընթացներ, այնուամենայնիվ վաղ է խոսել ՀՊՏՀ-ում որակի ներքին ապահովման համակարգի և որակի մշակույթի կայացած լինելու մասին: Համակարգը կայացման փուլում է, այսինքն՝ սպասվում է, որ պետք է մշակվեն մեխանիզմներ և գործիքներ, որոնց միջոցով կապահովվեն անհրաժեշտ հիմքեր ներքին վերլուծության և որակի ապահովման արտաքին գնահատման համար: Կարելի է հիմք ընդունել ՀՀ կառավարության կողմից հաստատված ինքնավերլուծության ձևաչափը և նրանում առկա տեղեկատվության վերաբերյալ պահանջները:

Համալսարանը դեռևս ինքը իր կողմից չի իրականացրել որակի ապահովման համակագի ներքին գնահատում, որը կօգներ դուրսբերել որակի կիրառվող մեխանիզմների թույլ կողմերը և վերանայել դրանք:

Որակի ապահովման ներքին համակարգը որոշակի գործընթացներ է իրականացնում ՀՊՏՀ-ի գործունեության թափանցիկությունն ապահովելու համար, սակայն այդ գործընթացները հստակ համակարգված չեն: Համալսարանի գործունեության թափանցիկությունը գնահատված չէ:

Եզրակացություն: ՀՊՏՀ ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 10 -ի պահանջներին գնահատվում է **բավարար**:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՉԱՓԱՆԻՇ	*ՈՐՈՇՈՒՄ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարար է
2. Կառավարում և վարչարարություն	Բավարար է
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարար է
4. Ուսանողներ	Բավարար է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարար է
6. Հետազոտություն և զարգացում	Անբավարար է
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարար է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարար է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Անբավարար է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Բավարար է

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրություն

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

Արա Ամիրյան - 1979թթ ավարտել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) գյուղ. մեքենայացման ֆակուլտետի գյուղ. մեքենայացում բաժինը՝ ստանալով ինժեներ-մեխանիկի որակավորում: 1982-1984թթ. եղել է Հայկական Գյուղատնտեսական Ինստիտուտի „Գյուղատնտեսական և մելիորատիվ մեքենաներ, ամբիոնի ասպիրանտ: 1987թ.-ին Դոնի-Ռոստովի Գյուղատնտեսական Մեքենաշինության Ինստիտուտի մասնագիտացված խորհրդում պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 1991թ-ին ստացել է դոցենտի գիտական կոչում: 1998 թ.-ին Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիայի (ՀԳԱ) մասնագիտական խորհրդում պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ ստանալով տեխնիկական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2000 թ.-ին ստացել է ՀԳԱ պրոֆեսորի գիտական կոչում:

Գիտական հետազոտությունները վերաբերում են մեխանիկական փոխանցումներին և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ուսումնասիրությանը: Ստեղծել է նոր տիպի շղթայաալիքային փոխանցում:

Հեղինակ է 1 մոնոգրաֆ աշխատության և 100-ից ավել գիտական և մեթոդական աշխատությունների:

2011 թ.ից համատեղության կարգով աշխատում է նաև որպես ՀՊԱՀ (ներկայումս ՀԱԱՀ) կրթական բարեփոխումների, ռազմավարական պլանավորման, որակի վերահսկման և ինքնավերլուծության վարչության պետ: 2006 թ-ից առ այսօր զբաղեցնում է ՀՊԱՀ "Գրաֆիկայի և մեքենաների նախագծման հիմունքների" ամբիոնի վարիչի պաշտոնը: 2003-2006 թթ. աշխատել է որպես է Հայաստանի պետական ագրարային համալսարանի (ՀՊԱՀ) "Գրաֆիկայի և ՄՆՀ" ամբիոնի պրոֆեսոր: 2000 թ.-ից մինչև 2003 թ.-ի սեպտեմբերի 1-ը աշխատել է որպես է ՀԳԱ "Ավտոտրակտորների և տրանսպորտային փոխադրումների" ամբիոնի պրոֆեսոր: 1994թ. - ից մինչև 1996թ-ի մարտ ամիսը համատեղության կարգով աշխատել է որպես Հայկական Գյուղատնտեսական Ակադեմիայի Պայմանագրերի և ներդրումների բաժնի վարիչ: 1990-1991թ.թ. - ՀԳԻ գյուղ. մեքենայացման ֆակուլտետի դեկանի տեղակալ: 1986-1990թ.թ. - ՀԳԻ ասպիրանտուրայի բաժնի վարիչ: 1984թ.-ին որպես ասիստենտ անցել է աշխատանքի ՀԳԻ „Ավտոմոբիլներ և տրակտորներ„ ամբիոնում: 1979 թ.-ի փետրվար-հոկտեմբեր, Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի (ՀԳԻ) ուսանողական կոնստրուկտորական բյուրոյի լաբորանտ:

Ընտրված է Միջազգային երկու միությունների անդամ՝ Միջազգային Ավտոմոբիլային Ճարտարագետների Ասոցիացիայի (SAE International) և Համաշխարհային Գիտական և Ճարտարագետական Միության (World Scientific and Engineering Society) անդամ:

Մասնակցել է մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների: Գիտական զեկույցներով հանդես է եկել Գերմանիայում, Ֆրանսիայում, Շվեցարիայում, Դանիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Հունաստանում, կանադայում, Իտալիայում և այլն: Ներգրավված է եղել մի շարք միջազգային գրանտային ծրագրերում:

Մասնակցել է ՌԱԱԿ-ի կազմակերպած վերապատրաստումներին, որպես միջազգային փորձագիտական խմբի անդամ՝ ԵՊՀ հավատարմագրման գործընթացին:

Մստիսլավ Սոխա- 1969թ.-ն ավարտել է Լոձի համալսարանի Տնտեսագիտության և սոցիոլոգիայի ֆակուլտետը և ստացել տնտեսագիտության մագիստրոսի աստիճան: 1975թ.-ից տնտեսագիտության թեկնածու է, իսկ 2000թ.-ից՝ տնտեսագիտության դոկտոր:

1969–1971թթ.-ին աշխատել է "Զիգմունդ" պողպատի գործարանում որպես տնտեսագետ: 1975թ.-ից Վարշավայի համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետում եղել է որպես հրահանգիչ, ասիստենտ, դոցենտ: 1981-1984թթ., 1992–1996թթ.-ին զբաղեցրել է Վարշավայի համալսարանի պրոռեկտորի պաշտոնը:

1991-1992թթ.-ին եղել է ԱՄՆ Հյուսիսային համալսարանի Բիզնես դպրոցի դոցենտ: 1998–2011թթ.-ին եղել է Վարշավայի Լեոն Կոզմինսկի ակադեմիայի տնտեսագիտական գիտությունների դոցենտ և պրոֆեսոր, 2000–2004թթ.-ին՝ նաև ամբիոնի վարիչ:

2005–2007թթ.-ին համագործակցել է Լեհաստանի Գիտության և բարձրագույն կրթության, Ֆինանսների, Էկոնոմիկայի, Աշխատանքի և սոցիալական քաղաքականության նախարարությունների հետ որպես հետազոտական ծրագրերի ղեկավար և համակարգող: 2009թ.-ից համագործակցում է Եվրախորհրդարանի հետ:

2005–2011թթ.-ին զբաղեցրել է Լեհաստանի պետական բարձրագույն կրթության հավատարմագրման կոմիտեի գլխավոր քարտուղարի, իսկ 2012–ից նույն կոմիտեի փոխնախագահի պաշտոնը:

Ամերիկյան տնտեսական ընկերակցության անդամ է:

Հեղինակ է մի շարք գիտական հոդվածների. «Բոլոնիայի Գործընթացը՝ գործընթացի որակի ապահովման տեսանկյունից», «Լեհաստանը համաշխարհային ֆինանսական ճգնաժամի ներքո», «Լեհաստանի՝ ԵՄ-ին ինտեգրման ազդեցությունները ֆինանսական փոխանցումների և արևելյան սահմանամերձ շրջաններում տնտեսական զարգացման վրա» և այլն:

Ստացել է մի շարք մրցանակներ. 2001թ.–Լեհաստանի գիտության ակադեմիա Աշխատանքի և սոցիալական քաղաքականության գիտությունների կոմիտեի՝ Լավագույն գրքի մրցանակ, 2001թ. - Լեհաստանի գիտությունների ակադեմիայի գիտական քարտուղարի մրցանակ, 2007 և 2008թ.թ. –Լեհաստանի գիտության և բարձրագույն կրթության նախարարի՝ Բարձրագույն կրթության կազմակերպչական ձեռքբերումների մրցանակ:

Հեղինե Մանասյան - 1970թ.-ին ավարտել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը: 1974թ.-ին ՀՀ Պետպլանի գիտական հետազոտությունների ինստիտուտում ստացել է տնտեսագիտության թեկնածուի դիպլոմ, 1995թ.-ին Մոսկվայի կառավարման պետական ակադեմիայում՝ տնտեսագիտության դոկտորի դիպլոմ: Հանդիսանում է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնների հայաստանյան գրասենյակի (ՀՌԿԿ) տնօրենը: Ունի դասավանդման, հանրային հետազոտությունների ու քաղաքականության վերլուծության մեծ փորձ: Նրա փորձագիտական հիմնական ոլորտներն են՝ տնտեսական աճը և զարգացումը, անցումային տնտեսությունը, աշխատանքի շուկան, աղքատությունը և կրթությունը,

սեփականաշնորհումը, ստվերային տնտեսությունը, կոռուպցիան և այլն: Հարյուրից ավել հրատարակությունների և հոդվածների հեղինակ է:

Մինչև ՀՌԿԿ հայաստանյան մասնաճյուղում իր աշխատանքն սկսելը, նա գործուն մասնակցություն է ունեցել միջազգային կազմակերպությունների (UNDP, WB, TACIS) ֆինանսավորմամբ Հայաստանում իրականացվող այն ծրագրերին, որոնց նպատակը Հայաստանում տնտեսագիտական հետազոտությունների և կրթության բարձր որակի ապահովումն է:

Անգին Մարտիրոսյան - 2006թ. ավարտել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը (ԵՃՇՊՀ) և ստացել ճարտարագետ-շինարարի դիպլոմավորված մասնագետի որակավորում: Ապա Ակադեմիկոս Ի.Վ. Եղիազարովի անվան հիդրոտեխնիկայի և ջրային հիմնահարցերի ինստիտուտում եղել է հայցորդ: 2013-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը. տեխնիկական գիտությունների թեկնածու է:

2005-2007թթ.-ին եղել է ԵՃՇՊՀ-ի գիտահետազոտական սեկտորի գիտաշխատող: 2006-2009թթ.-ին նույն համալսարանի «Տեսական մեխանիկայի» ամբիոնի դասախոս: 2007-2008թթ.-ին աշխատել է որպես ԵՃՇՊՀ-ի Կրթական բարեփոխումների վարչություն մասնագետ: 2008-2011թթ. Կրթության որակի գնահատման և վերահսկման բաժնի մասնագետ է: 2009թ.-ին եղել է Կրթության ազգային ինստիտուտի Նախնական (արհեստագործական) մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների մշակման աշխատանքային խմբի անդամ: 2011-2013թթ. զբաղեցրել է ԵՃՇՊՀ-ի Մասնագիտական կրթության որակի ապահովման վարչության մասնագետի պաշտոնը:

2014թ-ից ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի (ՃՇՀԱՀ) Կրթական բարեփոխումների ապահովման բաժնի պետն է, 2013թ.-ից ՃՇՀԱՀ-ի «Նյութերի դիմադրություն» ամբիոնի ասիստենտ: Գիտատեխնիկական ամսագրերում 8 հոդվածների և 14 մեթոդական ցուցումների հեղինակ է:

2012թ. –ին եղել է ՈԱԱԿ փորձագետ, Համաշխարհային բանկի «Կրթության որակ եվ համապատասխանություն» դրամաշնորհային ծրագրում որակի խորհրդատու:

Սերգեյ Քոչարյան-2014թ.-ին ավարտել է Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնը (ԱՈԻԿ) (Համատեղ ծրագիր Հայաստանի ազգային ագրարային համալսարանի և Տեխաս Էյ Էնդ Էմ համալսարանների միջև): 2010-2012թթ-ին սովորել է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Ագրոբիզնեսի և շուկայաբանության ֆակուլտետում: Հանդիսանում է ԱՈՒԿ-ի սրճարանի հիմնադիր կառավարիչը: Հայաստանի ազգային ուսանողական ասոցիացիայի արտաքին կապերի ղեկավարն է: 2013թ-ին մասնակցել է Բուխարեստում կայացած Եվրոպական ուսանողական միության 64-րդ կառավարման նիստին որպես Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիայի պատվիրակ: Եղել է ՈԱԱԿ ուսանող փորձագետ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի փորձնական ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցերի

Երևանյան կրթահամալիր՝ 05.05.2014 թ.–08.05.2014 թ.
Գյումրու մասնաճյուղ՝ 12.05.2014 թ.-13.05.2014 թ.
Եղեգնաձորի մասնաճյուղ՝ 14.05.2014 թ.

	05.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում ֆակուլտետների դեկանների հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	14:00	15:15	75 րոպե
6	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	16:30	17:30	60 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

	06.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	9:00	10:00	60 րոպե
2	Հանդիպում դասախոսների հետ	10:15	11:30	75 րոպե
3	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ	11:45	13:00	75 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ	14.00	15:15	75 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների հետ	15:30	16:30	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	07.05.2014թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ստորաբաժանումների դեկավարների հետ	9:00	10:15	75 րոպե
2	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ անդամների հետ	10:30	11.30	60 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	11:45	13:15	90 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:30	60 րոպե
5	Հանդիպում որակի ապահովման կենտրոնի հետ	14:30	15:45	75 րոպե
6	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	16:00	16:30	30 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:30	18:00	90 րոպե

	08.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	9:00	10:15	75 րոպե
2	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե

5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	14:00	14:30	30 րոպե
6	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:30	15:15	45 րոպե
7	Հանդիպում համալսարանի ռեկտորի հետ	15:30	16:00	30 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	16:15	18:00	105 րոպե

	12.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Գյումրի և ժամանում մասնաճյուղ	9:00	10:45	105 րոպե
2	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի և տեղակալի հետ	11:00	11:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:45	12:45	60 րոպե
4	Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների հետ	12:45	13:30	45 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
6	Հանդիպում դասախոսների հետ	14:30	15:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	15:30	17:00	90 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:00	60 րոպե

	13.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ուսանողների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում շրջանավարտների հետ	10:45	11:45	60 րոպե
3	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:00	12:30	30 րոպե
4	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
6	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուների հետ	14:30	15:30	60 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:45	16:45	60 րոպե
8	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ	17:00	17:30	30 րոպե
9	Վերադարձ Երևան	17:30	19:30	120 րոպե

	14.05.2014 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Մեկնում Եղեգնաձոր և ժամանում մասնաճյուղ	9:00	11:00	120 րոպե
2	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ	11:00	11:30	30 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	11:45	12:30	45 րոպե
4	Հանդիպում ուսանողների հետ	12:45	13:30	45 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
6	Հանդիպում դասախոսների հետ	14:30	15:30	60 րոպե
7	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում	15:30	16:45	75 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	17:30	30 րոպե
9	Հանդիպում մասնաճյուղի տնօրենի հետ	17:30	18:00	30 րոպե
10	Վերադարձ Երևան	18:00	20:00	120 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անունը	Չափանիշը
1.	ՀՊՏՀ 2006-2011 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը	I, II
2.	ՀՊՏՀ առաքելությունը 2009-2013թթ. ժամանակահատվածի համար	I
3.	Ռազմավարական ծրագրի իրականացման արդյունքների վերլուծություններ	I
4.	Արտաքին և ներքին շահակիցների կարիքների վերհանման պարբերաբար կատարված հարցումները, վերլուծությունների հիմքեր	I
5.	Կրթական չափորոշիչների խմբագրման համար ստեղծված աշխատանքային խմբի հրաման	I
6.	ՀՊՏՀ ֆինանսական քաղաքականությունը	II
7.	«Համալսարանի ուսումնաօժանդակ կազմի որակավորման քննության անցկացման» կարգը	II
9.	Երկարաժամկետ պլանավորման ժամանակացույցեր	II
10.	Կարճաժամկետ, միջնաժամկետ պլանավորումները հավաստող փաստաթղթերի օրինակներ	II
11.	ՀՊՏՀ-ի առանցքային գործոնների ուսումնասիրության և վերլուծության օրինակ	II
12.	«ՀՊՏՀ որակի ներքին ապահովման հայեցակարգ»	II, X
13.	«ՀՊՏՀ որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգեր»	II, X
14.	«ՀՊՏՀ գործունեության հետադարձ կապի մեխանիզմներ»	II
15.	Ծրագրերի կազմման, հաստատման և իրականացման ընթացակարգերը	II, III
16.	Ծրագրերի գնահատման ընթացակարգ	II, III
17.	Իրականացրած հարցումների հարցաթերթեր, վերլուծություններ	II
19.	ՄԿԾ որևէ մասնագիտության գծով (մեկական բակալավրիատի և մագիստրատուրայի, առկա և հեռակա)	III
20.	«Կրթական ծրագրերի և տեխնոլոգիաների հետազոտություն և զարգացում» ուղղությունը	III
21.	<<Մարքեթինգային հետազոտություններ>> ՄԿԾ	III
22.	Պիլոտային մագիստրոսական ծրագրերի նյութեր	III
23.	Որևէ ամբիոնի զեկուցագիր ուսանողների գիտելիքի ստուգման ձևերի ընտրության մասին	III
24.	Տեղեկատվություն Եվրոպական հանձնաժողով ներկայացված բարձրագույն կրթության բարեփոխումների ծրագրային առաջարկների և գործող 7 ծրագրերի մասին	III
25.	Առարկայական և կրթական ծրագրերի արդյունավետության գնահատման իրականացրած հարցումների հարցաթերթերը և հարցման մեթոդաբանությունը, վերլուծությունները	III
26.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի պարբերաբար գնահատման քաղաքականությունը, ընթացակարգերը	III
27.	Մասնագիտությունների կրթական ծրագրերի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը	III
29.	Ուսանողների կրթական կարիքների վերհանմանն ուղղված հարցումների և ուսումնասիրությունների պիլոտային ծրագրով իրականացրած վերլուծություններ	III
30.	Տեմպուս ծրագրի շրջանակներում իրականացվող հարցումների մշակված ձևաչափը և իրականացված հարցումների վերլուծություններ	III

31.	Ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցաշար	IV
32.	«Կրթության կառավարում» մասնագիտացման ուսումնական պլան	III
33.	Լրացուցիչ պարապմունքները նկարագրությունը, նպատակները և ժամանակացույցը ամրագրող փաստաթուղթ	IV
34.	Խորհրդատվական ժամերի արդյունավետության ուսումնասիրություն	IV
35.	«Մարքեթինգի և կարիերայի կենտրոն»-ի կանոնակարգ	IV
37.	«Մարքեթինգի և կարիերայի կենտրոն»-ի գործունեությունից բավարարվածության հարցման հարցաթերթ, վերլուծություն	IV
38.	Ուսանողական խորհրդի կանոնադրությունը	IV
39.	«Էկոնոմ +» թերթի համարներ	IV, X
40.	Գնահատականների բողոքարկման վերաբերյալ վիճակագրական տվյալներ	IV
41.	Ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմնի մասին տեղեկացվածության աստիճանը պարզելու հարցաթերթ, վերլուծություն	IV
42.	ՀՊՏՀ գիտամանկավարժական կազմի ձևավորման կանոնակարգը	V
43.	Ուսումնաօժանդակ կազմի աշխատանքի ընդունման կամ հեռացման ընթացակարգ	V
44.	ՊՖԴ-ի պաշտոնի նկարագիր (տարբեր ամբիոններից)	V
46.	Դասախոսի գնահատման հարցաթերթ, վերլուծություն	V
47.	Դասավանդողների կատարելագործման միջոցառումների պլանները՝ ըստ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների	V
48.	Շարունակական և լրացուցիչ կրթության կենտրոնի գործունեության կանոնակարգ, աշխատանքային պլան	V
49.	Գրադարանի զարգացման ծրագիր, գրադարանի զտման և համալրման քաղաքականություն, գրադարանի աշխատանքի ռեժիմը	VII
50.	Ռեսուրսներից բավարարվածության հարցումների վերլուծությունը	VII
51.	Ամբիոնների ներկայացրած պահանջագրերը ռեսուրսային կարիքների վերաբերյալ	VII
52.	Լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնակարգ	VIII
53.	ՀՊՏՀ արտաքին կապերին և միջազգայնացմանը նպաստող քաղաքականություն, գործող ընթացակարգեր	IX
54.	Արտաքին կապերի բաժնի 2012-2013թթ. տարեկան գործողությունների ծրագիրը կամ նախկին վարչության՝ կրթական բարեփոխումների և միջազգային կապերի վարչության հաշվետվություններ	IX
55.	Որևէ ամբիոնի միջազգային գործունեության ծրագիր	IX
56.	ՀՊՏՀ արտաքին կապերի բաժնի կանոնադրություն	IX
57.	Աշխատակազմի համար նախատեսված օտար լեզվի դասընթացների ցանկը և ժամանակացույցը	IX
58.	Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաները 3 տարվա համար	III
59.	Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների գնահատման չափորոշիչները	III
60.	Պետական որակավորման հանձնաժողովի եզրակացությունները, դրանց քննարկման արձանագրությունները	III
61.	Կուրսային, ավարտական և մագիստրոսական աշխատանքների օրինակներ 3 տարվա համար	III

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

	Երևան	Գյումրի	Եղեգնաձոր
1.	Համակարգչային լսարաններ	Լսարաններ	Լսարաններ
2.	Որակի ապահովման կենտրոն	Համակարգչային լսարաններ	Համակարգչային լսարաններ
3.	«Ամբերդ» հետազոտական կենտրոն	Գրադարան-ընթերցասրահ	Գրադարան-ընթերցասրահ
4.	Կառավարման ֆակուլտետի դեկանատ	Ճաշարան	Ճաշարան
5.	Ֆինանսական ֆակուլտետի դեկանատ		
6.	Մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկանատ		
7.	Կոմերցիայի ամբիոն		
8.	Մակրոէկոնոմիկայի ամբիոն		
9.	Ապրանքագիտության և տեխնոլոգիայի ամբիոն		
10.	ՈՒսանողական խորհուրդ		
11.	Լսարաններ		
12.	Ճաշարան		
13.	Լաբորատոր լսարաններ		
14.	Բուժկետ		
15.	Գրադարան		
16.	Սպորտդահլիճ		

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՊՀ – Անկախ պետությունների համագործակցություն
ԱՄՆՄԶԳ – Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԲՈՒՀ – Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԳՄԶԳ – Գերմանիայի միջազգային զարգացման գործակալություն
ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
ԵՃՇՊՀ – Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան
ԿԳՆ – Կրթության և գիտության նախարարություն
ԾԻԳ – Ծրագրերի իրականացման գրասենյակ
ՀՀ – Հայաստանի Հանրապետություն
ՀԳԱ – Հայկական գյուղատնտեսական ակադեմիա
ՀԳԻ – Հայկական գյուղատնտեսական ինստիտուտ
ՀՊՏՀ – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՀՊԱՀ – Հայաստանի պետական ագրարային համալսարան
ՀՌԿԿ – Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՃՇՀԱՀ – Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան
ՄԱԿԶԾ – Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
ՄԿԾ- Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՆՀ – Մեքենաների նախագծման հիմունքներ
ՄՈՒՀ – Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱԱԿ - «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն»
ՈԱ կենտրոն – Որակի ապահովման կենտրոն
ՈԱԾ – Որակավորումների ազգային շրջանակ
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԴ - Պրոֆեսորադասախոսական
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՊՈԱԿ – Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՌԾ – Ռազմավարական ծրագիր
ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՈՒԳԸ – Ուսանողական գիտական ընկերություն
ՈՒԽ – Ուսանողական խորհուրդ